Զարգացման դուրս

հեղինակ՝ Վահան Բուրնազյան

անհատ

ԶԱՐԳԱՑԱԾ

համայնք

Ամփոփում՝

Ըստ էության ցանկացած հասարակություն փոխազդող անհատների հավաքական է, հետևաբար զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է: Այս ուղեցույցը փորձում է օգնել անհատներին զարգացնել իրենց՝ դրանով իսկ զարգացնելով հասարակությունն առհասարակ: Քննարկման համար ուղեցույցում տեղ գտած հարցերը նախատեսված են փոքր խմբերի համար, ինչն օգնում է անհատներին հասնել իրենց և իրենց շրջապատող աշխարհի մասին նոր գիտակցման:

Հեղինակի մասին՝

Վահան Բուրնազյանը ծնվել և կրթություն է ստացել Քալիֆորնիայում, որտեղ աշխատել է որպես ներգաղթյալների պաշտպանության հարցերով փաստաբան: Նա հայրենադարձվել է Հայաստան 2004 թվականին և դասավանդել իրավաբանություն ու մարդու իրավունքներ Հայաստանի մի շարք համալսարաններում: Վահան Բուրնազյանն այժմ իր գիտահետազոտական գործունեությունը ծավալում է մարդու իրավունքների ոլորտում, հեղինակել է մի շարք տեսական և գործնական աշխատանքներ:

Թարգմանչի և խմբագրի մասին՝

Նաիրա Մելիքսեթյանն ստացել է բանասիրության բակալավրի աստիճան Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանից թարգմանչական գործ մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է իրավաբանության ոլորտում Հայաստանի ամերիկյան համալսարանում և Անգլիայի Նոթինգհեմի համալսարանում՝ ստանալով համապատասխանաբար իրավագետի և մարդու իրավունքների մագիստրոսի կոչումներ:

Կազմի դիզայնի հեղինակ՝
Վարդան Պողոսյան

Երախտիքի խոսք՝

Շնորհակալ եմ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի բոլոր աշխատակիցներին այս նախագծի մշակման ընթացքում իրենց աջակցության, քաջալերման ու համբերատարության համար, ինչպես նաև շնորհակալ եմ բոլոր նախկին և ապագա մասնակիցներին, ովքեր շարունակում են դրական փոփոխություն կատարել աշխարհում անհատական և հասարակական զարգացման միջոցով: Հատուկ շնորհակալություն Նաիրա Մելիքսեթյանին իր բարձր չափանիշների և թարգմանության իր ջանքերի համար:

Այս ուսումնասիրությունը կատարվել է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակությամբ: Աշխատանքում արտահայտված մտքերը հեղինակինն են և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. ինչպես օգտագործել այս ուղեցույցը

Զրույց 01 Անհատը և իրականության էությունը

Զրույց 02 Անհատը և հավաքականն ու ընտրությունը

Զրույց 03 Համագործակցությունը և մրցակցությունը

Զրույց 04 Փոխադարձությունը

Զրույց 05 Արժանիք. գործընթացը և չափանիշները

Զրույց 06 Վստահություն. սոցիալական կապիտալը

Զրույց 07 Կրկնություն

«ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ»-ի մասնակիցներն իրենց փորձի մասին՝

«Մեր քննարկումներն ինձ հնարավորություն տվեցին ապահով միջավայրում գործընկերներիս հետ միասին ուսումնասիրել, թե ինչպես են տարաբնույթ պատմույթներ փոխհարաբերվում միմյանց հետ և թե ինչպես են կապված սոցիալական արդարության հետ և՛ ներանձնային, և՛ ընտանեկան, և՛ ազգային, ինչպես նաև միջազգային մակարդակներում: Գործընկերներիս հետ քննարկեցինք նաև, թե ինչպես են իշխանությունը և աստիճանակարգումն ազդում մեր կյանքի և մեր կողմից իրականացված գործունեության վրա, ինչպես կարող ենք «կարդալ» մի քանի միաժամանակյա պատմույթներ և դրանք դիտարկել մեր անձնական կյանքում և հասարակությունում, և որ կարևոր է, թե ինչպես են միմյանց հատվում ադվոկացիայի և ակտիվիզմի պատմույթները տեղական, ազգային և համաշխարհային մակարդակներում»:

«Ընդհանուր առմամբ այս քննարկումներն ինձ հնարավորություն տվեցին նախևառաջ ապակառուցել պատմույթները, քննարկել դրանք, ապա նորից կառուցել: Յուրաքանչյուր քննարկում իր բնույթով յուրօրինակ էր և տալիս էր հնարավորություն նորովի ընկալել աշխարհը, ինչպես նաև բարձրաձայնել ավելի շատ հարցեր՝ դրանց շուրջ պարզապես խորհելու համար: Այս քննարկումների արդյունքում ես հասկացա, որ ցանկանում եմ ավելի շատ տեղեկատվություն ունենալ և կարդալ այս թեմաների մասին, դրա համար Կոլումբիա համալսարանում վերցրի «Պատմույթ, առողջություն և սոցիալական արդարություն» դասընթացը, որն էլ իր հերթին փորձում է տեսնել կապեր պատմույթների, առողջության և սոցիալական արդարության միջև»:

«Մեր հանդիպում-քննարկումները շատ հետաքրքիր էին, անշուշտ, բայց ինձ համար ամենագնահատելին մթնոլորտն էր՝ հանդուրժողականություն բոլորի կարծիքների հանդեպ, միշտ նոր բան սովորելու և մյուսների գաղափարները, մտքերը, մոտեցումներն ընդունելու պատրաստակամություն, մի տեսակ բազմամշակութային մթնոլորտ»:

«Այս քննարկումներն ամենաիրական, հակասական, մտածել ստիպող և ոգեշնչող զրույցներն էին, որոնց հնարավորություն եմ ունեցել մասնակցելու: Քննարկման այս ձևաչափը բովանդակալից երկխոսություն հաստատելու փայլուն մեթոդ է, որը կարող է կիրառվել փոխըմբռման և դրա վրա հիմնված փոփոխությունների հասնելու համար»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ էության ցանկացած հասարակություն միմյանց հետ հաղորդակցվող անհատների հավաքական է: Հետևաբար զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է: Այդ պատճառով այս ուղեցույցը փորձում է օգնել անհատներին զարգացնել իրենց՝ որպես հասարակության զարգացումը խթանելու ճանապարհ:

Մեզնից ոչ ոք կատարյալ չէ, և բոլորս կարող ենք ինքներս մեզ կատարելագործել տարբեր ճանապարհներով: Կատարելագործվելու ճանապարհներից մեկն ինքներս մեզ և մյուսներին ավելի լավ հասկանալ սովորելն է: Թե՛ մեզ, թե՛ մյուսներին ավելի լավ հասկանալու դեպքում կարող ենք ավելի լավ ընտրություններ կատարել և՛ ինքներս մեզ համար, և՛ մյուսների հետ փոխահարաբերվելու տեսանկյունից: Բոլորիս կատարած ավելի լավ ընտրություններն իրենց հերթին բարձրացնում են բոլորիս հավաքական փոխազդեցությունների որակը, ասել է թե՝ հասարակության որակը:

Մեզ և մյուսներին ճանաչելու ճանապարհներից մեկն ինքներս մեզ և մյուսներին լսելն է: Բոլորս սովոր ենք, որ մեր կյանքն ապրենք այնպես, ինչպես հասարակությունն է ակնկալում: Բայց մեզնից յուրաքանչյուրն ունի ներքին բնություն, որը կարող ենք ուսումնասիրել և ավելի լավ հասկանալ: Ինքներս մեզ հասկանալու համար կարող ենք սկսել մեր մտքերը բարձրաձայնելուց, որովհետև երբ բարձրաձայնում ենք ինչ-որ բան, այն դառնում է իրական, շոշափելի: Բարձրաձայնելով մեր մտքերը և մեր մտքերով կիսվելով՝ կարող ենք սկսել ինքներս մեզ լսել: Եվ դա միայն սկիզբն է: Ինքներս մեզ ավելի լավ ճանաչելը գործընթաց է, և մասամբ մենք սկսում ենք ինքներս մեզ ճանաչել, երբ ավելի լավ ենք հասկանում, թե ինչքանով ենք մենք և մյուսները նույնը և միևնույն ժամանակ տարբեր. մարդկային ամեն առումով և մեր կյանքի ցանկացած ժամանակահատվածում բոլորս նման ու տարբեր ենք նրանցից, ում հետ կիսում ենք մեր կյանքը: Այսպիսով, ինքներս մեզ ճանաչելու համար անհրաժեշտ է, որպեսզի ճանաչենք մյուսներին, և դրան կարելի է հասնել միմյանց իրապես լսելու դեպքում: Մինչև իրապես չլսենք դիմացինին, չենք կարող հասկանալ ո՛չ դիմացին, ո՛չ ինքներս մեզ:

Սովորաբար շատերը խոսում են, մինչդեռ քչերն են իրապես լսում: Իրականում շատ խոսելը հաճախ ուրիշների մասին ընդհանրացումները վերահաստատելու փորձ է, որպեսզի նրանց՝ որպես եզակի անհատների լսելու կամ հասկանալու համար ջանք գործադրելու կարիք չլինի: Բացի այդ, չլսելով հանդերձ խոսելը բնորոշ է բանավեճերին: Բանավեճն այն է, երբ յուրաքանչյուր անհատ ցանկանում է համոզել մյուսին առանց համոզվելու մյուսի կողմից, այսպիսով՝ ոչ ոք չի լսում: Բանավեճի ժամանակ ավելի մեծ ուժ և ազդեցություն ունեցող անհատի կողմից հնչեցված գաղափարը հաղթում է, որովհետև շատ է կրկնվում և այնուհետև ընդունվում նրանց կողմից, ովքեր նախընտրում են լինել այն մարդու կողքին, ով ամենայն հավանականությամբ «կհաղթի»: Փոխարենը գաղափարներով մյուսների հետ կիսվելը, ինչը ներառում է խոսել և մյուսներին լսել՝ համեմատելով հեռանկարներ և փորձելով հասկանալ միմյանց, զրույցն է: Զրույցը հաղթելու մասին չէ և ուժի մասին չէ. զրույցը միմյանց հասկանալու մասին է: Զրույցը փնտրում է համատեղ, ընդհանուր ճշմարտություն նույնը և տարբեր լինելու մասին:

Բանավեճն ու զրույցը չափազանց տարբեր են: Բանավեճը, որը հաճախ իրականացվում է մյուսներին լռեցնելու միջոցով՝ նրանցից ավելի բարձր խոսելով, նրանց չլսելով, որպեսզի դառնալ «հաղթող», գաղափարը ճշմարիտ չի դարձնում: Իրականում այն խեղաթյուրում է

գաղափարը: Այդպիսի գաղափարը կեղծ է, քանի որ ընդունվում է ուժի հիման վրա: Այսինքն գաղափարը չի կարող ճշմարիտ լինել, քանի որ այն իրապես չի հասկացվել և կիսվել մյուսների կողմից: Գաղափարները կամ հեռանկարները կամ հասկացողություններն արժեքավոր են և արտացոլում են ավելի մեծ ճշմարտություն, երբ կա ավելի խորը համատեղ, ընդհանուր ըմբռնում, ինչը հիմնված է միմյանց լսելու, այսինքն՝ փոխադարձության վրա: Միայն այդ դեպքում է գաղափարը հիմնվում նրա վրա, թե ինչքանով ենք բոլորս նույնը և միաժամանակ յուրաքանչյուրս՝ տարբեր: Սա զրույցն է:

Այս ուղեցույցը կոչվում է «Զարգացման զրույց», քանի որ այն ենթադրում է զրույց, ոչ թե բանավեճ: Բանավեճը չի կարող բերել զարգացման, քանի որ անհատներին լռեցնելը նրանց ներգրավելու փոխարեն թույլ չի տալիս, որ նրանք անհատապես զարգանան: Անհատներին ներգրավելը՝ բացահայտելու համար, թե ինչքանով ենք նույնը և տարբեր, առաջ է բերում համատեղ ճշմարտություններ և զարգացած անհատներ:

Ինչպես ամեն արժեքավոր բանի դեպքում՝ հեշտ չի լինի: Միգուցե դժվար է լինի դրան հասնել: Բայց ինքներս մեզ ավելի լավ ճանաչելը և մյուսներին ավելի լավ հասկանալն ինքնին արժեքավոր են: «Զարգացման զրույց»-ը մասնակիցներից ակնկալում է երկու բան՝ քաջություն և կարեկցանք: Ինքներս մեզ լսելու համար քաջություն է պետք, քանի որ քաջություն է պետք մեր մտքերը բարձրաձայնելու, կողքից լսելու, իրական դարձնելու և ապա դրանք մյուսների օգնությամբ վերլուծելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է կարեկցանք մյուսին, ինչպես նաև ինքներս մեզ իրապես լսելու համար: Անհրաժեշտ է կարեկցանք ուրիշի՝ իր ներաշխարհի մասին ասածը և կիսածը կամ մեր մասին մեր իմացածը առանց քննադատության հարգելու համար և ընդունելու, թե ինչպես ենք մենք ու մյուսները նույնը և միաժամանակ տարբեր: Բայց ինչպես պարզել են նախորդ մասնակիցները, սա մի գործընթաց է, որն արժի սկսել:

Ինչպե՞ս սկսել: Անհատական զարգացումն ու զրույցը խթանելու համար այս ուղեցույցն առաջարկում է ստեղծել մոտ 5 հոգու համար նախատեսված ապահով միջավայր, որպեսզի նրանք ունենան ազնիվ, անկեղծ և մտերմիկ քննարկումներ, ինչպես նաև զրույցի թեմաների շարք, որոնք անհատի ինքնաարտահայտմանը և ինքնակատարելագործմանն օգնելու համար են՝ մասնավորապես յուրաքանչյուր անհատի՝ գիտակցված և կամավոր ընտրություն կատարելու կարողության խթանման առնչությամբ: Զրույցի նյութերը նպատակ ունեն անդրադառնալու տեղական հայկական համատեքստում կարևոր հարցերին, և մասնակիցները կարող են այլ նյութեր ավելացնել, ինչպես նաև կիսվել իրենց քննարկումներով ու փորձով այլ անհատների ու խմբերի հետ՝ հուսով, որ այս կերպ Հայաստանում կստեղծվի անհատական և հասարակական զարգացման շուրջ շարունակական, փոքրամասշտաբ, բայց մշտապես ընդլայնվող միջանձնային զրույց:

Ինչու՞ փոքր խմբերով: Այստեղ առաջարկվող անհատական զարգացման գործընթացն արժևորում է յուրաքանչյուր անհատի մասնակցությունը: Չնայած անհատները կարող են սովորել մյուսների պատմությունները կամ օրինակները լսելով՝ անհատական փորձը, որը գալիս է սեփական գործողությունից ու մտածողությունից, ունի մեծագույն կրթական արժեք: Բացի այդ, քանի որ անհատներն իրենց ճանաչում են մյուսների հետ համեմատության մեջ տեսնելով և փոխհարաբերվելու միջոցով, խմբում մյուսների հետ ակտիվորեն մասնակցություն ունենալը հատկանշական է ինքնազարգացման գործընթացի համար: Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ սովորաբար մի զրույց, որտեղ ներգրավված են 7 կամ ավելի անհատներ, արագ բաժանվում է ավելի փոքր

խմբերի միջև զրույցների կամ դադարում է զրույց լինելուց, քանի որ մի քանի անհատ սկսում են գերիշխող դիրք զբաղեցնել զրույցի ընթացքում՝ այդպիսով բացառելով մյուսների մասնակցությունը: Այս բոլոր պատճառներից ելնելով՝ խորհուրդ է տրվում ունենալ մոտ հինգ հոգուց բաղկացած փոքր խմբեր:

Ինչպե՞ս կազմել խումբ: Շատ հաճախ նա, ով արդեն մասնակցել է զարգացման զրույցի, նախընտրում է կիսվել իր փորձով ուրիշների հետ՝ ստեղծելով նոր խումբ: Բայց փորձը պարտադիր պայման չէ, քանի որ քննարկման նյութերն ինքն իրենցով բացատրական են: Այսպիսով, այս գործընթացով հետաքրքրված ցանկացած անձ կարող է խումբ ստեղծել: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, թե ձեր ծանոթներից ով է, որ կարող է ձեր կողմից հրավիրված մյուս անձանց հետ լավ աշխատել, քանի որ զրույցները յուրաքանչյուր անհատից ակնկալում են կիսվել անձնական մտքերով ու գաղափարներով: Որոշ մասնակիցներ իրենց ավելի ապահով կզգան նրանց հետ, ում արդեն ճանաչում ու վստահում են: Այնուամենայնիվ, եղել են մասնակիցներ, ովքեր նշել են, որ իրենք կմասնակցեն միայն այն դեպքում, երբ խմբում իրենց ոչ ոք չգիտի՝ դրանով ստեղծելով անանունություն: Որոշ խմբեր խառն են եղել, որտեղ մի քանի մարդ ճանաչում են միմյանց, և մի քանիսը՝ ոչ, բայց բոլորն էլ վստահում են իրար, քանի որ ունեն ընդհանուր ընկերներ կամ ընդհանուր տվյալներ, ինչպես օրինակ՝ նույն հաստատությունում սովորելու կամ աշխատելու հանգամանքը: Խումբ ստեղծել նշանակում է փնտրել ընդհանուր կենսագրական տվյալ, գիծ կամ հետաքրքրություն, որը կօգնի անհատներին կապվել միմյանց և վստահել իրար: Ընդհանուր գործոնը կարող է լինել ցանկացած բան:

Ինչպե՞ս նպաստել խմբի աշխատանքին: Լավագույնը մասնակիցների հետ խորհրդակցելը և որևէ կոնկրետ օր, տեղ և ժամ ընտրելն է, որպեսզի խումբը հանդիպի ամեն շաբաթ: Շաբաթական հանդիպումը միևնույն օրը միևնույն վայրում և միևնույն ժամին նպաստում է շարունակականությանը: Որոշ խմբեր, այնուամենայնիվ, կարող է ցանկություն ունենան հանդիպել շաբաթական երկու անգամ: Օրվա, վայրի ու ժամի ընտրությունը կախված է նրանից, թե որն է լավագույնը մասնակիցների համար, սակայն ինչ-որ մեկի տունը կամ այգին հաճախ լավ տարբերակ է, քանի որ այն իրենից ներկայացնում է փոքր, մասնավոր միջավայր: Կարևոր է, որ այնտեղ չլինի նրանց ընդհատելու հնարավորություն, որպեսզի պահպանվի գաղտնիությունը, և մասնակիցներն իրենց ավելի հարմարավետ զգան: Որոշ խմբեր դարձրել են իրենց հանդիպումներն ավելի հաճելի՝ սուրճի, թեյի, հրուշակեղենի կամ նույնիսկ գինու սեղանի շուրջ: Կախված զրույցից՝ հանդիպումները կարող են տևել մոտ 2 ժամ: Զրույցի նյութերը բաժանվում են վեց թեմաների, յուրաքանչյուր թեմա՝ մասերի: Եթե խմբի ժամանակն սպառվում է, նրանք կարող են ավարտել զրույցը և վերսկսել այն այնտեղից, որտեղ կանգ էին առել:

Ի՞նչ ակնկալել: Յուրաքանչյուր վարժություն սկսվում է համակարգողի համար նախատեսված ցուցումներից կամ ընթերցանությունից, որ ցանկացած մասնակից կարող է անել խմբի համար: Յուրաքանչյուր վարժությունից հետո կան մի շարք հարցեր: Համակարգողը պետք է կարդա հարցը, իսկ մասնակիցները՝ պատասխանեն իրենց սեփական ընկալումների հիման վրա: Աղյուսակները կարդալու լավագույն տարբերակը ձախից աջ կարդալու տարբերակն է: Ցանկալի է կարդալ ձախ կողմում գրված հարցը, քննարկել այն, այնուհետև կարդալ համապատասխանաբար աջ կողմում գրվածը՝ ստուգելու համար, թե արդյոք զրույցը համընկել է հեղինակի՝ հարցի ընկալման հետ: Յուրաքանչյուրը պետք է ունենա հարցին պատասխանելու հնարավորություն, նախքան կինչի հաջորդ հարցը: Հաճախ մի մասնակցի պատասխանն օգնում մյուսին հարցին այլ

կերպ մոտենալ և տալ այլ պատասխան: Կարևոր է մասնակիցներին հիշեցնել, որ չկա միայն մեկ պատասխան, և չկա միայն մեկ ճիշտ պատասխան: Ի դեպ, կարող են լինել տարբեր պատասխաններ տարբեր աստիճանի հիմնավորվածության՝ կախված մասնակիցների ունեցած փորձից: Հատկանշական է, որ մասնակցի պատասխանները կարող են փոփոխվել, մինչ խումբն անցնում է այլ հարցերի վրայով, քանի որ վերջին հարցերն օգնում են սկզբի հարցերին այլ կերպ նայել: Հարց ու պատասխանի ընթացքում լավագույնն այն է, որ համակարգողը կոչ անի բոլորին մասնակցել և կիսվել սեփական գաղափարներով, քանի որ դա կարող է խթանել զրույցի խորությունը: Հիշել, որ մենք ընդհանուր առմամբ ուսումնասիրում ենք, թե ինչքանով ենք հարցը նույն կամ տարբեր կերպ ընկալում, և դա պետք է որ մեզ օգնի հասկանալ, թե ինչքանով ենք մենք ընդհանուր առմամբ նույնը և միաժամանակ տարբեր:

Ցանկալի է, որ ամեն զրույցի վերջում ընտրվի խմբի մեկ այլ անդամ հաջորդ զրույցը համակարգելու համար:

Ի վերջո, թեև հնարավոր է այս գործընթացը մեզնից պահանջում է քաջություն և կարեկցանք, այն կարող է նաև հետաքրքիր լինել: Մեզ չպետք է վախեցնի մեր և մյուսների մասին ավելին իմանալը: Ինքներս մեզ և մյուսներին չճանաչելն է, որ պետք է մեզ վախեցնի: Նախորդ մասնակիցները հաճույքով են հաղթահարել մարտահրավերը: Սկսեք գործընթացը դրական սպասումներով: Վերջիվերջո ո՛չ դուք, ո՛չ էլ մեզնից որևէ մեկը, մենակ չէ:

Վահան Բուրնազյան՝ պրոֆեսոր, փաստաբան, հետազոտող

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ 01
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՆՀԱՏ՝ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ

Թեմա՝
Անհատը և իրականության էությունը

Նպատակ՝
Դիտարկել մեր անհատականությունը, և թե ինչպես ենք կերտում մեր ինքնությունը

Առաջարկվող նախաբան՝

Համակարգողը կարող է շնորհակալություն հայտնել մասնակիցներից ծրագրին ցուցաբերած իրենց հետաքրքրության համար, նշել, որ այս զրույցի նյութերը մշակման փուլում են, և որ մասնակիցները, իրապես ներգրավվելով այս գործընթացում և մեկնաբանություններով կիսվելով, կօգնեն կատարելագործել դրանք: Համակարգողը կարող է նաև խնդրել մասնակիցներին բաց լինել նոր հեռանկարների, նոր մոտեցումների առջև՝ հուսով, որ նրանք հաճելիորեն կզարմանան այս գործընթացում ներգրավվելու արժեքից: Ամեն զրույցից հետո համակարգողները կամ մասնակիցները կարող են ուղարկել իրենց մեկնաբանությունները «Զարգացման զրույց»-ի հեղինակին bournazian@gmail.com էլեկտրոնային հասցեով:

Մտավոր ճանաչողական վարժություն՝

Ցուցումներ համակարգողի համար. ստորև բերված աղյուսակի ձախ կողմում զրույցի սցենարն է, իսկ աջ կողմում լրացուցիչ ցուցումները կամ զրույցի նպատակներն են: Զրույցը ծավալելու համար պետք է սկսել հարցերից, բայց նաև պետք է արձագանքել մասնակիցներին և թույլ տալ, որ զրույցն ընթանա նրանց պատասխանների հիման վրա (օրինակ՝ մի մասնակցի պատասխանը կարող է ոգեշնչել մեկ այլ մասնակցի՝ ասելու մի նոր բան կամ տալու պատասխան, որը վերջինս նախկինում հաշվի չէր առել): Սա նշանակում է, որ հարցերի հերթականությունը կարող է փոփոխվել, և վերջում կարող է անհրաժեշտություն լինել լրացուցիչ հարցեր տալու զրույցի նպատակներին հասնելու համար:

Համակարգողի սցենար	Ցուցումներ/նպատակներ
1. «Այս վարժության համար անհրաժեշտ է, որ օգտագործենք մեր երևակայությունը: Եկեք փակենք աչքերը և պարզենք միտքը: (Բոլորը թող փակեն իրենց աչքերը): Խորը շնչել և արտաշնչել: Հիմա ձեզ մի բառ կասեմ և կխնդրեմ ձեզ պատկերացնել այդ բառը: Այդ բառը … «օվկիանոսն» է: (Մի րոպե մտածել առաջիկա յուրաքանչյուր արտահայտությունից հետո) • Մի րոպե վերցրեք՝ տեսնելու օվկիանոսը • … լսելու օվկիանոսը • … հոտ քաշելու օվկիանոսից • … զգալու օվկիանոսը • Ստեղծե՛ք օվկիանոսի ձեր պատկերը: • Այժմ եղե՛ք օվկիանոս»:	Համակարգողներն այս գործընթացը պետք է իրականացնեն դանդաղ, որպեսզի թույլ տան՝ մասնակիցները բավարար ժամանակ ունենան «օվկիանոս»-ի իրենց մտավոր պատկերն ստեղծելու և, տեսականորեն, ձախ սյունակի վերջին արտահայտությանը համապատասխան՝ երկրորդ պատկեր ստեղծելու համար: Այս վարժությունում մասնակիցները բացահայտում են 1) թե ինչպես է յուրաքանչյուրն օբյեկտիվ առարկան ընկալում բացառիկ սուբյեկտիվ կերպով՝ բարձրացնելով անհատական իրականությունների և համատեղ իրականության(ների) գոյության հարցը և 2) «իդեալ» ստեղծելու մարդկային կարողությունը, որն ավելի լավ կյանք ունի, քան իրենք են ունեցել:
2. «Այժմ բացեք աչքերը: Ո՞վ է ցանկանում նկարագրել իր «օվկիանոս»-ը»:	Խնդրել տարբեր մասնակիցների նկարագրել իրենց օվկիանոսը՝ հարցեր տալով նրանց, որպեսզի ընդգծվեն գույնին, խորությանը, տարածությանը, շրջակայքին, կենդանիներին, գործողություններին և հատկապես տեսակետներին վերաբերող տարբերությունները:
3. «Մեզնից նրանց համար, ովքեր առնչվել են օվկիանոսի հետ, ի՞նչ է դա: Այն համեմատելի՞ է ծովի կամ լճի հետ: Ո՞ր օվկիանոսի հետ եք դուք առնչվել: Ո՞ր առումներով այո և ո՞ր առումներով ոչ»:	Մարդիկ իրականությունը հասկանում են բացառապես փորձի միջոցով: Փորձը կարող է նաև սահմանել այն պարամետրերը, թե ինչպես ենք մենք ընկալում օվկիանոսները, հարաբերությունները կամ ցանկացած այլ բան:
4. «Մեզնից նրանք, ովքեր երբևէ չեն առնչվել օվկիանոսի հետ, ինչպե՞ս են ստեղծել այդ պատկերը: Ինչի՞ն ենք մենք վերագրել մեր պատկերը»:	Փորձի պակասի դեպքում կամ բացի փորձից մարդիկ հասկանում են իրականությունը՝ հիմնվելով մոդելների, ընդհանրացումների և սահմանումների վրա, ինչպես նաև համեմատություններ անելով:
5. «Ինչու՞ էր բոլորի օվկիանոսը տարբեր: Ինչու՞ է սա վերաբերում նաև նրանց, ովքեր առնչվել են օվկիանոսի հետ»:	Վերջիվերջո, մեզնից յուրաքանչյուրն զգում է իրականությունը սուբյեկտիվորեն՝ անհատականության սահմանների շրջանակներում:

Համակարգողի սցենար	Ցուցումներ/նպատակներ
6. «Երբ ասվեց՝ եղեք օվկիանոս, ձեր տեսակետը փոփոխվե՞ց: Արդյո՞ք որևէ մեկը պատկերացրել է օվկիանոսը ոչ այնպիսին, ինչպիսին այն կա, այլ այնպիսին, ինչպիսին ինքն ուզում է, որ այն լինի: Կա՞ տարբերություն փորձից եկող հիշողության և իդեալի միջև»:	Հնարավոր է՝ մարդիկ այլ շնչավորներից ամենաշատը տարբերվում են այլընտրաքային իրականություն կամ իդեալ պատկերացնելու կարողության աստիճանով: Իդեալը կարելի է կիսել այլ անհատների հետ և օգտագործել համագործակցության այնպիսի մակարդակի ապահովումը ոգեշնչելու համար, որը վեր է ուղղակի անձնական շահից:
7. «Մեզնից նրանք, ովքեր չեն առնչվել օվկիանոսի հետ, արդյո՞ք պետք է ընդունեն օվկիանոսի հետ առնչվելու այլոց փորձը: Ինչքանո՞վ է այդ փորձը հնարավոր փոխանցել մյուսին»:	Նույնիսկ եթե իսկապես վստահ ենք, որ մյուսները տեսել են այն, արդյո՞ք դա վերագրում է նրանց հեղինակություն և ինչքանով՝ հաշվի առնելով, որ փորձը փոխանցելու հնարավորությունը սահմանափակ է:
8. «Որո՞նք են մեր չտեսած առարկաների մասին պատկերացում կազմելու այլ տարբերակները: Ինչպե՞ս են սահմանումները ստեղծվում և ու՞մ կողմից»:	Սահմանում. հունական «okeanos» բառից, որ նշանակում է մեծ հոսանք, որ շրջապատում է երկիրը. օվկիանոսն այսօր նշանակում է հսկայական ծով կամ ջրի հիմնական տարածքներ, որոնք բաժանված են աշխարհագրորեն:
9. «Ի՞նչ եզրակացություններ կարող ենք անել իրականության շուրջ և այն մասին, թե ինչպես ենք մենք այն ընկալում»:	Դիտարկել վերոնշյալ նպատակները:
10. «Արդյո՞ք ամենքի օվկիանոսը նույնն է և միաժամանակ՝ տարբեր: Ինչու՞»:	

Սուբյեկտիվությունը, զրույցը և բանավեճը

Զարգացման զրույցի առաջին նախադրյալն այն է, որ զրույցի և բանավեճի միջև կա տարբերություն.

Զրույցը բանավեճ չէ: Բանավեճերը փաստարկը հաղթելու մասին են: Դրանք որևէ ռազմավարություն, պրակտիկա կամ շրջանակ առաջ տանելու կամ պաշտպանելու մասին են: Բանավեճերն ուժի կիրառման փորձ են: Փոխարենը, զրույցը խնդիրը լուծելու մասին է: Զրույցը մեր մասին՝ որպես անհատների և հասարակության անդամների հարցեր տալու

մասին է, մեր արժեհամակարգը և դրանից բխող մեր վարքագիծն ուսումնասիրելու, խնդիրներն ախտորոշելու և մեր անհատական ու մշակութային համատեքստում եզակի լուծումներ ստեղծելու մասին է:

1. Հաշվի առնելով, որ իրականությունը սուբյեկտիվ է՝ ո՞րն է ավելի նպաստում համատեղ իրականության ստեղծմանը. զրու՞յցը, թե՞ բանավեճը:

2. Հաշվի առնելով, որ իրականությունը սուբյեկտիվ է՝ ո՞րն է ավելի նպաստում համատեղ արդար իրականության ստեղծմանը. զրու՞յցը, թե՞ բանավեճը:

3. Հաշվի առնելով, որ իրականությունը սուբյեկտիվ է՝ ո՞րն է ավելի նպաստում այն համատեղ իրականության ստեղծմանը, որը պատվում և արժևորում է անհատների սուբյեկտիվ բնությունն ու իրականությունը. զրու՞յցը, թե՞ բանավեճը:

4. Արդյո՞ք արդարություն նշանակում է արժևորել անհատների սուբյեկտիվ բնությունն ու իրականությունը:

5. Մենք բոլորս համաձա՞յն ենք ունենալ զրույց և ոչ բանավեճ:

Անհատակա՞ն, թե՞ համատեղ իրականություն. «Առավոտ լուսո» Պարույր Սևակ

- Նախ ամբողջական բանաստեղծությունը բարձրաձայն կարդալ:
- Հետո կարդալ ամեն տունը և ապա մեկ առ մեկ քննարկել աջ սյունակի համապատասխան հարցերը:
- Մի սյունակի հարցերը քննարկելուց հետո սկսել քննարկել հաջորդ տունը:
- Կարևոր նկատառում հարցերի վերաբերյալ. խնդիր չէ, եթե խումբը չի կարողանում գալ ընդհանուր հայտարարի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Դեռ ավելին, դա նաև լավ է, որ դուք չեք կարողանում պատասխանել որոշ հարցերի: Ավելի կարևոր է հարցերի շուրջ մտածելը և դրանք քննարկելը, քան ընդհանուր հայտարարի գալը: Վերջնական պատասխան կարող եք ունենալ ավելի ուշ, միգուցե այլ նյութեր, հարցեր ուսումնասիրելու ժամանակ, որոնց հետագայում կհանդիպեք այս բաժնում, գրքում կամ միգուցե օրեր անց՝ ավելի երկար ամենի մասին մտածելուց հետո:

Առավոտ լուսո

Առավոտ լուսո՜,
Առավոտ մի ջի՜նջ,
Ջի՜նջ, ինչպես… ոչի՛նչ,
Ջի՛նջ, սակայն դեռ պա՜ղ:
Ու ես անհապաղ
Անջատում եմ ինձ
Աշխարհից ծանոթ
Ու պարպում եմ ինձ,
Դարձնում մի անոթ,

Որ լոկ դատարկ չէ,
Այլ նաև անօդ:
Եվ… նո՜ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժըմ եթե ոչ ձեզ բոլորիդ,
Ապա գոնե ի՛նձ, միայն ի՜նձ համար,
Որպեսզի նախ ե՛ս
Եվ հենց ի՛նձ վրա
Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթե լինի այս անգամ սարքին՝
Նո՛ր միայն վստահ հանձնեմ ձե՛զ նաև,
Եվ ապրեք այնտեղ դուք մարդավայել:

Ես՝ պատրանազերծ,
Բայց և հուսազեն,
Այս դեռ անվավեր ու նոր աշխարհում
Էլ չե՜մ զբաղվում ու չե՛մ զբաղվի
Չեղածի վրա եղածի թերին իզո՜ւր քննելով,
Երազի վրա երեխայաբար անո՛ւրջ դնելով,
Կեղծված դրամով կեղծ բան գնելով,
Ոչ էլ ճարահատ ու միտումնորեն
Մահանալու պես անվերջ քնելով:

Ես՝ զարթնած արդեն,
Բայց դեռ անլվա,
Հեղուկով մի կուց,
Որ պարգևում է ձնհալն անխուսափ,
Նախ զովացնում եմ դեմքն իմ՝ հիվանդի՛,
Իսկ հետո՝ ամե՜ն տեսակ հիվանդի՝
Մա՞րդ լինի, երկի՞ր, թե՞ հավատ,- մե՜կ է:
Զովացնում նրանց ամենքի դեմքը՝
Իմ ամենաբուժ մատների հետքը
Անջինջ թողնելով սրա ու նրա
Դեռ գոց կոպերի,
Դեռ փակ շուրթերի,
Տակավին քնկոտ երեսի վրա:

Ու բոլորի՛դ մեջ,
Անխտիր բոլո՜ր-բոլո՜ր-բոլորի՜դ,
Ինչ-որ սիրելի մի բան եմ գտնում,
Սիրելու ինչ-որ արժանի մի բան,
Որ հավանաբար
Ա՛յն ժամանակ է ստեղծվել արդեն,
Երբ հին չորս ոտքից երկուսը
Անդարձ
Մենք կորցըրեցինք…

Եվ վեհ բարձունքից աննրողության
Ես, քարի նման, վար եմ թավալվում՝
Հասնելով փափուկ ա՛յն ստորոտին,
Որից քիչ անդին
Ճահիճն է ապրում
Իր հավերժական ինքնածին կյանքով,
Եվ, քարի լեզվով, ասում եմ. «Այբ, Բեն»,
Այսինքն՝ «Արեգակ»,
Կամ՝ «Եղիցի լույս»…

Պարույր Սևակ

«Առավոտ լուսո»	Հարցեր զրույցի համար
1. Առավոտ լուսո՜, Առավոտ մի ջի՜նջ, Ջի՜նջ, ինչպես… ոչի՛նչ, Ջի՛նջ, սակայն դեռ պա՜ղ:	• ամե՞ն առավոտ է սկիզբ: • ի՞նչ են «ջինջն» ու «պաղը» խորհրդանշում: • ինչպիսի՞ համեմատություն կարող է լինել «ջինջ, պաղ առավոտվա» ու բանաստեղծության վերջում գրված «արեգակ»-ի և «Եղիցի լույս»-ի միջև (վերընթերցել առաջին և վերջին տները): • հնարավո՞ր է՝ ջինջն ու պաղը վերաբերում են նոր էջից սկսելուն՝ սոցիալական կառույցներից ու ընկալումներից անկախ, մինչդեռ «քարի լեզուն» ու այբուբենը հիմնվում են գիտելիքների ու այն սոցիալական շրջանակների վրա, որ մյուսներն ստեղծել ու փոխանցել են մեզ: Եթե ոչ այսպես, ապա ո՞րը կարող է լինել այլընտրանքային մեկնաբանությունը:
2. Ու ես անհապաղ Անջատում եմ ինձ Աշխարհից ծանոթ Ու պարպում եմ ինձ, Դարձնում մի անոթ, Որ լոկ դատարկ չէ, Այլ նաև անօդ: Եվ… նո՜ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝ Առայժըմ եթե ոչ ձեզ բոլորիդ, Ապա գոնե ի՛նձ, միայն ի՜նձ համար, Որպեսզի նախ ե՛ս Եվ հենց ի՛նձ վրա Բժշկի նման փորձարկեմ կարգին, Ու եթե լինի այս անգամ սարքին՝ Նո՛ր միայն վստահ հանձնեմ ձե՛զ նաև, Եվ ապրեք այնտեղ դուք մարդավայել:	• ինչ վերաբերում է նոր աշխարհ ստեղծելուն, արդյո՞ք յուրաքանչյուր անհատ չի ապրում իր սեփական աշխարհում կամ այն ստեղծում ինչ-որ չափով: Դիտարկել «օվկիանոս»-ի մեր վարժությունը և իրականության անհատական ընկալումները: • կարո՞ղ է մեզնից յուրաքանչյուրը երազել մի նոր աշխարհի մասին, երազել, թե ինչպիսին կուզենար, որ իրական աշխարհը լիներ: Մենք սա չե՞նք անում ամեն օր, երբ երազում ենք սեփական կյանքի մասին: Մենք չե՞նք կարող նաև ամեն օր երազել այն մասին, թե ինչպիսին ենք ուզում, որ ամբողջ աշխարհը լինի:

«Առավոտ լուսո»	Հարցեր զրույցի համար
3. Ես՝ պատրանազերծ, Բայց և հուսազեն, Այս դեռ անվավեր ու նոր աշխարհում Էլ չե՛մ զբաղվում ու չե՛մ զբաղվի Չեղածի վրա եղածի թերին իզո՛ւր քննելով, Երազի վրա երեխայաբար անո՛ւրջ դնելով, Կեղծված դրամով կեղծ բան գնելով, Ոչ էլ ճարահատ ու միտումնորեն Մահանալու պես անվերջ քնելով:	• ո՞րն է երազների ու հույսի միջև տարբերությունը: Մենք մի՞շտ հույս ունենք: Ի՞նչ ուժ է հույսն անհատին տալիս: • ո՞րն է տարբերությունը արդեն եղածը քննադատելու և նոր իրականության մասին երազելու միջև: Ո՞ր մոտեցումն ավելի արդյունավետ կարող է լինել: • որքա՞ն հաճախ ենք քննադատում ինչ-որ նոր բան ստեղծելու փոխարեն: • ո՞րն է տարբերությունը «անուրջների» և «երազների» միջև. կա՞ տարբերություն անհատական ցանկության և ապագայի հանդեպ տեսլականի միջև: Արդյո՞ք առաջինը վերաբերում է միայն նրան, թե ինչ եմ ուզում ինքս ինձ համար, իսկ երկրորդը ավելի լայն է և ներառում է այլ անհատների (հետաքրքրական է, որ գիտությունն ապացուցել է, որ երազներն առաջանում են մեր ուղեղի լիմբիական համակարգում՝ ավելի հին հատվածում, իսկ երևակայությունն առաջանում է մեծ ուղեղի կեղևային հատվածում՝ ավելի նոր հատվածում, որն ասոցացվում է գիտակցության և դատողության հետ): • իրեր գնելը բավարարվածությու՞ն է պատճառում, բայց … ե՞րբ են նման բաները կեղծ, ե՞րբ է դրամը կեղծ, ե՞րբ է սպառումը նմանվում քնած լինելուն: Բանաստեղծության մեջ «կեղծը» ասոցացվու՞մ է քնած լինելու հետ: • ինչպե՞ս կարող է անհատական երազը ավելի «իրական» լինել, քան լայնորեն ընդունված սոցիալական «իրականությունը»: Դիտարկել «օվկիանոսի»-ի վարժությունը:

«Առավոտ լուսո»	Հարցեր զրույցի համար
4. Ես՝ զարթնած արդեն, Բայց դեռ անլվա, Հեղուկով մի կուց, Որ պարգևում է ձնհալն անխուսափ, Նախ զովացնում եմ դեմքն իմ՝ հիվանդի՛, Իսկ հետո՝ ամե՜ն տեսակ հիվանդի՝ Մա՞րդ լինի, երկի՞ր, թե՞ հավատ,- մե՜կ է: Զովացնում նրանց ամենքի դեմքը՝ Իմ ամենաբուժ մատների հետքը Անջինջ թողնելով սրա ու նրա Դեռ գոց կոպերի, Դեռ փակ շուրթերի, Տակավին քնկոտ երեսի վրա:	• վերջին տունը դիտարկելիս արթնանալը հասարակության՝ իրականության տարբերակն ընդունելու հակառա՞կն է: • ինչպե՞ս է արթնանալը նման ծննդի. վերածնվելո՞վ: • հալված ձնով լվացվելը մեզ էլ ավելի արթնացնելու համա՞ր է: Հալված ձյունը մաքու՞ր է: • ինչպե՞ս կարող ենք մենք բոլորս լինել հիվանդներ, ովքեր կարիք ունեն արթնանալու: Կրկին դիտարկել «օվկիանոս»-ի վարժությունը և անհատի իրականությունն ու սոցիալական իրականությունը: • «մարդը», «երկիրը» և «հավատը»՝ բոլորը, նույն են, քանի որ նրանք բոլորը շրջանակնե՞րն են նրա, թե ինչն ենք մենք «իրական» ենք համարում: • կարո՞ղ է «ամենաբուժ մատները» լինել հենց այս բանաստեղծությունը: Եթե ոչ, ապա ի՞նչը:

«Առավոտ լուսո»	Հարցեր զրույցի համար
5. Ու բոլորի՛դ մեջ, Անխտիր բոլո՜ր-բոլո՜ր-բոլորի՜դ, Ինչ-որ սիրելի մի բան եմ գտնում, Սիրելու ինչ-որ արժանի մի բան, Որ հավանաբար Ա՛յն ժամանակ է ստեղծվել արդեն, Երբ հին չորս ոտքից երկուսը Անդարձ Մենք կորցրեցինք…	• այս բանաստեղծությունը գրված է նրանց համար, ովքեր արթու՞ն են, թե՞ նրանց համար, ովքեր քնած են: Արթուն կամ քնած ի՞նչ իմաստով: • մեր չորս ոտքերից երկուսը կորցնելը վերաբերում է էվոլյուցիայի՞ն և մարդ դառնալու՞ն: Մարդ դառնալուց հետո հավաքականի (օրինակ՝ հասարակության) իրականությունը ավելի գերիշխո՞ղ կամ ավելի կարևո՞ր է դառնում, քան անհատի իրականությունը: • չնայած դրան՝ մենք՝ յուրաքանչյուրս, առանց խտրության արժանի ենք սիրո: Սա նշանակու՞մ է, որ մենք բոլորս հավասար ենք: Սա նշանակու՞մ է, որ յուրաքանչյուր անհատ ունի արժեք: • քրիստոնեության համաձայն՝ յուրաքանչյուր և ամեն անհատ կարող է փրկվել կամ ենթակա է փրկության: Արդյո՞ք դա նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ նույնն է, հավասար է և ունի արժեք: • ի՞նչ հիմքով ենք մենք՝ յուրաքանչյուրս, առանց խտրության արժանի սիրո: Դա այդպես է պարզապես այն պատճառով, որ յուրաքանչյուրս գոյությու՞ն ունենք որպես անհատներ… որ յուրաքանչյուրս կենդանի՞ ենք: Կենդանի լինելն արտացոլու՞մ է Աստծուն:

«Առավոտ լուսո»	Հարցեր զրույցի համար
6. Եվ վեհ բարձունքից անններողության Ես, քարի նման, վար եմ թավալվում՝ Հասնելով փափուկ ա՛յն ստորոտին, Որից քիչ անդին Ճահիճն է ապրում Իր հավերժական ինքնաձին կյանքով, Եվ, քարի լեզվով, ասում եմ. «Այբ, Բեն», Այսինքն՝ «Արեգակ», Կամ՝ «Եղիցի լույս»…	• որո՞նք են «աններեղության վեհ բարձունքները»: Դա ավելի լավ աշխարհի տեսլակա՞ն է: • ինչպիսի՞ իրականություն է արտացոլում ճահիճը: Հաշվի առնելով, որ կյանքի «կառուցվածքային բլոկները» (քիմիական նյութերն ու սնուցիչները, որոնցից վաղ օրգանիզմները կազմավորվել են) առաջացել են լճացած ջրում, արդյո՞ք ճահիճը ներկայացնում է մեր էվոլյուցիոն սկիզբը և մեր կենսաբանական, կենդանաբանական բնությունը: • լեզուն կամուրջ է անհատների միջև և յուրաքանչյուր անհատի՝ իրականության յուրօրինակ ընկալման միջև: «Քարի լեզուն» ներկայացնու՞մ է մեր հաղորդակցությունը որպես պարզ և սահմանափակ: Որքանո՞վ կարող ենք իսկապես հասկանալ մեկ այլ անհատի ընկալումները: • գրային համակարգը թույլ տվեց ընկալումների և հասկացողությունների ավելի լայն տարածումը, ինչպես նաև գրելու կարողություն ունեցողներին՝ կառուցել սոցիալական իրականություն: Դիտարկել, թե ինչպես ենք նշում, երբ երեխաները այբուբեն են սովորում: Դա դեպի մշակույթ մուտք չէ՞: Մշակույթը մի շրջանակ չէ՞, որն ուսուցանում է իրականության տարբերակ: • «Եղիցի լույս»-ը ինչ-որ բանի կանչ չէ՞: Այն հույս չէ՞: • հնարավո՞ր է, որ ջինջ, պաղ առավոտյան մենք արեգակի ու լույսի համար հույս ենք փայփայում և մշտապես հույս ենք փայփայում լուսավորության ու ներշնչանքի համար այն մասին, թե ինչպես դարձնենք ավելի լավ աշխարհի մեր տեսլականն ավելի իրական: • ինչպե՞ս կարող ենք անհատական ու մեր հավաքական աշխարհն ավելի լավը դարձնել: Ինքներս մեզ կատարելագործելը չի՞ կատարելագործում այն հավաքական աշխարհը, որի մասն ենք մենք կազմում: Հավաքական աշխարհը կատարելագործելը նաև մեր կյանքը չի՞ բարելավում:

Զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է

Զարգացման զրույցի մեկ այլ նախադրյալն այն է, որ զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է.

Իր «Զարգացումը որպես Ազատություն»[1] գրքում Նոբելյան մրցանակակիր, տնտեսագետ և փիլիսոփա Ամարտյա Սենը պնդում է, որ զարգացած հասարակություն լինելը չի որոշվում ֆինանսների և տնտեսության հիման վրա, փոխարենը լավ կլինի ասել՝ զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է: Տրամաբանորեն, քանի որ հասարակությունը կազմված է անհատներից, անհատների փոխազդեցությունները միմյանց և մյուսների հետ ու այլոց նրանց աջակցությունն են, որ թելադրում են այն հասարակության որակը, որտեղ նրանք ապրում են: Բացի այդ, ըստ Սենի՝ անհատը զարգանում է ընտրության միջոցով: Տրամաբանական է, որ անհատն ամենալավ դիրքում է իր անձը ճանաչելու համար. ի՞նչ հետաքրքրություններ ունի, ի՞նչ տաղանդ, որը կուզենար զարգացնել, ինչպես նաև ի՞նչն է նա արժևորում: Նմանապես, հասարակության շահերից է բխում խթանել և քաջալերել անհատի ինքնազարգացմանը նպաստող հմտությունները և ընտրությունները, որպեսզի յուրաքանչյուր անհատ կարողանա իրացնել իր ամբողջական ներուժը և դրանով իսկ էլ ավելի աջակցել հասարակությանը:

«Զարգացման զրույց»-ը մոտ հինգ (ոչ ավել քան յոթ) անձից բաղկացած խմբերի համար քննարկումների շարք է, որը ձգտում է ներգրավել անհատներին մեր անհատական զարգացման և հասարակության զարգացման մասին զրույցի մեջ՝ անհատական այս մոտեցումից ելնելով: Բացի այդ, հասարակական գործիչների, հասարակական մեխանիզմների ու հանրային ոլորտի մասին բողոքելու փոխարեն «Զարգացման զրույց»-ը ձգտում է լինել ինքնաճանաչողական և մասնակիցներին հրավիրվել մեր անձի և համատեղ ինքնության, մեր արժեհամակարգի և մեր փոխազդեցությունների ու հասարակության մեջ մեր վարքի մասին քննարկման: Նպատակն ինքներս մեզ քննելն է և քննության միջոցով սովորելը, թե ինչպես են մեր ինքնությունը, արժեքները, վարքը կամ նպաստում, կամ խանգարում հասարակության զարգացմանը, ինչն էլ բխում է ուրիշների հետ մեր փոխազդեցություններից և մեր աջակցությունից՝ ուղղված բոլորին: Վերջնական հարցն այն է, թե ինչպես կատարելագործենք ինքներս մեզ, որ և՛ ուղղակի, և՛ անուղղակի ճանապարհներով ավելի աջակցենք այն հասարակությունը սահմանելուն և ստեղծելուն, որտեղ ցանկանում ենք ապրել:

1. Արդյո՞ք տրամաբանական է, որ ինչքան զարգացած է դառնում անհատը, այնքան ավելի է կարողանում աջակցել մյուսներին:

- Կարո՞ղ եք սրա վերաբերյալ մի օրինակ բերել ընտանեկան համատեքստից:
- Կարո՞ղ եք սրա վերաբերյալ մի օրինակ բերել ավելի լայն համատեքստից, ինչպես օրինակ՝ գյուղը կամ համայնքը:

[1] Amartya Sen, *Development as Freedom*, US, Anchor Books, 1999:

2. Հաշվի առնելով «օվկիանոս»-ի վարժությունը, որով դուք սկսեցիք՝ տրամաբանակա՞ն է, որ անհատը լավագույնը գիտի, թե ինչն է իրեն հետաքրքրում, ինչպիսի ուսումը կամ աշխատանքն ամենաշատը կերջանկացնի իրեն:

- Պե՞տք է ընտանիքն օգնի անհատին բացահայտել իր կոչումը (այսինքն, թե ինչպիսի կարիերան է իրեն ամենաշատը համապատասխանում): Ինչպե՞ս:

- Ինչպե՞ս կարող հասարակությունն օգնել անհատներին բացահայտել իրենց կոչումը:

3. Ելնելով «օվկիանոսի»-ի վարժությունից՝ մենք գիտենք, որ բոլորս նույնն ենք և դեռևս՝ տարբեր: Քանի որ սա ճշմարիտ է, որքա՞ն կարևոր է, որ անհատներն իրենք ընտրեն իրենց համար:

- Ընտանիքներն իրե՞նք են ընտրում երեխաների համար, թե՞ օգնում են, որ երեխաները սովորեն լավ ընտրություններ անել:

- Առաջնորդներն ընտրու՞մ են քաղաքացիների համար, թե՞ քաղաքացիներին առաջարկում են ընտրության լավ տարբերակներ:

- Հասարակությունն ընտրու՞մ է անհատների համար, թե՞ օգնում է անհատներին ինքնուրույն ընտրություն անել:

4. Ո՞վ է ամենազարգացած անհատը. նա, ով ընտրու՞մ է իր համար, թե՞ նա, ում ընտրություններն արվում են ուրիշների կողմից:

<u>Զրույցի ավարտ և հնարավորություն մեկնաբանությունների համար</u>

Մենք պետք է իմանանք, որ յուրաքանչյուր անհատ իրականությունն ընկալում է յուրովի, և այդ պատճառով, եթե ուզում ենք իրապես հաղորդակցվել և հասկանալ միմյանց, մենք պետք է ձգտենք իրական քննարկման, ինչը պահանջում է լսել և ոչ բանավիճել: Բացի այդ, քանի որ զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է, մեզ և մյուսներին ավելի լավ հասկանալը և այդպես ավելի լավ ընտրություններ անելը յուրաքանչյուրիս օգտին է՝ անհատապես և որպես հավաքական:

Խմբերն ու անհատները կարող են ուղարկել իրենց մեկնաբանություններն ու առաջարկությունները bournazian@gmail.com էլէկտրոնային հասցեով:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ 02
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՆՀԱՏ՝ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ

Թեմա՝
Անհատը և հավաքականն ու ընտրությունը

Նպատակ՝
Ճանաչել ինքնության անհատական կազմավորման մշակութային սահմանափակումները

Ծրագրի արագ կրկնություն՝
Մինչ այժմ մեր քննարկած գաղափարները հետևյալն են.

- Նախադրյալ՝ զրույց և ոչ բանավեճ. զրույցը ձգտում է ներգրավել անհատներին մի քննարկման մեջ, որն ուսումնասիրում է մեր սուբյեկտիվ և հավաքական իրականությունը, մինչդեռ բանավեճը հաղթելու և հեռանկարային մոդելն ուրիշներին պարտադրելու մասին է: Այս ծրագիրը զրույցի մասին է:
- Նախադրյալ՝ զարգացում. զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է: Անհատները զարգանում են իրենց և մյուսներին ճանաչելով, իրենց համար ավելի լավ ընտրություններ անել սովորելով ու մյուսների հետ փոխազդելով: Այս ծրագիրը զարգացումն ուսումնասիրելու մասին է:
- Նախադրյալ՝ «Զարգացման զրույց»-ը փորձնական նախագիծ է, և դուք կարող եք հետադարձ կապ ապահովել նյութերը թեմաներին և նպատակներին համահունչ կատարելագործելու համար: Կարող եք ուղարկել հաղորդագրություններ bournazian@gmail.com էլեկտրոնային հասեցով:

Խմբի անվանում՝
Երբ մի խումբ այս ծրագրի մասին իր մեկնաբանությունը մեզ է ուղարկում, լավ է իմանալ՝ որ խումբն է այն ուղարկում: Այդ պատճառով մյուս խմբերն ընտրել են իրենց համար անվանումներ: Ի՞նչ կլինի ձեր խմբի անվանումը: Կարո՞ղ եք մտածել մի անվանում, որն իսկապես ներկայացուցչական լինի ձեր մասին՝ որպես հավաքական:

Զրույց 01-ի կրկնություն՝
• «Օվկիանոս»-ի վարժություն. յուրաքանչյուր անհատ եզակի է և ունի իր սուբյեկտիվ իրականությունը՝ իր սեփական «օվկիանոսը»: Մեր համատեղ իրականությունը կառուցվում է մշակույթի և լեզվի միջոցով:
• Բանաստեղծություն. մենք՝ որպես անհատներ, կարող ենք մեկնաբանել ուրիշի փորձը՝ միայն համեմատելով այն մեր փորձի կամ այն ընդհանրացումների հետ, որ ուսուցանվել է մեզ մշակույթի և լեզվի միջոցով: Չնայած այն բանին, որ մարդիկ այսպես են տեսնում իրականությունը՝ պետք է հիշել, որ յուրաքանչյուրի «օվկիանոսը» տարբեր է, և քանի որ բոլորս նույնն ենք և տարբեր, այսպիսով պետք է հարգել մյուսների տարբեր լինելը՝ որպես նրանց իրականություն:
• Հաշվի առնելով, թե ինչ ենք ուսումնասիրել նախորդ զրույցի ընթացքում՝ ինչպե՞ս կարող են անհատներն ուսումնասիրել իրենց ինքնությունը կամ բնությունը և կատարելագործել այն իրենց ողջ ներուժի չափով՝ հօգուտ իրենց և հասարակության: Կարո՞ղ է մարդկանց ընտրության հնարավորություն տալը նպաստել դրան:

Զրույց 02

Քանի որ բոլորս նույնն ենք և դեռևս տարբեր, և քանի որ մեր «օվկիանոսները» տարբերվում են, ինչպե՞ս ենք հաղորդակցվում մեր իրականության շուրջ: Սա հաճախ կոչվում է կիսել «հղման ընդհանուր շրջանակը»:

«Star Trek»-ը և հղման ընդհանուր շրջանակը

«Star Trek»-ը գիտաֆանտաստիկ ֆիլմերի շարք է: Ստորև բերված տեսարանում կերպարներից մեկն այլմոլորակային է՝ Սփոք անունով, ով մահացել է և ապա վերակենդանացել: Բնականաբար Մկքոյ անունով բժիշկը ցանկանում է իմանալ Սփոքի մահվան փորձառության մասին: Մինչ Սփոքը վերահսկում է հաղորդակցման հաղորդումները, բժիշկը խոսում է նրա հետ:

Դիտել տեսանյութը այս հղումով՝ https://youtu.be/RImwlpEfyoU~~HEAD=dobj
կամ կարդալ հետևյալ սցենարը, որտեղ նկարագրվում է, թե ինչ է տեղի ունենում դեպքի վայրում:

Մկքոյ - Գուցե կարող ենք խոսել մի փոքր փիլիսոփայական թեմաներից: Կյանք [դադար]. մահ. [դադար.] կյանք [դադար]. նմանատիպ բաների մասին:
Սփոք - Հրաբխի վրա ես ժամանակ չունեի դիտարկել փիլիսոփայական կողմերը:
Մկքոյ - Դե լավ, Սփո՛ք, ես եմ՝ Մկքոյը: Դու իրոք գնացել ես մի տեղ, որտեղ ոչ մի մարդ նախկինում չի եղել: Չե՞ս կարող ինձ ասել, թե ինչպիսին էր այնտեղ:
Սփոք - Անհնար է քննարկել առարկան առանց հղման ընդհանուր շրջանակի:
Մկքոյ - Դու կատակ ես անում:
Սփոք - Կատակը [դադար] մի պատմություն է հումորային գագաթնակետով:
Մկքոյ - Դու նկատի ունես, որ ես պետք է մեռնե՞մ մահվան քո ներըմբռնման շուրջ մտքեր փոխանակելու համար:
Սփոք - Ների՛ր ինձ, բժի՛շկ: Ես մի շարք օգնության կանչեր եմ ստանում:
Մկքոյ - Ես կասկած չունեմ դրանում:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Հիմնվելով վերոնշյալ պատմության վրա՝ ի՞նչ է «հղման ընդհանուր շրջանակը»:	Մեր տպավորություններն ուրիշներին ներկայացնելու համար մենք պետք է դրանք համեմատենք մի բանի հետ, որին նրանք նույնպես առնչվել են կամ մի բանի հետ, որը նրանց հայտնի է:
2. Բացի համատեղ փորձից կարո՞ղ ենք այլ կերպ մոտավորեցնել հղման շրջանակները: Ինչպե՞ս էիք նմանեցնում օվկիանոսը:	Մեր տպավորությունները երբեք նույնը չեն, բայց միգուցե երբեմն նմանատիպ են: Անհրաժեշտությունից ելնելով՝ մենք հաճախ նմանեցնում ենք. «Դա նման է X-ի, բայց տարբեր է»: «Օվկիանոսը նման է Սևանին, բայց շատ, շատ ավելի մեծ է»:

Հարցեր	Զրույցի նպատակներ
3. Մշակույթն ստեղծու՞մ է հղման շրջանակ:	Մշակույթը սովորեցնում է մեզ ընդհանրացումներ, պարտականություններ ու դերեր, փոխաբերություններ և այլն, որոնք ծառայում են որպես հղման ընդհանուր շրջանակներ: Այն, ինչը մշակույթը համարում է բնական, հղման ընդհանուր շրջանակ է. «բնական է, որ տղամարդիկ ծխում են, բայց դա ընդունելի չէ կանանց դեպքում»:
4. Գիտությունն ստեղծու՞մ է հղման շրջանակ:	Այո, գիտությունը մի մեթոդ է, որը նկարագրում է իրողությունները՝ հիմնվելով փորձարկումների և դիտարկումների վրա. մենք գիտենք, որ տարվա եղանակները երկրի՝ արեգակի շուրջ պտտվելու արդյունք են. https://youtu.be/vDgUmTq4a2Q
5. Երբ մշակույթն ու գիտությունը հակասում են միմյանց, ո՞րն ենք մենք նախընտրում:	Սովորաբար նախընտրում ենք այն շրջանակները, որոնց մասին քաջատեղյակ ենք կամ որոնց հետ առնչություն ենք ունեցել: Ո՞րն այն կլինի Հայաստանի դեպքում, կամ արդյո՞ք դա կախված է թեմայից:

Հղման հայկական շրջանակ. անհատներն ունե՞ն ընտրություն: Անհատները պե՞տք է ունենան ընտրություն:

Մի ամուսնության պատմություն

Տատիկս սիրում էր պատմել, թե ինչպես էին հանդիպել ու ամուսնացել իր ծնողները:

Տատիկիս հայրը՝ Սեդրակը, շատ գեղեցիկ արտաքինով, կապուտաչյա, բարձրահասակ, կրթված, խելացի երիտասարդ է եղել, բայց ոչ մի կերպ չի կարողացել իրենց քաղաքում իր ճաշակով աղջիկ ընտրել: Նրան խորհուրդ են տվել, որ փնտրի իր քաղաքի շրջակայքի գյուղերում:

Եվ ահա Սեդրակը նստում է ձին և սկսում է գյուղերով շրջել: Տատիս մայրը՝ Զարդուհին, քնած է լինում և երազ է տեսնում, թե ինչպես ձիավոր մի երիտասարդ մտրակով խփում է իրեն և ասում է, որ վեր կենա: Զարդուհին զարթնում է, դուրս գալիս իրենց տնից և հենց այդ ժամանակ տեսնում է իր երազում տեսած ձիավոր երիտասարդին: Դա Սեդրակն էր: Հենց նոր քնից արթնացած կարմրայտ աղջիկը չափազանց գեղեցիկ է թվում Սեդրակին: Նա պարզում է, թե ում աղջիկն է և վերադառնալով տուն՝ հայտարարում է, որ վերջապես հանդիպել է մի գեղեցիկ աղջկա և ուզում է նրա հետ ամուսնանալ:

Ծնողները ուրախանում են, որ իրենց որդին վերջապես ընտրություն է կատարել: Իսկույն գնում են աղջկա ծնողների մոտ և ստանալով նրանց համաձայնությունը՝ սկսում են հարսանիքի պատրաստություն տեսնել:

Եվ ահա հարսանիքի ժամանակ, իր կյանքում երկրորդ անգամ տեսնելով ցածրահասակ, թուխ հարսնացուին, Սեդրակը հայտարարում է. «Սա իմ տեսած աղջիկը չէ»: Բայց արդեն ուշ էր:

ըստ Ա.Վ. Գևորգյան

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Պատմությունը հումորայի՞ն է: Ինչու՞ այո կամ ոչ:	Հումորը հիմնված է այն փաստի վրա, որ վերջում փեսայի բոլոր ջանքերն ապարդյուն էին: Ինչու՞ ենք ծիծաղում: Արդյո՞ք ծիծաղում ենք ողբերգության վրա:
2. Այս պատմության մեջ, որո՞նք են հղման ենթադրյալ ընդհանուր շրջանակները: • օրինակ ի՞նչ է այս պատմությունն ուսուցանում տղամարդու և կնոջ մասին: • դիտարկել Սեդրակի նկարագրությունը Զարդուհու նկարագրության համեմատությամբ: • ո՞վ կարող էր ընտրություն անել:	Առաջին զրույցից իմացանք, որ մենք սովորում ենք մեր փորձի և մյուսների փորձի միջոցով, ինչը ներառում է պատմություններ: Պատմությունները սովորեցնում են նաև ընդհանրացումներ: Այս պատմության մեջ փնտրելով իր հարսնացուին՝ տղամարդն ակտիվ է, իսկ կինը՝ պասիվ՝ կախված իր ճակատագրից՝ ինչպես երևում է նրա երազից: Լինելով ակտիվ՝ տղամարդն ունի ընտրություն, լինելով պասիվ՝ կինը չունի ընտրություն: • որքանո՞վ է այսօր իրավիճակը նույնը կամ տարբեր ընտրության առնչությամբ: • ի՞նչ է սա նշանակում կանանց զարգացման տեսանկյունից:
3. Այս պատմության մեջ ո՞րն է «բայց արդեն ուշ էր» արտահայտության իմաստը: • Սեդրակը ցանկանում էր դադարեցնե՞լ ամուսնությունը: • չնայած իր ջանքերին՝ ի վերջո Սեդրակը կարողացա՞վ կատարել ընտրություն: • ի՞նչն էր համարվում ավելի կարևոր, քան ընտրությունը:	• ի վերջո, արդյո՞ք պատիվը պատճառ հանդիսացավ որ «արդեն ուշ» էր դադարեցնել ամուսնությունը: • եթե այդպես է, արդյո՞ք այն ժամանակվա մշակույթը հանրային պատիվը ավելի էր կարևորում, քան անհատական ընտրությունը: • պարտավորությունը կամ պատիվը նմա՞ն է ամոթի, քանի որ այն սահմանափակում է ընտրությունը. այլ կերպ ասած՝ այն սահմանափակու՞մ է անհատների ընտրությունը: • ինչպե՞ս որոշել, թե պետք է արդյոք ընտրությունը գերակայի և երբ:
4. Կերպարների նկարագրության հիման վրա ի՞նչ զուգորդումներ ենք մենք անում հասակի, կապույտ աչքերի կամ մաշկի մուգ գույնի հետ:	Զուգորդումների միջոցով պատմությունն ուսուցանում է, որ արժեքավոր հատկանիշներից են բարձր հասակը, կապույտ աչքերը ու տղամարդկությունը, իսկ մուգ մաշկն ու իգականությունն արժեքավոր չեն:

Հարցեր	Զրույցի նպատակներ
	• ինչպե՞ս է սա ազդում անհատների վրա: Դա արդարացի՞ է:
5. Հայերը հակվա՞ծ են հավատալու ճակատագրին: • ո՞րն է բախտի և ընտրության միջև կապը:	Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճակատագրի հանդեպ հավատը թեթևացնում է որոշումներ կայացնելու հոգեբանական բեռը. ընտրողները, ովքեր դժվարացել են ընտրություն անել թեկնածուների միջև, նախընտրել են հավատալ, որ ճակատագիրը կվճռի ընտրության արդյունքը: • արդյո՞ք ճակատագրի հանդեպ հավատը նաև թույլ է տալիս անհատներին ընդունել, որ իրենք չունեն ընտրություն:
6. ո՞վ կարող է ամենալավն իմանալ իրեն, իր տաղանդները և թե ինչն է ամենահետաքրքիրն իր համար, որով պետք է զբաղվի: • այսպիսով, ո՞րն է ընտրության դերը անհատական զարգացման հարցում:	Անհատները, ովքեր իրենք են իրենց ընտրությունն արել, շատ ավելի հավանական է, որ եռանդով զբաղվեն այդ գործունեությամբ: Այն ուսանողը, ով ընտրել է ուսման իր ոլորտը, ավելի լավ կսովորի: Անհատները, ովքեր սովորում են ընտրություն կատարել, շատ ավելի պատասխանատու են իրենց և ուրիշների առջև:

Համաշխարհային արժեքների հետազոտությունը
http: //www.worldvaluessurvey.org/WVSOnline.jsp

Համաշխարհային արժեքների հետազոտությունը մի հետազոտություն է, որն անցկացվում է մի շարք երկրներում: Ահա բոլոր երկրներում տրվող մի հարցի պատասխանն՝ ըստ երկրների:

Հարց. որոշ մարդիկ զգում են, որ ունեն լիակատար ազատ ընտրության հնարավորություն և իրենց կյանքի հանդեպ վերահսկողություն, մինչդեռ մյուսների համար այն, ինչ իրենք անում են, չունի ոչ մի իրական ազդեցություն իրենց հետ կատարվելիքի վրա: Խնդրում ենք օգտագործել այս սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է «ոչ մի ընտրություն», իսկ 10-ը՝ «ազատ ընտրություն»՝ նշելու համար, թե ըստ ձեզ որքանով ունեք ազատ ընտրություն և ձեր կյանքի հանդեպ վերահսկողություն:

Երկիր	Միջին միավորը
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	7.73
Թուրքիա	7.35
Ադրբեջան	7.23
Գերմանիա	6.80
Իրաք	6.53
Հայաստան	6.52
Վրաստան	6.24
Ռուսաստանի Դաշնություն	5.95
Ի՞նչ կապ կա ընտրության և կյանքի հանդեպ վերահսկողության միջև: Արդյո՞ք դրանք նույնն են:	
Ինչպե՞ս կարող է այլ մշակութային հղման շրջանակն ազդել այն բանի վրա, թե տարբեր մշակույթներ ներկայացնող անհատներն ինչպես են պատասխանում հարցին. • եթե ինչ-որ մեկն ստանձնում է դեր, որը թելադրում է կոնկրետ վարքագիծ, որդյո՞ք նա կհասկանա այլընտրանքային վարքագիծը որպես ընտրության տարբերակ, և եթե չկա որևէ կանխատեսելի այլընտրանք, ուրեմն նա զրկվա՞ծ է որևէ ընտրությունից:	Ընտրությունը պետք է լինի թե՛ գիտակցված, թե՛ կամավոր: Բացի կամավոր վարվելուց, պետք է իմանալ կամ հասկանալ այլընտրանքները, որպեսզի ընտրություն անելով ազատ կամք դրսևորել: • Զարդուհին ունե՞ր ընտրության հնարավորություն: Նա ընդունու՞մ էր, որ ուներ որևէ ընտրություն: Եթե ոչ, մշակութային նորմերը նրա կողմից ընդունե՞լն էր խանգարում իրեն տեսնել որևէ ընտրություն:

Սուբյեկտիվ իրականությունը, համատեղ իրականությունը և հայերեն տասներորդ դասարանի հասարակագիտության դասագիրքը

Ընթերցանություն իրականության շուրջ՝

Յուրաքանչյուր անհատի իրականությունը սուբյեկտիվ է: Համատեղ իրականությունը, ինչը նշանակում է՝ ինչքանով ենք միմյանց հետ ընդհանուր իրականություն ապրում, կառուցվող է: Համատեղ իրականությունը մոտավորեցումն նրա, ինչ կարող է իրականում լինել, և այն հաղորդակցվում է մեզ հետ և մեր միջև լեզվի ու մշակույթի միջոցով: Ինչ վերաբերում է լեզվին, բառերն ունեն իմաստներ, որոնք յուրաքանչյուրս անհատապես վերագրում ենք դրանց, և համատեղ իմաստ, որ գիտենք, որ ուրիշները կիսում են մեզ հետ: Նման վերագրվող իմաստը հաղորդվում է նոր սերունդներին լեզվի և մշակույթի միջոցով: Նոր իմաստները կարող են ստեղծվել և վերագրվել ժամանակակից մշակույթի միջոցով, այդ թվում՝ երգերի կամ սոցիալական այլ ընդունված տարբերակների միջոցով (ինչպես օրինակ՝ «գուգլիր այն»), բայց դրանք քիչ են: Փոփոխվող լեզուն և մշակույթը թելադրում են համատեղ իրականություն, որն ուսուցանվում է մեզ՝ անկախ այն բանից, թե արդյոք այն, ինչ ուսուցանվում է, դեռևս արդիական

է, թե ոչ՝ հաշվի առնելով նոր գիտական հայտնագործությունները այն մասին, թե ինչն է ճշմարիտ:

Օրինակ՝ որոշ լեզուներ ունեն մի քանի բառեր, որոնց դիմաց մեկ այլ լեզվում միայն մեկ բառ է օգտագործվում: Էսկիմոները «ձյան» համար ունեն մի քանի բառ, որոնցից յուրաքանչյուրը տարբերակում է կոնկրետ ձյան տեսակ, քանի որ տեսակներն առանձնացնելը կարևոր է՝ հաշվի առնելով էսկիմոների շրջակա միջավայրը: Արաբերենում ուղտի համար կան տարբեր բառեր՝ պայմանավորված ուղտի տարբեր հատկանիշներով: Այս օրինակները նաև ցույց են տալիս, թե ինչպես է լեզուն արտացոլում մշակույթը, և ինչպես է մշակույթը կառուցում լեզուն:

Բացի այդ, լեզվաբանները տարբերակում են բարձր համատեքստի և ցածր համատեքստի մշակույթների և լեզուների միջև: Բարձր համատեքստում գաղափարի հաղորդակցումը հաճախ հիմնվում է մշակույթի միջոցով ի հայտ եկած համատեղ ըմբռնման վրա, որը բառացիորեն արտահայտված չէ:

Դիտարկել հետևյալը.
• «մի կորի» (նշանակում է «մոտ լինել», ոչ թե բառացիորեն «չկորչես»)
• «… մարդ ես …»
• «մարդս մարդ լինի»
• «ամոթ» / «ամոթ է… չէ, ոչ թէ ամոթ, այլ սիրուն չի»:
Նման բարձր համատեքստային հաղորդակցության դեպքում լեզվական հաղորդակցությունը հասկանալու համար անհրաժեշտ է ապրել տվյալ մշակութային միջավայրում:

Բացի նման բարձր համատեքստային հաղորդակցությունից լեզուները և մշակույթները սոցիալական հարաբերություններն արտահայտելու համար հիմնվում են նաև փոխաբերությունների վրա: Դիտարկել այս կեղծ համեմատությունը՝ «Կանայք նման են բրդի. որքան շատ ծեծես նրանց, այնքան ավելի փափուկ կդառնան»: Որևէ կերպ տրամաբանական չէ հավատալը, որ կանայք ինչ-որ կերպ նման են բրդի, բացի այն հասարակ պնդումից, որ փոխաբերությունն ինքնիրենով անում է: Բացի այդ, փոխաբերությունն ակնկալում է ապացուցել իր պնդումը հենց իր կառուցվածքով՝ այն կեղծ համեմատության միջոցով, որ երկուսն էլ փափկում են ծեծի միջոցով: Այնուամենայնիվ, եթե ամեն ինչ փափկում է, և մարդիկ ինքնաբավ են դառնում ծեծի ենթարկվելով, ինչու՞ ծեծել զինվորներին նրանց ուժեղ դարձնելու համար: Ավելին, եթե նույնիսկ որոշ կանայք «փափկում են», և որոշ տղամարդիկ՝ «պնդվում» ծեծի շնորհիվ, ծեծն ինքը չէ, որ փոխում է անհատներին, այլ սոցիալական ակնկալիքն է, որ հաղորդվել է նման անհատներին իրենց փորձի վերաբերյալ: Օրինակ, որպես կանոն, ամոթ կլինի, եթե տղամարդը ծեծի ենթարկվի, բայց տղամարդիկ, որոնք ձգտում են մուտք գործել որոշ խմբեր, հաճախ ընդունում են ծեծը՝ ապացուցելու, որ իրենք կարող են դիմակայել բռնությանը: Բռնությունը, որին անհատը ենթարկվում է, նույնն է, բայց բռնության նշանակությունը տարբեր է. մի դեպքում ամոթալի, իսկ մյուսում պատվաբեր՝ կախված միայն այն բանից, թե մշակույթն ինչ իմաստ է վերագրում բռնությանը: Այսպիսով, մշակույթն է, որ իմաստ է հաղորդում ցանկացած փորձառության՝ կառուցելով համատեղ իրականություն, որն անհատն ընդունում է՝ ելնելով այն մշակութային շրջանակներից իր կախվածությունից, որտեղ ինքն ապրում է:

Բայց ո՞վ է կառուցում այնպիսի համատեղ շրջանակներ, որոնք թելադրում են սոցիալական դերեր և սպասելիքներ: Դիտարկել այս հատվածը հայերեն տասներորդ դասարանի հասարակագիտության դասագիրքից:

Հասարակագիտության դասագիրք, 10-րդ դասարան
«Ամերիկացի հոգեբան Ու. Ֆ. Հարլին առանձնացնում է տղամարդկանց և կանանց հինգական հիմնական պահանջմունքներ, որոնց բավարարումն ապահովում է ամուսնության կայունությունը, իսկ անբավարարվածությունը հանգեցնում է կոնֆլիկտի՝ ընդհուպ ամուսնալուծության: Տղամարդկանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) սեռական բավարարվածություն, 2) հանգստի ուղեկից, 3) հմայիչ կին, 4) տնային տնտեսության վարում, 5) հիացմունք: Կանանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) քնքշություն, 2) խոսելու, զրուցելու հնարավորություն, 3) ազնվություն և անկեղծություն, 4) ֆինանսական աջակցություն, 5) ընտանիքին նվիրվածություն»:[2]

Հետաքրքրական է, որ պարոն Հարլին երբեք չի նշել այն, ինչ նկարագրված է վերոնշյալ հատվածում: Նախ, պարոն Հարլին ակադեմիկոս չէ, և նրա գիրքը գիտական աղբյուր չէ. այն պարզապես սպիտակամորթ քրիստոնյա ամերիկացիների համար ոչ գիտական մի ուղեցույց է, որը մեծապես քննադատվել է իր ներկայացրած մտքերի պատճառով: Երկրորդ, պարոն Հարլին գրել է, որ բոլոր ֆիզիկական անձինք (և՛ տղամարդիկ, և՛ կանայք) ունեն 10 պահանջմունք, այլ ոչ թե տղամարդիկ ունեն 5, և կանայք՝ դրանցից տարբերվող մեկ այլ 5 պահանջմունք: Բայց ըստ պարոն Հարլիի՝ տղամարդիկ և կանայք սովորաբար առաջնահերթություն են տալիս իրենց պահանջմունքերին՝ հակադրվելով միմյանց: Վերջիվերջո, պարոն Հարլիի կողմից նշված 10 պահանջմունքը պատշաճորեն արտահայտված չէ հայկական դասագրքում:

Հարցեր՝

- Ինչու՞ է հայերեն դասագիրքը վկայակոչել ամերիկյան հոգեբանի:
- Ինչու՞ է հայերեն դասագիրքը խեղաթյուրել հոգեբանի եզրակացությունները:
- Ո՞րն է դասագրքի նպատակը այս հատվածի առնչությամբ:
- Արդյո՞ք այս հատվածը սահմանում է սոցիալական սպասումները տղամարդկանց և կանանց համար: Ճի՞շտ է, որ տղամարդիկ կարիք չունեն խոսելու, և որքա՞ն հայ կանայք են իրապես ֆինանսական աջակցություն ցուցաբերում իրենց ընտանիքներին:
- Արդյո՞ք այս հատվածը սահմանում է լավ ամուսնությունը և եթե այո՝ ու՞մ համար:
- Ինչքանո՞վ է այս հատվածը թույլատրում այն փաստի գոյությունը, որ անհատները տարբեր են, և զույգերը տարբեր են՝ յուրաքանչյուրն իրեն հատուկ պահանջմունքերով և հետաքրքրություններով:

Ինչ, եթե կանոնը բացառությունն է, իսկ բացառությունը՝ կանոնը: Արդյո՞ք հղման շրջանակները համապատասխանում են իրականությանը, թե՞ հակառակն է:

«**Հայաստան. կանանց աշխարհը մի լեռնային գյուղում**»[3]
https://www.eurasianet.org/armenia-a-womans-world-in-one-mountain-village

Ամեն տարի մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օրը, Հայաստանի Ձորագյուղի կանանց համար ավելի շատ ծաղր է, քան ուրախանալու առիթ: Գյուղի տղամարդկանց 98 տոկոսը՝ 5000 հոգանոց բնակչության գրեթե կեսը, մեկնել է արտագնա աշխատանքի: Գյուղում մնացած բնակիչները կատակով իրենց գյուղն անվանում են «կանանց ակումբ», մի վայր, որտեղ կանայք անում են ամեն ինչ՝ հող են մշակում, երեխա դաստիարակում, հուղարկավորություն են

[2] Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան և այլք, *Հասարակագիտություն, 10-րդ դասարան*, Երևան, Տիգրան Մեծ, 2009, էջ 165:
[3] Հատվածներ էսսեյից, մարտի 7, 2011:

կազմակերպում և ինչ-որ ձևով, իսկապես դժվարությամբ, փորձում են պահպանել իրենց մասնատված ընտանիքը:

Չորս դուստր և մեկ որդի ունեցող 32-ամյա Զաբել Հովանյանի ամուսինն առաջին անգամ մեկնել է Մոսկվա արտագնա աշխատանքի, երբ նա 16 տարեկան էր և հղի: Նա այնքան երեխա ունի, որքան անգամ նրա ամուսինը վերադարձել է տուն: Ամենափոքրը՝ 3-ամյա երեխան, երբեք չի տեսել հոր երեսը:

16 տարի է, ինչ Զաբելի ամուսինը Ձորագյուղից մեկնել է Ռուսաստան, որտեղ մեկ ուրիշ «կին» է գտել: Զաբելը հիշում է, թե ինչպես արձագանքեց մոլեգնած ամուսինը, երբ ինքը զանգել էր խոսելու նրա ռուս կնոջ հետ: «Ինձ ասեց՝ ես իրան ասել եմ, որ դու իմ քուրն ես: Եթե մի անգամ էլ զանգես, կգամ ու կսպանեմ քեզ էլ, էրեխեքին էլ», - ասում է Զաբելը:

Չնայած նման վերաբերմունքին և ամուսնու շարունակվող բացակայությանը, այդուհանդերձ Զաբելը, ում միակ եկամուտը աղքատության պետական նպաստն է՝ ամսական մոտ 50.000 դրամի (130 դոլար) չափով, ասում է, որ եթե ամուսինը երբևէ վերադառնա, կընդունի: «Հանուն երեխաների կընդունեմ, եթե չընդունեմ, ամբողջ գյուղը կմեղադրի, իսկ ես չորս աղջիկ ունեմ, որոնց պիտի ամուսնացնեմ, եթե խայտառակ եղա, աղջիկներս էլ խայտառակ կլինեն»:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Եթե կանայք պասիվ են, ինչպե՞ս են նրանք մշակում դաշտերը և մեծացնում երեխաներին առանց իրենց ամուսինների:	Զաբելի ամուսինը պասի՞վ ամուսին է:
2. Եթե կանայք կարող են լինել ակտիվ, երբ անհրաժեշտ է հանուն իրենց երեխաների, ինչու՞ չպետք է կանայք ակտիվ լինեն հանուն իրենց:	Եթե Զաբելի ամուսինը վերադառնա, և Զաբելը նրան չընդունի, ինչու՞ պետք է գյուղը մեղադրի նրան, և ինչու՞ դա պետք է խայտառակություն լինի իր համար:
3. Հայաստանում այսօր կանայք ինչքանո՞վ ունեն ընտրություն և իրենց կյանքի նկատմամբ վերահսկողություն: Ինչքանո՞վ են ընտրությունը և վերահսկողությունը դեռևս սահմանափակ: Ինչու՞: 4. Ինչպե՞ս են ընտրությունը և վերահսկողությունն ազդում անհատների զարգացման վրա: 5. Ձորագյուղի ակտիվ և ինքնաբավ կանայք բացառությու՞ն են, թե՞ կանոն:	Հայաստանում այսօր տղամարդիկ ինչքանո՞վ ունեն ընտրություն և իրենց կյանքի նկատմամբ վերահսկողություն: Ինչքանո՞վ են ընտրությունը և վերահսկողությունը դեռևս սահմանափակ: Ինչու՞:

<u>Զրույցի ավարտ և հնարավորություն մեկնաբանությունների համար</u>

Մենք պետք է իմանանք, որ համատեղ իրականությունը կառուցվում է լեզվի և մշակույթի մեջ արմատացած ընդհանրացումների միջոցով: Դեռ ավելին, բարձր համատեքստի լեզուն, ինչպիսին հայերենն է, պահանջում և արտացոլում է անհատների միջև ավելի մեծ համապատասխանություն, որովհետև իրականության մասին համատեղ և ոչ արտաբերված

ենթադրությունները հաղորդակցվող իմաստի նախադրյալն են: Նման համապատասխանությունը գոյություն ունի սուբյեկտիվ իրականության և անհատականության հաշվին: Ինչպե՞ս է սա ազդում մեր անհատական զարգացման վրա:

Խմբերը և անհատները կարող են ուղարկել իրենց մեկնաբանությունները և առաջարկությունները bournazian@gmail.com էլեկտրոնային հասցեով: Հիշել խմբի անվանումը նշելու մասին:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ 03
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՆՀԱՏ՝ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ

Թեմա՝
Համագործակցությունը և մրցակցությունը, ինչպես նաև «ուրիշ»-ի սահմանումը

Նպատակ՝
Ուսումնասիրել համագործակցային և մրցակցային գործողությունները, ինչպես նաև դրանց հիմքում ընկած արժեքները և դրդապատճառները

Զարգացման զրույցի նախադրյալները՝

- զրույց և ոչ բանավեճ. շփվել անհատների հետ մեր տարբեր «օվկիանոսներն» ուսումնասիրելու համար:
- զարգացում. զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է: Ամեն մեկը և՛ նույնն է, և՛ տարբեր, ինչի համար էլ անհատները զարգանում են՝ իրենց և մյուսներին ճանաչելով և ավելի լավ ընտրություններ անել սովորելով:
- մշակույթը և լեզուն. համատեղ իրականությունը կառուցվում է լեզվի և մշակույթի մեջ արմատացած ընդհանրացումների միջոցով, ավելին, բարձր համատեքստի լեզուն ու մշակույթը պահանջում և արտացոլում են անհատների միջև ավելի մեծ համապատասխանություն, որպեսզի իմաստը հնարավոր լինի կիսել իրականության ընդհանուր, ոչ արտաբերելի հասկացությունների հիման վրա: Այսպիսի համապատասխանությունը գոյություն ունի սուբյեկտիվ իրականության ու անհատականության հաշվին: Դիտարկել՝ «ամոթ է … ոչ թե ամոթ, այլ սիրուն չի»:

Կրկնություն՝
Զրույց 01. Ամեն անհատ եզակի է, և իրականությունը սուբյեկտիվ է, բայց մենք կառուցում ենք համատեղ իրականությունը մշակույթի և լեզվի միջոցով ընդհանրացումների և նորմերի օգնությամբ:
Զրույց 02. Մինչ համատեղ շրջանակները կամուրջ են հանդիսանում սուբյեկտիվ անհատների միջև, կառուցված իրականություններն աշխարհի մասին մեկնաբանություններ են, որոնք հնարավոր է չարտացոլեն ամեն մեկի «օվկիանոսը» կամ իրականությունը և կարող է նաև լինեն սխալ կամ ոչ ճշմարիտ այն հասկացողությունների համեմատությամբ, որոնք առաջ են եկել գիտական մեթոդներով և փորձարկումների միջոցով:

<u>Զրույց 03</u>

Համագործակցությունը և մրցակցությունը, ինչպես նաև «ուրիշի» սահմանումը:
Ստորև մի գիտական հոդվածի ամփոփում է այն փաստի մասին, թե ինչպես է մարդկային էմոցիան թելադրում, թե երբ մենք մրցակցենք կամ համագործակցենք միմյանց հետ: Այն նաև մրցակցության և համագործակցության միջև հավասարակշռության անհրաժեշտության մասին է: Կարդալ և քննարկել:

«Հավասարակշռելով համագործակցությունը և մրցակցությունը մարդկային խմբերի միջև. էմոցիոնալ ալգորիթմների և էվոլյուցիայի դերը»[4]

Մարդկային խմբերի կամ հասարակությունների համար հիմնարար երկընտրանք է այն, թե արդյոք անհատները պետք է հոգ տանեն «իմ» (ինչը հանգեցնում է միմյանց հետ մեր մրցակցությանը), թե «մեր» (ինչը նշանակում է, որ մենք համագործակցում ենք միմյանց հետ) մասին: Իրականում անհատները և՛ մրցակցում, և՛ համագործակցում են, բայց տարբեր խմբերում և տարբեր հանգամանքների բերումով տարբեր չափով, քանի որ ինչպես անհատներն են նույնը և տարբեր, այնպես էլ խմբերն ու հասարակություններն են նույնը և տարբեր:

Էվոլյուցիոն հոգեբանության մասնագետները պարզել են, որ մարդու էմոցիաները նման են համակարգչային ծրագրավորման և այդ պատճառով հիմնականում նույնն են բոլորիս համար: Այդ ծրագրավորմամբ է պայմանավորված, թե երբ ենք մենք մրցակցում կամ համագործակցում: Կան չորս հիմնական մեխանիզմներ, որոնցից երկուսը մրցակցության (ռեսուրսների ձգտելը և կարգավիճակը) և մյուս երկուսը համագործակցության համար են (փոխադարձությունը և խմբի ինքնությունը): Բոլոր անհատները մրցակցում են միմյանց հետ ռեսուրսների համար հանուն կարիքների կամ այն բաների, որ ցանկանում են ունենալ, և կարգավիճակի համար, ինչը թելադրում է, թե ինչպես են իրենք ընկալվում մյուսների համեմատությամբ: Ռեսուրսների և կարգավիճակի ձգտելը մրցակցային հիմունքներ ունեն: Միևնույն ժամանակ բոլոր անհատները համագործակցում են փոխադարձությամբ պայմանավորված հարաբերությունների հիման վրա, ինչպես օրինակ հավասարապես կիսվելը ընկերների հետ կամ խմբերի ներսում՝ ընտանիքների կամ գյուղի կամ հարևանության ներսում: Փոխադարձությունը և խմբի պատկանելությունը համագործակցային հիմունքներ ունեն: Ուսումնասիրությունը նաև ցույց է տվել, որ խմբերը կամ կոլեկտիվները ամենաարդյունավետն են գործում, երբ խմբի անհատները հասնում են հավասարակշռության մրցակցության և համագործակցության միջև: Դիտարկել այստեղ պատկերված շրջանակները:



[4] Christoph H. Loch, D. Charles Galunic and Susan Schneider (2006) «Balancing Cooperation and Competition in Human Groups: The Role of Emotional Algorithms and Evolution», *Managerial and Decision Economics*, հատոր 27, թիվ 2/3, էջ. 217-233:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Ինչպե՞ս կարող են մրցակցության և համագործակցության չորս մեխանիզմները լինել համընդհանուր և մշակութային առումով կոնկրետ:	Ճիշտ այնպես, ինչպես անհատներն են նույնը և տարբեր, մարդկանց խմբերը նույնպես նույնն են և տարբեր: Եվ քանի որ մրցակցություն/համագործակցություն դինամիկան հիմնված է էմոցիաների վրա, որը բոլոր մարդկանց դեպքում ընդհանուր ծրագրավորումն է, այս մեխանիզմներն ընդհանուր են բոլոր մարդկանց համար, բայց, կախված հանգամանքներից, տարբեր կերպ են աշխատում տարբեր խմբերի դեպքում:
2. Որքանո՞վ է հայ մշակույթը կամ հասարակությունն այսօր հավասարակշռում մրցակցության և համագործակցության միջև:	Հայաստանյան փորձից ելնելով՝ ի՞նչ օրինակներ կարող եք բերել մրցակցության և համագործակցության միջև անհավասարակշռության վերաբերյալ:
3. Խաղերի տեսությունը փոխազդեցության մասին տեսություն է: Վերջինս համաձայն՝ գոյություն ունի երկու տիպի գործարք՝ հաղթանակ/պարտություն, որտեղ մեկը հաղթողն է, իսկ մյուսը՝ պարտվողը կամ հաղթանակ/հաղթանակ, որտեղ երկու կողմերն էլ հաղթող են: Եթե վաճառողը ցածր որակի ապրանք է վաճառում բարձր գնով, կա հաղթող և պարտվող: Եթե վաճառողը վաճառում է որակյալ ապրանք արդար գնով, իսկ գնորդն այնքան գոհ է լինում, որ նաև երաշխավորում է վաճառողին ուրիշների մոտ, նրանք երկուսն էլ հաղթում են: Հաղթանակ/հաղթանակ գործարքները արտացոլում են սիմբիոզ՝ փոխհարաբերություն, որը շահավետ է երկու կողմերի համար էլ: Ո՞ր տեսակի գործարքն է ավելի հիմնված մրցակցության և ո՞րը՝ համագործակցության վրա:	Հաղթանակ/պարտությունը խիստ մրցակցային է իր բնույթով: Իսկ հաղթանակ/հաղթանակն ավելի համագործակցային է, քանի որ այն հիմնված է փոխադարձության վրա. այն փոխազդեցություն է կամ փոխանակում, որի արդյունքում երկու կողմերն էլ հաղթում են: Այսպիսով, փոխադարձությունն այն է, երբ մենք կիսվում ենք և փոխանակում: Փոխադարձությունը կարող է լինել հաղթանակ/հաղթանակի փոխանակում, որովհետև գործարքը փոխշահավետ է:
• համեմատելով հաղթանակ /պարտությունը և հաղթանակ/ հաղթանակը՝ ո՞րն է արտացոլում կարճաժամկետ հեռանկար: • հաղթանակ /պարտություն և հաղթանակ/ հաղթանակի միջև, ո՞րն է արտացոլում երկարաժամկետ հեռանկար: Ի՞նչու:	Ընդհանուր առմամբ հաղթանակ/պարտությունը կարճաժամկետ է, իսկ հաղթանակ/հաղթանակը՝ երկարաժամկետ:

Հարցեր	Զրույցի նպատակներ
5. Երբ փոխշահավետ հարաբերությունները երկարատև են, դա կոչվում է համակեցություն: Բնության մեջ համակեցությունն այն է, երբ մեղուն ծաղկից նեկտար է ստանում և փոխարենը՝ փոշոտում ծաղիկը: Անհատների միջև նույնպե՞ս կան համակեցային հարաբերություններ:	Ծնողների և երեխաների միջև հարաբերությունը համակեցության օրինա՞կ է: Եթե այո, ապա այդ հարաբերությունը համակեցային է ծնողի և երեխայի դերի կամ կարգավիճակի պատճառո՞վ, թե՞ համակեցության աստիճանը երկարաժամկետ կտրվածքով կախված կլինի երկու անհատների միջև հարաբերության որակից:
6. Դիտարկելով հաղթանակ /պարտությունը և հաղթանակ/ հաղթանակը՝ ո՞ր հեռանկարն է գերակշռում գործարքներում կամ անհատների միջև փոխհարաբերություններում հայ իրականության մեջ և ինչու՞:	• ընդհանուր առմամբ հայերը մտածում են ավելի շատ կարճաժամկե՞տ, թե՞ երկարաժամկետ կտրվածքով: Ինչու՞ է այդպես: • ընդհանուր առմամբ հայերը վստահու՞մ են միմյանց: Ինչու՞:

Վերոնշյալ հարցերն ու զրույցը հիմնականում ուսումնասիրեցին փոխադարձությունը: Դիտարկել ստորև բերված գրաֆիկի ընդհանուր կետերը նրա վերաբերյալ, թե ինչպես են մրցակցային և համագործակցային շրջանակները փոխկապակցվում:



- Ավելի շատ ռեսուրսներ ձեռք բերելը կարող է բարձրացնել մարդու կարգավիճակը, և ավելի բարձր կարգավիճակ ունենալը կարող է շատացնել մարդու ռեսուրսները:

- Փոխադարձությունն ստեղծում է էլ ավելի մեծ փոխադարձություն, եթե իհարկե չկա ռեսուրսների պակաս:

- Ավելի մեծ փոխադարձություն նշանակում է անհատների միջև ավելի քիչ տարբերություն՝ ռեսուրսներով և կարգավիճակով պայմանավորված: Կարևոր է նշել, որ անհատների միջև տարբերությունն ավելի քիչ կլինի, իսկ ընդհանուր ռեսուրսներն՝ ավելի շատ, քանի որ համագործակցությունը և համակեցությունը կարող են ապահովել երկարաժամկետություն՝ ի տարբերություն մրցակցության:

Խմբի անհատականության ալգորիթմը և արտաքին սպառնալիքները

Բացի փոխադարձությունից՝ համագործակցության մյուս մեխանիզմը խմբի ինքնությունն է: «Խմբի ինքնության» հետ կապված խնդիրն այն է, որ խմբի գոյությունը պայմանավորված է խմբի ներսում մարդկանց առկայությամբ՝ մյուսներին մեկուսացնելու հաշվին: Դիտարկել հետևյալ գրաֆիկան և հետազոտողների կողմից արված եզրակացությունները.



- Խմբային ինքնության ուժեղ զգացումը նպաստում է խմբի ներսում համագործակցությանը:

- Որքան ուժեղ լինի խմբային ինքնությունը, այնքան ցածր կլինի խմբի անդամների միջև մրցակցությունը ռեսուրսների և կարգավիճակի համար՝ հանգեցնելով ավելի մեծ համագործակցության:

- Խմբի ինքնությունն ավելի ուժեղ է, երբ խումբն ընկալում է նրանց, ովքեր խմբից դուրս են՝ որպես արտաքին սպառնալիք կամ թշնամի, և նման ընկալումը խմբին դարձնում է ավելի բացառիկ, ինչը նշանակում է, որ ինքը գնալով մերժում և մեկուսացնում է իրեն իրենից դուրս գտնվողներից:

- Այսպիսով, խմբի ինքնության և արտաքին սպառնալիքի ընկալումները նպաստում են միմյանց՝ նրանցից յուրաքանչյուրը դարձնելով մյուսն ավելի ուժեղ:

- Սա կարող է շահագրգռել անհատներին, բայց կարող է նաև խմբին ստիպել կորցնել իրականության զգացումը, քանի որ նրանք սկսում են ավելի ու ավելի շատ սպառնալիքներ տեսնել:

Վերջապես, հետազոտողները եզրակացնում են հետևյալը.

«Խմբի ինքնության չափից շատ արտահայտված լինելը կարող է նաև հանգեցնել ծայրահեղության: Խմբի անդամների հանդեպ նվիրվածության և խմբից դուրս գտնվողների հանդեպ ատելության համադրությունը դրդել է «կամիկաձե» օդաչուներին իրենց ինքնաթիռները մխրճել նավերի մեջ, իսկ թամիլցի ինքնասպան ահաբեկիչներին՝ սպանել և՛ նրանց, ովքեր ընկալվում են որպես թշնամիներ, և՛ հենց իրենց: Ամփոփ՝ կան վկայություններ, որ բոլոր էմոցիոնալ ալգորիթմները կարող են հասնել ծայրահեղության, եթե չհավասարակշռվեն այլոց կողմից: Մի կողմ թողնելով միջավայրի հնարավորությունը, որը նպաստում է խմբերում

ծայրահեղ վարքագծին՝ հավասարակշռությունն ամենահավանական արդյունքն է, քանի որ ծայրահեղության հետևանքները կործանարար են անհատների և խմբերի համար»[5]:

Այլ կերպ ասած՝ խմբի ինքնության չափից շատ արտահայտված լինելը հանգեցնում է բռնության, որը խմբին պատկանող անհատների կողմից ընկալվում է արդարացված: Բացի այդ, խմբի շրջակա միջավայրը կարող է կամ խրախուսել, կամ դատապարտել նման վարքագիծը: Երբ ներխմբային հոգեկերտվածքն այնքան ուժեղ է, որ այլ մեխանիզմների հետ հավասարակշռության մեջ չէ, կարող է հանգեցնել կործանարար հետևանքների խմբի անհատների համար, ինչպես նաև հենց խմբի համար:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Դուք երբևէ մեկուսացվե՞լ եք կամ արժանացե՞լ եք անարդար վերաբերմունքի, քանի որ խմբի ներսից չեք եղել: Կարո՞ղ եք մի խմբի օրինակ բերել, որից դուք մեկուսացվել եք և ինչպե՞ս եք զգացել այդ պատճառով:	
2. Փոխադարձության և խմբի ինքնության տարբերակներից ո՞ր համագործակցության մեթոդն է ավելի տարածված Հայաստանում:	Մաֆիայի ցանցը հիմնված է խմբի ինքնությա՞ն, թե՞ սոլիդարության վրա: Քաղաքական կուսակցության ցանցը հիմնված է խմբի ինքնությա՞ն, թե՞ սոլիդարության վրա:
3. Հայ լինելը նու՞յնն է, ինչ պատկանել մի խմբի, որից մյուսները մեկուսացված են: 4. Հայաստանում կա՞ն փաստեր խմբի ծայարահեղական լինելու մասին: Որո՞նք են այդ օրինակները:	Երբ որ «օտար» ենք ասում, չե՞նք համարում, որ մյուսը մեր խմբից դուրս է մնում: Շրջապատը խրախուսու՞մ, թե՞ դատապարտում է խմբի ծայրահեղացումը Հայաստանում: Ինչպե՞ս:

<u>Եզրակացություն</u>

Այս զրույցից հետո մենք պետք է ավելի զգոն լինենք, թե երբ ենք մրցակցում կամ համագործակցում, իսկ երբ են մյուսները մրցակցում կամ համագործակցում, և սա պետք մեզ օգնի ավելի լավ ընտրություն կատարել մյուսների հետ շփվելու եղանակի հարցում: Պետք է նաև սկսենք մտածել այն մասին, թե ինչպես ենք մենք սահմանվում մյուսների կողմից՝ պայմանավորված նրանով, թե, ըստ իրենց, որ խմբին ենք պատկանում, ինչպես նաև՝ արդյոք մենք նույնպես սահմանում ենք ուրիշներին՝ ըստ խմբերի: Այլ անհատներին սահմանելը խմբավորելու միջոցով արդարացի՞ է՝ հաշվի առնելով «օվկիանոսը», որն անհատական է:

Հարցերն ու մեկնաբանությունները կարելի է ուղարկվել bournazian@gmail.com էլէկտրոնային հասցեով:

[5] տե՛ս նույն տեղում, էջ 229:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ 04
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՆՀԱՏ՝ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ

Թեմա՝
Անհատի և մյուսների միջև փոխադարձությունը, անհատապես և հավաքական կերպով: Երբ զոհաբերել և երբ ոչ:

Նպատակ՝
Ուսումնասիրել փոխադարձությունը և թե ինչպես են անհատները ներդրում կատարում միմյանց մեջ և մի գործում, որն ուղղված է բոլորի բարօրությանը՝ քննության առնելով զոհաբերության սահմանները:

Զարգացման զրույցի նախադրյալները՝
- զրույց և ոչ բանավեճ. շփվել անհատների հետ՝ ուսումնասիրելու մեր տարբեր «օվկիանոսները»:
- զարգացում. զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է. ամեն մեկը և՛ նույնն է, և՛ տարբեր, ինչի համար էլ անհատները զարգանում են իրենց և մյուսներին ճանաչելով և ավելի լավ ընտրություններ անել սովորելով:
- մշակույթը և լեզուն. համատեղ իրականությունը կառուցվում է լեզվի և մշակույթի մեջ արմատացած ընդհանրացումների միջոցով, ավելին, բարձր համատեքստի լեզուն ու մշակույթը պահանջում և արտացոլում են ավելի մեծ համապատասխանություն անհատների միջև, որպեսզի իմաստը հնարավոր լինի կիսել իրականության ընդհանուր, ոչ արտաբերելի հասկացությունների հիման վրա: Այսպիսի համապատասխանությունը գոյություն ունի սուբյեկտիվ իրականության ու անհատականության հաշվին: Դիտարկել՝ «ամոթ է … ոչ թե ամոթ, այլ սիրուն չի»:

Կրկնություն՝
Զրույց 01. Ամեն անհատ եզակի է, և իրականությունը սուբյեկտիվ է, բայց մենք կառուցում ենք համատեղ իրականությունը մշակույթի և լեզվի միջոցով ընդհանրացումների և նորմերի օգնությամբ:
Զրույց 02. Մինչ համատեղ շրջանակները կամուրջ են հանդիսանում սուբյեկտիվ անհատների միջև, կառուցված իրականություններն աշխարհի մասին մեկնաբանություններ են, որոնք հնարավոր է չարտացոլեն ամեն մեկի «օվկիանոսը» կամ իրականությունը և կարող է նաև լինեն սխալ կամ ոչ ճշմարիտ այն հասկացողությունների համեմատությամբ, որոնք առաջ են եկել գիտական մեթոդներով և փորձարկումների միջոցով:
Զրույց 03. Բոլոր մարդիկ մրցակցում և համագործակցում են: Անհատները ձգտում են ունենալ ռեսուրսներ և կարգավիճակ: Անհատները համագործակցում են խմբերի ներսում, իսկ առհասարակ՝ փոխադարձաբար արձագանքում են: Բայց խմբակային մտածել նշանակում է, որ մենք մեկուսացնում ենք մյուսներին և ստեղծում ենք մեր խմբից դուրս գտնվող անձանց մասին կարծրատիպ, որը հանգեցնում է ծայրահեղ վարքագծի, ինչն էլ վնասում է բոլորին: Լուծումը փոխադարձության հիման վրա և առանց կանխակալ վերաբերմունքի բոլորի հետ համագործակցելն է:

<u>Զրույց 04</u>

Ալտրուիզմ՝ կույր մարդասիրություն. մենք ներդրու՞մ ենք կատարում մեկս մյուսի մեջ, անհատապես և հավաքական կերպով:

Մեր նախորդ զրույցների ընթացքում ուսումնասիրեցինք անհատական զարգացումը և

անհատական ընտրությունը: Ուսումնասիրեցինք մրցակցությունը և համագործակցությունը ու նրանց չորս հիմնական մեխանիզմները: Ինչպես տեսանք՝ համագործակցության մեխանիզմներից մեկը խմբի ինքնությունն է, բայց այս մեխանիզմն ունի նաև իր բացասական կողմերը: Այս բաժնում մենք ուսումնասիրում ենք փոխադարձությունը: Մեր հիմնարար փորձը վերաբերում է անհատների միջև փոխադարձությանը: Բայց կարո՞ղ է փոխադարձություն լինել անհատի և հավաքականի միջև: Կարո՞ղ են անհատները ներդնել մյուսների մեջ՝ նվիրվելով որևէ գործի: Երբ անհատները ներդրում են կատարում ինչ-որ գործում, ո՞րը պետք է լինի նրանց զոհաբերության սահմանը: Կարդալ հետևյալ պատմությունը և քննարկել:

«Համագործակցությունն այն է, ինչը մեզ մարդ է դարձնում»[6]

2013 թվականի փետրվարի 17-ին՝ առավոտյան 2: 30-ի սահմաններում, ԱՄՆ Ռազմաօդային ուժերի ակադեմիայի երրորդ կուրսի կուրսանտ Գարեթ Օհանլոն դրսում տոնում էր իր ծննդյան 22-րդ տարեդարձը Նյու Յորքում: Նա և իր քույրը մետրոյում սպասում էին գնացքին, երբ հանկարծակի լռությունը պատեց հարթակը, որին հաջորդեց մի սուր ճիչ: Մարդիկ նայեցին ռելսերին:

Օհանլոն շրջվեց և տեսավ մի մարդու, ով դեմքով ընկած էր ռելսերի վրա: «Դրանից հետո ես ռելսերի վրա էի և վազում էի դեպի նրա կողմը», - ասում է նա: «Ես, անկեղծ ասած, չէի մտածում այդ պահին»:

Օհանլոն ճանկեց անգիտակից մարդուն ուսերից, բարձրացրեց նրա մարմնի վերին հատվածը ռելսերից, բայց դժվարացավ նրան շարժել: Վերջինս չափազանց ծանր էր: Ըստ կայարանի ժամացույցի գնացքը պետք է ժամաներ երկու րոպեից էլ ավելի շուտ: Օհանլոյի քույրը հարթակից գոռում էր, որ նա փրկի ինքնիրեն:

Հանկարծ մյուսներն օգնության հասան. անձնական մարզիչ Դենիս Քոթրինգթոն կրտսերը և նրա ընկեր Մեթ Ֆոլեյը նույնպես թռել էին օգնության. «Մենք բռնեցինք նրան, մեկը՝ ոտքից, մեկն՝ ուսերից, մյուսն էլ՝ կրծքավանդակից», - ասում է Օհանլոն: Նրանք հասցրին մարդուն մինչև հարթակի եզրը, որտեղ տասնյակ կամ ավելի մարդիկ բարձրացրին նրան վերև: Ավելի շատ օգնության ձեռքեր մեկնվեցին դեպի փրկարարները՝ նրանց նույնպես օգնելով անտանգ վեր բարձրանալ:

Փրկության արդյունքում Օհանլոն ասում է, որ զարմացել է, որ այդքան մարդիկ հարցրել են իրեն, թե ինչու է ինքը գնացել այդ քայլին. «Ես ապշում եմ այդ հարցից», - ասում է նա: Նրա կարծիքով ցանկացած մեկն այդպես կվարվեր: «Ես գտնում եմ, որ դա նորմալ արձագանք է», - ասում է նա: «Ինձ համար դա հենց այն է, ինչ պետք է անեն մարդիկ»:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Այս արտակարգ իրավիճակում անհատներն ունե՞ին միմյանց հետ խորհրդակցելու կամ հաղորդակցվելու կարիք: Արդյո՞ք մեկ անհատ կազմակերպեց կամ իրականացրեց փրկարարական աշխատանքը: Ի՞նչ է սա ասում մարդկային բնության մասին:	Սա համագործակցություն էր հիմնված փոխադարձությա՞ն, թե՞ խմբի ինքնության վրա: • եթե ձեր պատասխանն է խմբի ինքնութուն, ո՞վքեր են խմբի անդամները և հակառակը՝ խմբից դուրս գտնվողները:

[6] Kat McGowan, ապրիլ 2013, http://nautil.us/issue/1/what-makes-you-so-special/cooperation-is-what-makes-us-human

Հարցեր	Զրույցի նպատակներ
	• եթե չկան խմբից դուրս գտնվողներ, դա փոխադարձությո՞ն էր:
2. Դուք երբևէ ականատես եղե՞լ եք նմանատիպ համագործակցային գործողության: Ինչքանո՞վ է նման համագործակցային գործողությունն ի հայտ եկել հայկական հասարակության մեջ:	Հայաստանում համագործակցային գործողությունների ձեր օրինակները հիմնված են փոխադարձությա՞ն, թե՞ խմբի ներսի/դրսի հետ պայմանավորված վարքագծի հիման վրա:
3. Եթե դուք ռիսկի եք դիմում ձեր ընտանիքի անդամի համար, դա խմբի ինքնությունից դրդված համագործակցությո՞ն է: • դուք այդ ռիսկին կդիմեք ընտանիքի ցանկացա՞ծ անդամի համար, թե՞ կախված է անհատից: • եթե դա կախված է անհատից, դա փոխադարձությո՞ն է: • ընտանիքի անդամի համար ռիսկի դիմելը հիմնվա՞ծ է դերակատարման և սոցիալական սպասելիքի վրա: Դա պատճա՞ռ է:	Էվոլյուցիոն տեսության մասնագետներն ապացուցել են, որ հոմոսափիենսը գոյատևել և զարգացել է, որովհետև մարդիկ զբաղվել են «երեխայի համագործակցային խնամքով», ինչը նշանակում է, որ անհատները հոգ էին տանում մյուսների երեխաների մասին, նույնիսկ եթե գենետիկ կապ չկար: Սա ստեղծել է Էվոլյուցիոն առավելություն: Եթե անհատը ներդնում է ուրիշի երեխայի մեջ, սա փոխադարձությո՞ն է: Երեխաների մեջ ներդնելը նմա՞ն է որևէ գործի մեջ ներդրման, ապագայի համար ներդրման:
4. Որո՞նք են անհատական դրդապատճառները համագործակցային գործողության այն տեսակի համար, որը ներկայացվում է վերոնշյալ պատմությունում: Այդպիսի դրդապատճառները համընդհանու՞ր են, թե՞ կոնկրետ մշակութային:	Փոխադարձությունը համընդհանուր է: Փոխադարձություն նշանակում է, որ անհատները հավասա՞ր են: • մարդիկ չե՞ն կիրառում փոխադարձություն, որպեսզի այլոք նույն կերպ վարվեն իրենց հետ, օգնեն իրենց, երբ իրենք օգնության կարիք ունեն: Սա չի՞ հաստատում, որ անհատները հավասար են: • մենք բոլորս ծնվում և մեռնում ենք միայնակ: Մենք ավելի շատ հավասա՞ր չենք, քան անհավասար:

Հարցեր	Զրույցի նպատակներ
5. Այս պատմությունը հերոս ունի՞: Բոլոր պատմությունները հերոսներ ունե՞ն: Ինչու՞:	Իրականությունը փորձառություն է, և դա անհատի փորձառությունն է: Ցանկացած անհատ իր իրականությունն է ապրում: Հասարակության ամենատարրական միավորը անհատն է: Պատմությունը փորձառություն է, այդ պատճառով այն սովորաբար ներկայացվում է որպես մեկ հիմնական անձնավորության հետ առնչվող իրադարձությունների ամբողջություն: Քանի որ մենք իրականությունն ապրում ենք որպես անհատներ, պատմությունը հասկանում ենք որպես անհատի փորձառություն: Երբ լսում ենք պատմություն, նրա հետ հարաբերվում ենք այն տեսանկյունից, թե ինչպես մենք՝ որպես հիմնական կերպար կամ հերոս, այն կվերապրեինք:
6. Հերոսը դա մենա՞կ արեց: • ցանկացած հերոս մենա՞կ է ինչ-որ բանի հասնում: • պատմության՝ հերոսական կողմը խաբուսի՞կ է:	Վարդան Մամիկոնյանն անհատ է, ով խորհրդանշում է ազգի պայքարն ու գոյատևումը: Բայց Վարդան Մամիկոնյանը երբեք մենակ չի եղել և ոչնչի մենակ չի հասել: Որպես հերոս՝ նրա ուժը պայմանավորված է նրանով, որ նա մենակ չի եղել, այլ նրան օժանդակել են մյուսները:
7. Հերոսական պատմությունը կամ հերոսական մշակույթն ուսուցանում է համագործակցայի՞ն գործողություն, թե՞ անհատական գործողություն: Այսպիսի ասույթները խթանում են համագործակցությու՞նը, թե՞ մրցակցությունը:	Հերոսական պատմությունները հաճախ թյուր տեղեկություն են տալիս իրականության մասին: Հերոսական պատմությունները կենտրոնանում են անհատի ուժի վրա, որը պատկերվում է, երբ անհատը հաղթահարում է մարտահրավերը կամ մրցակցում է թշնամու հետ: Սովորաբար համագործակցային տարրն անտեսվում է: Բայց վերոնշյալ պատմությունում կամ Ավարայրի պատմությունում ցանկացած հաղթանակ ավելի հավանական է, որ պայմանավորված է բազմաթիվ անհատների սոլիդարության վրա ստեղծված համագործակցությամբ: Համագործակցությունը հաջողության ամենաարժեքավոր տարրն է, բայց հազվադեպ է հավուրպատշաճի ներկայացվում:

Դեյվիդ Սլոան Ուիլսոնի «Ալտրուիզմը գոյություն ու՞նի»[7] գրքի ամփոփումը

«Ալտրուիզմը ուրիշների բարօրության համար մտահոգությունն է, որն ինքնանպատակ է»: Ուրիշի համար ինչ-որ բան անելը կարող է անհատի համար արժենալ՝ սկսած այնպիսի փոքր բանից, ինչպիսին ջանքն է, մինչև այնպիսի մեծ բան, ինչպիսին սեփական կյանքը վտանգելն է: Հաշվի առնելով, որ էվոլյուցիոն տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ բնական ընտրությունն առաջ է բերում հատկանիշներ, որոնք օգնում են անհատի գոյատևմանը և վերարտադրությանը՝ բնական ընտրությունը կարծես թե հակասում է անձնվիրության հատկանիշին: Բացի այդ, նրանք, ովքեր ժխտում են ալտրուիզմը, պնդում են, որ չնայած կարող են լինել ալտրուիստական գործողություններ՝ դրդապատճառները ծառայում են սեփական անձին (այսինքն, եսասիրության, սեփական կերպարի, հեղինակության համար են և այլն): Սակայն եթե մենք նայենք ավելի լայն հեռանկարով, ապա կտեսնենք, որ, քանի որ նման դրդապատճառներն ու էմոցիաները հանգեցնում են ալտրուիստական գործողությունների, նրանք անմիջական (անուղղակի) պատճառն են ալտրուիզմի, իսկ գործողություններն իրենք՝ վերջնական (ուղիղ) պատճառը՝ դրանով իսկ ժխտելով որևէ հակասություն: Բացի այդ, ավելի լայն, հավաքական հեռանկարը բացահայտում է, որ չնայած անհատի համար գին արժենալուն՝ կա օգուտ ընդհանուրի համար, որը նաև օգտակար է կոլեկտիվի ներսում գտնվող անհատի համար, և դրանում է կայանում էվոլյուցիոն առավելությունը:
Այլ կերպ ասած՝ <u>ալտրուիզմը՝ կույր մարդասիրությունը, գործողության տեսանկյունից վերլուծելիս, սերտորեն կապված է խմբի ֆունկցիոնալ կազմակերպվածության հետ, այն ուժեղացնում է խմբի ֆունկցիոնալությունը</u>: Մարդկանց՝ միմյանց ծառայություններ մատուցելու պատճառն այն է, որ մենք սոցիալական տեսակ ենք, և փոխադարձ օգնություն է անհրաժեշտ միասին իրականացնելու համար այն, ինչ չենք կարող իրականացնել միայնակ: Գործողությունների ցանկը, որոնց համար անհրաժեշտ է եղել փոխադարձ աջակցություն մինչև գյուղատնտեսության ի հայտ գալը, ընդգրկում է երեխայի խնամքը, որսորդությունը և հավաքչությունը, գիշատիչների դեմ պաշտպանությունը և պաշտպանությունն այլ մարդկային խմբերից ու հանցանքները նրանց դեմ: Գյուղատնտեսության ի հայտ գալը հանգեցրել է ինքնուրույն աճող ցիկլի ռեսուրսների արտադրության և ավելի մեծ հասարակությունների հետ աշխատանքի բաժանման միջև՝ հանգեցնելով ժամանակակից «մեգահասարակությունների»: Այսօր մենք այնքան կախված ենք այլոց գործողություններից, որ այլևս չենք կարող գոյատևել ինքնուրույն՝ ինչպես մրջյունը, որն անջատված է իր բանակից:

Կենսաբանական կամ հասարակական համակարգի բոլոր մակարդակներում կան բազմաթիվ անհատների օրինակներ, ովքեր կատարում են անհատական առաջադրանքներ, որոնք նպաստում են հավաքական առաջադրանքին իրենց պատասխան կամ որոշիչ ազդեցությամբ կամ արդյունքով: Միջատների գաղութները, ինչպիսիք են մրջյունները, մեղուները, կրետները և տերմիտները, նման օրինակներ են: Կենսաբաններն այժմ գիտեն, որ կյանքն ինքնին զարգացել է հենց այս ճանապարհով. առանձին բջիջներ միացել են սիմբիոտիկ կապերով՝ փոխշահավետ կապերով՝ ի վերջո դառնալով օրգաններ՝ իրականացնելով հատուկ խնդիրներ. ստացվում է՝ բջջի տեսանկյունից <u>մարդկային օրգանիզմը «համակարգված սոցիալական գործընթաց է բջիջների միջև»</u>: Նմանապես, մարդիկ ֆունկցիոնալ համակարգում միմյանց հետ հարաբերվում են սոցիալական առումով: Ալտրուիզմը էվոլյուցիոն առավելություն է կոլեկտիվի համար, որն ապահովում է բարօրություն անհատների մեծ մասի համար:

[7] David Sloan Wilson, *Does Altruism Exist*, US, Yale University Press, 2015:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Ալտրուիզմը բնածի՞ն է, թե՞ մշակույթով է պայմանավորված:	Էվոլյուցիոն հոգեբանության մասնագետներն ապացուցել են, որ հոմոսափիենսը գոյատևել և զարգացել է, որովհետև մարդիկ զբաղվել են «երեխայի համագործակցային խնամքով», ինչը նշանակում է, որ անհատները հոգ էին տանում ուրիշների երեխաների մասին, եթե նույնիսկ գենետիկ կապ չկար: Սա ստեղծել է Էվոլյուցիոն առավելություն: Երբ անհատը ներդրում է կատարում ոչ իր սեփական երեխայի մեջ, դա փոխադարձությու՞ն է: Երեխաների մեջ ներդրում անելը նմա՞ն է ինչ-որ գործում ներդրում անելուն, քանի որ դա ներդրում է ապագայի համար:
2. Ո՞րն է ալտրուիզմի և համագործակցության միջև տարբերությունը:	Համագործակցությունը և ալտրուիզմը շատ նման են թվում իրար: Այնուամենայնիվ, մենք սովորաբար օգտագործում ենք համագործակցություն եզրույթը՝ նկարագրելու այն փոխազդեցությունը, որտեղ երկու կամ ավելի անձանց համար օգուտն ակնհայտ է կարճաժամկետ առումով: Ալտրուիզմի դեպքում անհատի օգուտը, ով ռիսկի է դիմում կամ զոհաբերության գնում, կարող է ակնհայտ չլինել, քանի որ այն կարող է լինել երկարաժամկետ կտրվածքով կամ անուղղակի: Դա ներդրում է:

Հարցեր	Զրույցի նպատակներ
3. Անհատները հասնում են ավելիին համագործակցությա՞ն, թե՞ մրցակցության շնորհիվ:	Մրցակցությունն ավելի ուղղակիորեն օգուտ է բերում մեկ անհատի, և կարգավիճակի ու ռեսուրսների տարբերությունները բաժանում են անհատներին հարստության հիման վրա և այլն: Այսպիսի բաժանումները կարող են պատճառ հանդիսանալ ներքին կոնֆլիկտի կամ ավելի թույլ կոլեկտիվի ձևավորման: Խմբի ինքնության հիման վրա համագործակցությունը կարող է բարձրացնել խմբի ներսում համագործակցությունը հօգուտ մեկ խմբի, բայց մեկ այլ խմբի (խմբերի) հաշվին: Իսկ փոխադարձության հիման վրա համագործակցությունը շահավետ է փոխազդող անհատների համար, հաստատում է անհատների միջև հավասարություն: Բացի այդ, մեկ անհատի ցուցաբերած ալտրուիզմն օգուտ է բերում մեկ կամ ավելի անհատների և ամբողջ կոլեկտիվի համար. ավելին, եթե նայենք երկարաժամկետ կտրվածքով՝ կոլեկտիվին հասած օգուտը կարող է նաև ձեռնտու լինել այն անհատներին, ովքեր ռիսկի են դիմում կամ զոհաբերություն կատարում, քանի որ անհատը կոլեկտիվի մաս է:

«Star Trek»-ը մթության մեջ

«Star Trek»-ը տիեզերական հետախույզների մասին ֆիլմաշար է: «Star Trek»-ի հետևյալ տեսարանում տիեզերանավի անձնակազմն այցելում է հեռավոր, օտար մոլորակ և տեսնում, որ հրաբուխը մոտ է ժայթքելուն: Ժայթքունը կոչնչացնի մարդու տեսակին նման տեսակը և նրա զարգացող քաղաքակրթությունը: «Star Trek»-ի «գլխավոր ցուցումն» արգելում է անձնակազմին շփում ունենալ որևէ զարգացող քաղաքակրթության հետ կամ ազդեցություն ունենալ նրա վրա: Չնայած սրան՝ անձնակազմը քայլեր է ձեռնարկում իրենց գերժամանակակից տեխնոլոգիան օգտագործելու ուղղությամբ առանց բնիկների իմացության հրաբուխը սառեցնելու համար: Սակայն անձնակազմի ծրագիրը չի աշխատում, իսկ անձնակազմի անդամներից մեկը՝ Սփոք անունով, այժմ հրաբխի ներսում՝ ծանծաղուտի մեջ խրված է: «Էնթրփրայզ» տիեզերանավն ունի ծանծաղուտում խրված իր անձնակազմի անդամին հեռակա տեղափոխելու տեխնիկա, բայց ոչ տվյալ վայրից: Սփոքին փրկելու դեպքում նավը պետք է երևա բնիկների համար: Արդյո՞ք տրամաբանական է, որ ծանծաղուտի մեջ խրված անձնակազմի անդամը պետք է զոհաբերվի հանուն զարգացող քաղաքակրթության: Ո՞ր ռիսկերն են «Star Trek»-ի անձնակազմի համար ընդունելի մեկ անհատի փրկել փորձելու համար:

Դիտել տեսանյութը, բարձրաձայն կարդալ սցենարի ստորին թարգմանությունը, ապա կրկին դիտել տեսանյութը՝ ինչպես հարմար կգտնեք:
Տեսանյութ՝ 5:45 - 9:53

http://fmovies.to/film/star-trek-into-darkness.x9zv/qkxqp3

Տեսարանի նկարագրություն. Սփոքը հրաբխի ներսում է: Հրաբուխն սկսում է ժայթքել ու ոչնչացնել բնիկների գյուղը:

Սցենար՝

Կապիտան - Լեյտենա՛նտ, մենք ունե՞նք դեպի Սփոքը տանող բաց ուղի:
Լեյտենանտ - Արձակվող ջերմությունն այրում է կապի միջոցները, բայց մենք դեռ կապ ունենք:
Կապիտան - Սփո՞ք:
Սփոք - Ես ակտիվացրել եմ սարքը, կապիտա՛ն, երբ վերջնահաշվարկն ավարտվի, հակազդեցությունը պետք է չեզոքացնի հրաբուխը:
Բժիշկ - Եվ դա պատրաստվում է նրան չեզոցաքնել:
Կապիտան - Մենք դեռ ունե՞նք փոխադրողների կիրառության հնարավորություն:
Մյուսները – Ոչ: Ոչ այս մագնիսական դաշտերում:
Կապիտան- Ես պետք է Սփոքին նավ վերադարձնեմ, տվե՛ք ինձ մի ճանապարհ դա անելու համար:
Նավիգատոր - Գուցե եթե ունենայինք ուղիղ տեսադաշտ (այսինքն՝ անմիջապես հրաբխի վերևում լինեինք)...
Ճարտարագետ - Սպասի՛ր, փոքրիկ մարդ, մենք խոսում ենք ակտիվ հրաբխի մասին: Պարո՛ն, եթե դա ժայթքի, ես չեմ կարող երաշխավորել, որ կարող ենք դիմակայել ջերմությանը ...
Օդաչու - Ես չգիտեմ, թե արդյոք մենք կարող ենք մնալ այդ բարձրության վրա:
Սփոք - Մեր փոխադրամիջոցը ծածկվել է մոխրի ամպով, բայց Էնթրփրայզը (այսինքն՝ տիեզերանավը) չափազանց մեծ է: Եթե օգտագործվի փրկարարական աշխատանքներում, կերևա բնիկներին:
Կապիտան - Սփո՛ք, ոչ ոք չգիտի կանոններն ավելի լավ, քան դու, բայց պետք է բացառություն անել:
Սփոք - Ո՛չ: Նման գործողությունը խախտում է գլխավոր ցուցումը:
Բժիշկ – Ձայնդ կտրի՛ր, Սփո՛ք, մենք փորձում ենք փրկել քեզ, գրողը տանի:
Սփոք – Բժի՛շկ, մեծամասնության կարիքները վեր են փոքրամասնության կարիքներից:
Կապիտան: Սփո՛ք, մենք խոսում ենք քո կյանքի մասին:
Սփոք - Կանոնը չի կարելի խախտել ... (կապն ավարտվում է)
Կապիտան: Սփո՛ք ... (դիմում է լեյտենանտին) Փորձե՛ք նորից օնլայն կապ հաստատել նրա հետ:
Նավիգատոր - 90 վայրկյան է մնացել պայթյունից:
Կապիտան - Եթե Սփոքը լիներ այստեղ, և ես՝ այնտեղ, նա ինչպե՞ս կվարվեր:
Բժիշկ - Նա կթողներ, որ մահանայիք:

(Գործողություն. «Էնթրփրայզ» տիեզերանավը բարձրանում է ծովից և տեսանելի դառնում բնիկների համար, անցնում է հրաբխի վրայով, հեռափոխադրում Սփոքին հրաբխի ներսից դեպի տիեզերանավը, և սարքը պայթում է՝ սառեցնելով հրաբուխը: Օդաչուն և բժիշկը վազում են դեպի հեռափոխադրող սարքը՝ ողջունելու Սփոքին:)

Կապիտան – Սփո՛ք, քեզ հետ ամեն ինչ կարգի՞ն է:
Սփոք – Կապիտա՛ն, դուք նրանց թույլ տվեցիք տեսնել մեր նավը:
Բժիշկ – (Ձեռքի մերժողական շարժումով) Նրա հետ ամեն բան կարգին է:
Լեյտենանտ – Կապվի՛ր կապիտան Քրքի հետ:
Կապիտան – Այո՛, լեյտենա՛նտ:
Լեյտենանտ – Արդյո՞ք հրամանատար Սփոքը տախտակամածի վրա է, պարո՛ն:

Կապիտան – Ողջ և առողջ:
Լեյտենանտ - Խնդրում եմ տեղեկացնել նրան, որ նրա սարքը հաջողությամբ պայթեց:
Կապիտան – (Սփոքին) Դու լսեցի՞ր: Շնորհավորու՛մ եմ, Սփո՛ք: Դու հենց նոր մի աշխարհ փրկեցիր:
Սփոք - (նյարդային ձայնով) Դուք խախտեցիք գլխավոր ցուցումը:
Կապիտան – (մերժողական ձայնով) Դե լա՛վ, Սփո՛ք: Նրանք տեսան մեզ. մեծ բան է:

(Գործողություն. բնիկները նետում են իրենց նախորդ կրոնը խորհրդանշող մագաղաթը և սկսում երկրպագել տիեզերանավի կերպարի գծագիրը:)

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Այս տեսահոլովակում Սփոքը ասում է, որ «մեծամասնության կարիքները վեր են փոքրամասնության կարիքներից»: Դա ճի՞շտ է: Դա ճի՞շտ է բոլոր հանգամանքներում:	Սփոքի ասածին ի պատասխան, որ շատերի օգուտը վեր է քչերի օգուտից, կապիտանը պատասխանում է՝ «մենք խոսում ենք քո կյանքի մասին»: Այս երկու կերպարները խոսում են տարբեր ելակետերից ելնելո՞վ: Ո՞րն է նրանց տեսանկյունների միջև տարբերությունը:
2. Վերջիվերջո կապիտանը օգտագործում է «Էնթրփրայզ» տիեզերանավը Սփոքին փրկելու համար, և տեսնելով տիեզերանավը՝ բնիկները հրաժարվում են իրենց կրոնից և սկսում պաշտել տիեզերանավի կերպարը: Սա հաշվի առնելով՝ Սփոքը պետք է զոհաբերվե՞ր, որպեսզի ազդեցություն չունենար բնիկների վրա, թե՞ բնիկների վրա ունեցած ազդեցության հետևանքով պատճառված «վնասը» արդարացված է Սփոքի կյանքը փրկելու պատճառով: • նշանակություն ունի՞ այն, որ եթե անձնակազմը բոլորովին չմիջամտեր, Սփոքը չէր խրվի այնտեղ, բայց հրաբուխը կոչնչացներ բոլոր բնիկներին:	Սփոքի տեսանկյունից բոլոր վնասները նու՞յնն են: Կապիտանի տեսանկյունից որոշ վնասներ մյուսներից ծա՞նր են: Ինչպե՞ս կարող ենք իմանալ:
3. Չնայած Սփոքն ասաց, որ կանոնը խախտել չի կարելի, կապիտանը խախտեց «գլխավոր ցուցումը» Սփոքին փրկելու համար: Ո՞վ էր ճիշտ: Ինչպե՞ս կարող ենք դատել՝ երբ է դա պարզապես նշանակում ենթարկվել կանոնին, իսկ երբ՝ խախտել կանոնը:	Ալտրուիզմը և փոխադարձությունը օգնու՞մ են հասկանալ, թե որ վնասներն են մյուսներից ծանր: Դա կապվա՞ծ է մեր սեփական փորձի և այն վնասների հետ, որոնցից մենք՝ որպես անհատներ, ամենաշատն ենք վախենում:

Հարցեր	Զրույցի նպատակներ
4.Սփոքին փրկելու համար տիեզերանավով հրաբխին մոտենալն իր մեջ ռիսկեր էր պարունակում նավի ու իր անձնակազմի համար: Անձնակազմի դեպքում անհատին օգնել փորձելու համար ռիսկի ի՞նչ աստիճանն է ընդունելի:	Ճիշտ չէ՞, որ այն ռիսկերը, որոնց ցանկանում ենք դիմել, հիմնված են մեր զգացմունքների վրա: Սա հաշվի առնելով՝ ո՞ր հասարակության մեջ մարդիկ ավելի շատ ռիսկերի կգնան հանուն միմյանց. մրցակցո՞ղ հասարակությունում, որտեղ մարդկանց միջև արտահայտված են սուր տարբերություններ՝ հարստությամբ ու կարգավիճակով պայմանավորված, թե՞ համագործակցող հասարակությունում, որտեղ կա ամուր փոխադարձություն և ալտրուիզմ՝ անհատների միջև հավասարության զգացողությամբ պայմանավորված:
5. Սփոքին փրկելիս անձնակազմը առաջնորդվեց՝ ելնելով խմբի ինքնության զգացումի՞ց, փոխադարձությունի՞ց, թե՞ երկուսի համադրությունից:	Հնարավոր է, որ թե՛ խմբի ինքնության զգացումը, թե՛ փոխադարձությունը, ազդեցություն են ունեցել անձնակազմի վրա: Բայց խմբի ինքնության գործոնի դերն ավելի մեծ կլիներ թշնամու հետ բախվելու ժամանակ, իսկ այս դեպքում որևէ թշնամի չկա: Այդ պատճառով անձնակազմի սոլիդարությունը հավանաբար հիմնված է փոխադարձության վրա, որի համաձայն նրանցից յուրաքանչյուրը Սփոքի համար անում է այն, ինչ ինքը կուզենար, որ մյուսներն անեին իր համար, եթե ինքը լիներ Սփոքի փոխարեն:
6. Բնիկներին փրկելիս անձնակազմը առաջնորդվեց ելնելով ալտրուիզմի՞ց:	«Գլխավոր ցուցումն» արգելում էր անձնակազմին միջամտություն ունենալ հրաբխին բնիկներին փրկելու համար, բայց նրանք այնուամենայնիվ ռիսկի դիմեցին այդ անելու համար: Ալտրուիզմը միակ բացատրությունն է: Որպես մարդ արարածներ՝ անձնակազմն իրեն նույնականացրեց այլ զարգացող տեսակների հետ և հավանաբար մտածեց, որ նույն իրավիճակին բախվելու դեպքում մարդիկ կուզենային և կարիքը կունենային, որ որոշ առավել զարգացած քաղաքակրթություններ միջամտեն իրենց փրկելու համար:

Հարցեր	Զրույցի նպատակներ
7. Ալտրուիզմը ներքին, էմոցիոնալ կողմնացու՞յց է, թե՞ մի ուղեցույց, որը մեզ ասում է, թե ինչն է արդար:	«Բնական իրավունք»-ը իրավական տեսություն է, որն ուսուցանում է, որ քանզի մարդ արարածներն ունեն բանականություն, մենք կարող ենք օգտագործել տրամանաբությունը՝ իմանալու, թե ինչն է արդար, և որ մենք ստեղծում ենք կանոններ մեզ արդարացիորեն վարվել օգնելու համար:
8. Երբ կանոնը չի թելադրում, թե ինչն է արդար, ճի՞շտ է կանոնին չենթարկվելը:	Բնական իրավունքի տեսության համաձայն՝ կանոնները կոչված են արդար նպատակների հասնելու համար: Եթե կանոնը չի հետապնդում արդար նպատակ, ապա մենք չպետք է ենթակվենք դրան, որպեսզի հասնենք արդարության: Օրինակ, տրամաբանական է, որ «Star Trek»-ի հետախույզներն ունեն կանոն, որն արգելում է միջամտել զարգացող քաղաքակրթություններին, որպեսզի պաշտպանեն նրանց իրենց զարգացման ընթացքում մարդկային միջամտությունից: Բայց երբ անձնակազմը հասկացավ, որ կանոնն արդարություն չի հաստատում, քանի որ միջամտության բացակայության դեպքում հրաբուխը կավիրեր բնիկներին, նրանք վարվեցին այնպես, որ, կանոնին չենթարկվելով, հասնեն արդարության: Սկզբում Սփոքը նույնպես խախտել էր կանոնը, որովհետև հրաբուխը կանգնեցնելու համար ստեղծել և գործի էր դրել մի սարք, որը փոխեց ապագան: Բայց Սփոքն ընդդիմացավ բնիկներին տիեզերանավը բացահայտելիս, որովհետև սա կխախտեր կանոնի հիմքում ընկած նպատակը. չազդել զարգացող քաղաքակրթությունների վրա: Կապիտանը չենթարկվեց կանոնին և բացահայտեց նավը Սփոքին փրկելու համար, քանի որ զարգացող քաղաքակրթության վրա ազդեցություն ունենալն ավելի քիչ վնաս էր իր մեջ պարունակում, քան թույլ տալը, որ անգամ մեկ անհատ մահանար:

Հարցեր	Զրույցի նպատակներ
9. Ճի՞շտ է վնասի մի տեսակը ռիսկի տակ դնելը մեկ այլ վնաս կանխելու համար: Մենք գիտենք, որ որոշ վնասներ մյուսներից ծանր են մեր արժեքներից ելնելո՞վ: Վնասներից ամենամեծը կյանքի կորու՞ստն է:	Երբ Սփոքն ասում է, որ «մեծամասնության օգուտը վեր է փոքրամասնության օգուտից», նա տարբերակու՞մ է վնասների միջև: Երբ կապիտանն ասում է՝ «Սփո՛ք, մենք խոսում ենք քո կյանքի մասին», նա ավելի ծա՞նր է դասում է կյանքի կորուստը զարգացող քաղաքակրություններին միջամտելու ու նրանց վրա ազդեցություն գործելու կորստից: • ու՞մ արժեքներն եք դուք կիսում, Սփոքի՞, թե՞ կապիտանի:
10. Հայաստանում մշակութային կանոնը ուրիշի ընտանեկան կյանքին չմիջամտելն է, հատկապես ամուսնու և կնոջ միջև փոխհարաբերություններին: Բայց երբեմն կանայք իրենց ամուսինների կողմից ենթարկվում են բռնության, և նման բռնությունը որոշ դեպքերում հանգեցնում է կյանքի կորստի: Մենք պե՞տք է հետևենք այս կանոնին, նույնիսկ եթե այն ռիսկի տակ է դնում անհատի կյանքը:	2010-2014 թթ. ընթացքում 30 կանայք են մահացել ընտանեկան բռնության հետևանքով. http://coalitionagainstviolence.org/en/home/

Ջոն Ռաուլս. «Արդարության տեսություն»[8]

«Ուտիլիտարիզմն» այն հեռանկարն է, որի համաձայն ամենամեծ օգուտն ամենաշատ մարդկանց համար լինելն է ամենարժեքավորը: Ջոն Ռաուլսը քննադատում է այս մոտեցումը՝ ասելով, որ այն անտեսում է անհատի բաեկեցությունը և թույլ տալիս, որ անհատը տառապի: «Ուտիլիտարիզմի» փոխարեն, ըստ Ռաուլսի, հասարակության բոլոր անհատները կարող են մասնակացել զրույցների՝ սահմանելու, թե ինչն է արդար և որոշել, թե որոնք են արդար հասարակության հիմքում ընկած սկզբունքները: Այն գործընթացի միջոցով, որը Ռաուլսն անվանում է «ռեֆլեկտիվ հավասարակշռություն», անհատները քննում և վերագնահատում են արդարության գաղափարը մինչև հավասարության կամ հավասարակշռության հաստատումը: Այսպիսի հավասակշռությունը կարող է թույլ տալ որոշ անհավասարություն, օրինակ, որ վիրաբույժը ավելի շատ գումար վաստակի մյուս մասնագետներից, քանի դեռ հնարավորությունները բաց լինեն բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են դրանց արժանիքի հիման վրա: Արժանիք նշանակում է, որ բոլոր անհատներն սկսում են ցանկացած մրցակցություն որպես հավասարներ և այնուհետև տարբերակվում են որոշ չափանիշների հիման վրա, որոնք բոլորը գիտեն և ընդունում են: Ռաուլսը գրում է, որ անհատները կարող են անկեղծորեն մասնակցել նման զրույցների, քանի դեռ նրանք ընդունում են որոշակի պայման. այդ պայմանն այն է, որ ազնվությունը և դրան հասնելու համար կանոնները քննարկող անհատները չիմանան, թե ինչ դիրք կամ կարգավիճակ իրենք կունենան այն հասարակության մեջ, որն իրենք ստեղծում են:

[8] John Rawls, *Theory of Justice*, US, Belknap, 1971:

Որպես ամփոփում՝ հիմք ընդունելով այն գաղափարը, որ յուրաքանչյուր անհատ, մասնակցելով արդար հասարակության մասին քննարկմանը, չգիտի, թե ինչ կարգավիճակ ինքը կունենան, ապա.

1. յուրաքանչյուր անհատ պետք է ունենա նույն և անփոփոխ պնդումը հավասարության և իրավունքներ մասին, և
2. անհավասարությունները կարող են գոյություն ունենալ քանի դեռ՝

- վերաբերում են դիրքերին, որոնք հասանելի են բոլորին հավասար հնարավորության պայմանների դեպքում (այլ կերպ ասած՝ ցանկացած անհատ կարող է դառնալ բժիշկ, քանի դեռ նա կրթություն է ստանում հասարակության կողմից սահմանված չափանիշների համաձայն բժիշկ դառնալու համար), և

- ամենաշատ օգուտն են բերում հասարակության պակաս ընդունակ անդամներին (այլ կերպ ասած՝ բժիշկներին ավելի շատ վճարելն ավելի շատ տաղանդավոր անհատների է ոգևորում բժիշկներ դառնալու համար, և սա նպաստավոր է պակաս ընդունակ մարդկանց համար՝ նրանց, ովքեր չեն կարող բժշկություն սովորել և լինել իրենց իսկ բժիշկները):

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Վերոնշյալ ընթերցանության հիման վրա Սփոքի հեռանկարը ուտիլիստակա՞ն է: Կապիտանի հեռանկարը քննու՞մ է «ուտիլիտարիզմը»՝ ինչպես դա անում է Ռաուլսը:	Այո, Սփոքի «շատերի օգուտը վեր է քչերի օգուտից» արտահայտությունն ուտիլիստական է: Ինչպես Ռաուլսը՝ կապիտանը կասկածի տակ է դնում, թե արդյոք մեծամասնության օգուտը համարժեք է քչերի զոհաբերությանը կամ այս դեպքում մեկի՝ Սփոքի կյանքի կորստին:
2. Քանի՞ կանայք են Սփոքի նման հավատում «գլխավոր ցուցումին»: Քանի՞ կանայք են զոհաբերության գնում հանուն մյուսների: Այս կանայք հաշվի՞ են առնում, թե արդյոք իրենց զոհաբերությունն ավելի մեծ օգուտ է բերում, քան արժենում է:	Լավ մոր և կնոջ սահմանումը մարդն է, ով զոհաբերության է գնում հանուն մյուսների, հատկապես ընտանիքի: Բայց զոհաբերություններ անելով՝ կանայք հարցնու՞մ են, թե արդյոք իրենց զոհաբերության արդյունքում ստացված օգուտն օգտակար է զոհաբերությունից:
3. Եթե գրեինք կանոններ այն հասարակության համար, որի մեջ չէինք իմանա, թե ով կլինեինք մենք, անհատների միջև որքա՞ն հավասարություն կպահանջեինք: Որքա՞ն անհավասարություն կթույլատրեինք:	Եթե չիմանայինք, թե ով կլինենք ապագայում, տրամաբանական կլիներ ապահովել այնքան հավասարություն, որքան հնարավոր է՝ որպես ապագայում մեզ պաշտպանելու լավագույն եղանակ:

Հարցեր	Զրույցի նպատակներ
4. Ավելի մեծ հավասարություն ապահովելը կստեղծեր ավելի շատ բարեկեցություն՞ կանանց համար, թե՞ գործունեություն:	Ըստ Ռաուլսի՝ ապագայի տրամաբանող հասարակությունը կապահովեր ավելի մեծ հավասարություն և հավասար հնարավորություն, որպեսզի անհատներն իրենց տարբերակեին արժանիքի հիման վրա: Հավասար հնարավորության երաշխիքների դեպքում բոլոր անհատները, ներառյալ կանայք և փոքրամասնությունները, ավելի շատ գործունեություն կունենային՝ իրենց զարգացնելու հնարավորություն՝ թույլ տալով ստեղծել իրենց իսկ բարեկեցությունը, ինչպես նաև բարիքներ հասարակության համար:
5. Երբ մենք սահմանում ենք լավ կնոջը որպես մեկին, ով զոհաբերության է գնում անկախ նրանից, թե արդյոք զոհաբերությունից ստացված օգուտն ավելի արժեքավոր է, քան զոհաբերությունը, մենք թուլացնու՞մ ենք հավասարությունը և խոչընդոտու՞մ գործունեությանը:	Այո: Երբ կանայք ընդունում են, որ իրենք պետք է միշտ զոհաբերեն, նրանք հաշվի չեն առնում, որ իրենք հրաժարվում են իրենց գործունեությունից և, եթե փոխարենը նախընտրեին գործունեությունը, կկարողանային ավելի շատ օգուտ տալ, քան իրենց զոհողությամբ է ստեղծվում:

<u>Եզրակացություն և հնարավորություն մեկնաբանությունների համար</u>

Փոխադարձությունը յուրաքանչյուրի և բոլոր անհատների կատարելագործման համար համագործակցային փոխանակություն է: Մարդիկ կարող են համագործակցել երկարաժամկետ վերացական գաղափարների հասնելու համար, ինչպիսին է մյուսների երեխաների համար հոգ տանելը կամ անհատապես ներդրում անելով ընդհանուր առաքելության կամ գործի մեջ: Այսպես որպես մարդ՝ մենք կարող ենք ստեղծել մեր սեփական իրականությունը՝ փոխելով միմյանց հետ փոխազդելու մեր եղանակը և այդպիսով ստեղծելով մի իրականություն, որը շահավետ է մեզ բոլորիս համար հավասարապես:

Հարցերը կամ մեկնաբանությունները կարող եք ուղարկել bournazian@gmail.com էլէկտրոնային հասցեով:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ 05
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՆՀԱՏ՝ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ

Թեմա՝
Տարբերակում, մեկուսացում, ուժ և գործընթաց

Նպատակ՝
Ուսումնասիրել սոցիալական մեկուսացման միջոցով անհատական զարգացման սահմանափակումը և ուժի դերն ու գործընթացը

Զարգացման զրույցի նախադրյալներ՝
• զրույց և ոչ բանավեճ
• զարգացում. զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է:

Կրկնություն՝
Զրույց 01. Ամեն անհատ եզակի է, և իրականությունը սուբյեկտիվ է, բայց մենք կառուցում ենք համատեղ իրականությունը մշակույթի և լեզվի միջոցով ընդհանրացումների և նորմերի օգնությամբ:
Զրույց 02. Մինչ համատեղ շրջանակները կամուրջ են հանդիսանում սուբյեկտիվ անհատների միջև, կառուցված իրականություններն աշխարհի մասին մեկնաբանություններ են, որոնք հնարավոր է չարտացոլեն ամեն մեկի «օվկիանոսը» կամ իրականությունը և կարող է նաև լինեն սխալ կամ ոչ ճշմարիտ այն հասկացողությունների համեմատությամբ, որոնք առաջ են եկել գիտական մեթոդներով և փորձարկումների միջոցով:
Զրույց 03. Բոլոր մարդիկ մրցակցում և համագործակցում են: Մեր խումբը մեկ այլ խմբի հակադրությամբ դիտարկելը կարող է հեշտացնել համագործակցությունը մեր խմբի ներսում, բայց նաև հանգեցնել կարծրատիպերի ստեղծման ու մյուսներին մեկուսացնելուն, ինչը նրանք նույնպես կարող են անել մեր հանդեպ: Փոխադարձութունը՝ փոխադարձ փոխանակումը հավասարների միջև, կարծես թե ավելի լավ տարբերակ է:
Զրույց 04. Փոխադարձությունը յուրաքանչյուր անհատի կամ բոլոր անհատների կատարելագործման համար համագործակցությամբ պայմանավորված փոխանակում է: Մարդիկ կարող են համագործակցել հանուն երկարաժամկետ վերացական իդեալների, օրինակ՝ ուրիշների երեխաների համար հոգ տանելով կամ անհատական ներդրումներ անելով ընդհանուր առաքելության կամ գործի մեջ: Այսպես որպես մարդ՝ մենք կարող ենք, ըստ էության, ստեղծել մեր սեփական իրականությունը՝ փոխելով միմյանց հետ շփվելու եղանակը և դրանով իսկ ստեղծելով իրականություն, որը շահավետ է մեզ բոլորիս համար հավասարապես:

<u>Զրույց 05</u>

Տարբերակումը, մեկուսացումը, ուժը և գործընթացը:

Ռեսուրսների և կարգավիճակի համար մրցակցելը պարտադիր բացառող բնույթ է կրում: Որոշ մարդիկ ավելի շատ ռեսուրսների են տիրանում, քան մյուսները, իսկ կարգավիճակն իր բնույթով հիմնված է անհատներին տարբերակելու վրա՝ կարևորությունից կամ ազդեցությունից ելնելով: Ներքոնշյալ յուրաքանչյուր բաժնում դիտարկել նախնական հարցերը, տրված օրինակը և ապա մտածել ձեր օրինակի մասին:

Հարց՝ Երբևէ ստիպված եղե՞լ եք ձեզ զգալ այնքան տարբեր կամ մեկուսացված, որ համարեք անարդար է: Ձեր անարդարության զգացողությունը սուբյեկտի՞վ էր: Կա՞ր այլընտրանքային կամ «օբյեկտիվ» հեռանկար, որի համաձայն այդ հանգամանքներն «արդար» կհամարվեին:

Օրինակ՝ հատված **«Ուժն ընդդեմ գործընթացի և կրթությունը Հայաստանում»**[9], Վահան Բուրնազյան

Ութ ու կես տարվա ընթացքում աշխատանքային ստուգումների գերազանց արդյունքներ ապահովելուց, գիտական խորհրդում նվիրված աշխատանքից և դասախոսի, փոխդեկանի, ռեգիստրարի (երկու անգամ) և ընդունելության ղեկավարի պաշտոններն զբաղեցնելուց հետո ես մնացի առանց աշխատանք: Դեկանն ասաց, որ ծրագիրն այլևս մշտական դասախոսի կարիք չունի: Իմ պայմանագիրը չերկարաձգվեց: Ես փոխարինվեցի լիարժեք դրույքով աշխատող դասախոսով: Բայց ամենալավը, որ ես հիշում եմ, ռեկտորի՝ ամբողջ հանդիպմանը զուգահեռ ժպտալն էր: Հայաստանում մենք բոլորս ենք ստիպված եղել բախվել նման ժպիտի:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Վերոնշյալ հատվածում ի՞նչն է ստիպում հեղինակին զգալ մեկուսացված, և ինչու՞ է նա անարդարություն զգում: Կա՞ այլընտրանքային կամ «օբյեկտիվ» հեռանկար, որի համաձայն մյուս դերակատարներն իրենց համարում են արդարացի:	Վերոնշյալ հատվածում հեղինակը հավատում է, որ իր պայմանագիրը չերկարաձգելն իրեն մեկուսացնում է համալսարանից և աշխատանքից, և որ դա արդար չէ՝ հաշվի առնելով իր նախկին ծառայությունը և գրանցած աշխատանքային ցուցանիշները: Նա նաև նշում է, որ անհատները նույն վերաբերմունքին չեն արժանանում, քանի որ իր մոտ ամեն տարի ստուգումներ էին անցկացվել, իսկ դեկանի մոտ՝ ոչ: Այլապես, նրանք, ովքեր որոշել էին չերկարաձգել պայմանագիրը, իրենց գործողություններում արդարացված կընկալվեին, որովհետև պայմանագիրն ավարտվել էր, և նրանք ավելի ցածր աշխատավարձով փոխարինող էին գտել:
2. Վերոնշյալ հատվածում ինչու՞ է ռեկտորը ժպտում: Ի՞նչ է նրա ժպիտը նշանակում:	Ուժի կիրառում:

[9] Vahan Bournazian, «Power vs. Process & Education in Armenia» http://www.osf.am/2015/04/power-vs-process-education-in-armenia-by-vahan-bournazian/

Հարցեր	Զրույցի նպատակներ
3. Դուք երբևէ ստիպված եղե՞լ եք զգալ այնքան տարբեր կամ մեկուսացված, որ համարեք անարդար է: Նկարագրել այդ առիթը, իրադարձությունը կամ իրավիճակը: Ձեր անարդարության զգացողությունը սուբյեկտի՞վ էր: Կա՞ր այլընտրանքային կամ «օբյեկտիվ» հեռանկար, որի համաձայն այդ իրողությունն «արդար» կհամարվեր: Այլ կերպ ասած՝ ի՞նչ էին մյուսները մտածում:	Մարդիկ սուբյեկտիվ են: Ցանկացած բախման ժամանակ մեկը կարող է անարդարություն զգալ, մյուսը՝ արդարություն: Բայց կա օբյեկտիվ գաղափար, թե ինչն է ճիշտ, իսկ ինչը՝ սխալ. կա մի գաղափար, որ մենք բոլորս կիսում ենք. այն հիմնված է փոխադարձության վրա, այն հիմնված է նրա վրա, թե ինչպես մեզնից յուրաքանչյուրը կցանկանար, որ իր հետ վարվեին մյուսները. «Մյուսների հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն» (Աստվածաշունչ): Սա հաշվի առնելով՝ մենք պետք է հասկանանք, որ սխալ վարվող ոչ մի անձ չի հավատում, որ ինքը սխալ է: Նա, ով սխալ է գործում, հավատացնում է ինքնիրեն, որ ինքն արդարացի է: Սա արդարացման գործընթաց է: Որոշ արդարացումներ այն մասին են, որ տուժողը սխալ է և պետք է իրեն պաշտպաներ կամ չպետք է թույլ տար լինել զոհի կարգավիճակում: Լրացուցիչ արդարացում է, որ եթե մեղսագործը այդպես չվարվեր, կլիներ մեկ ուրիշը, ով այդպես կվարվեր: Բացի այդ, մարդիկ երբեմն արդարանում են նրանով, որ իրենց հանդեպ նախկինում նույն կերպ են վարվել, կամ որ զոհն իրենց հանդեպ այդպես կվարվեր, եթե կարողանար, կամ որ սխալը, որ արվում է, արվում է հանուն իրենց երեխաների կամ ընտանիքի կամ հանուն մի ավելի լավ նպատակի, որի մասին միայն իրենք գիտեն: <u>Մենք պետք է տարանջատենք արդարացումը արդարությունից՝ հիմնվելով փոխադարձության վրա:</u>

Հարց՝ Ի՞նչ դեր են կատարում հիերարխիան, մրցակցությունը և ուժը տարբերակման և մեկուսացման հարցում: Ի՞նչ դեր են չափանիշները և գործընթացը կատարում կամ լավ կլիներ, որ կատարեին տարբերակման և մեկուսացման դեպքում:

Օրինակ՝ հատված **«Ուժն ընդդեմ գործընթացի և կրթությունը Հայաստանում»**, Վահան Բուրնազյան

Կա որոշումներ կայացնելու երկու եղանակ: Եղանակներից մեկն անհատի ուժի կիրառումն է: Մյուսը գործընթացն է: Երբ անհատն իր համար է ինչ-որ որոշում կայացնում, անհատական ընտրությունը հիմնավորված է: Բայց հաստատություններն անհատի չեն պատկանում. նրանք պատկանում են մեզ բոլորիս, և մեծամասամբ նրանց, ովքեր մասնակցություն ունեն դրանցում:

Ահա թե ինչու ինստիտուցիոնալ որոշումները՝ անկախ նրանից՝ դա ուսանողին գնահատելու, աշխատանքի ընդունելու, աշխատողի առաջխաղացման կամ նրան աշխատանքից հեռացնելու, թե ինստիտուցիոնալ ֆոնդերը ծախսելու մասին են, պետք է հիմնվեն թափանցիկ գործընթացի վրա՝ համապատասխան և արդար չափանիշներից ելնելով: Գործընթացը հաշվի է առնում հաստատության շահերը, որոշման ազդեցությունն իրենց վրա կրող անհատների շահերը և հանրության շահերը, որ փոխանցվում է մեզ՝ բոլորիս: Ուժն ընդամենը սնում է անհատի էգոն:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Վերոնշյալ աշխատանքային օրինակում եղե՞լ էր պայմանագիրը երկարաձգելու մասին որոշում կայացնելու համար համապաստախան գործընթաց: Ո՞րն է գործընթացի և արդարության միջև հարաբերությունը:	Հեղինակի աշխատանքն անցնում էր տարեկան ստուգում աշխատանքային չափանիշների հիման վրա: Տեսականորեն ստուգումը պետք է թելադրեր, թե արդյոք պայմանագիրը պետք է երկարաձգվեր, թե ոչ, բայց այս դեպքում նախորդ ստուգումներն էական չէին պայմանագիրը երկարաձգելու կամ չերկարաձգելու որոշման համար: Սա նշանակում է, որ չերկարաձգելու մասին որոշումն ընդամենը ուժի կիրառում էր և ոչ ստուգման գործընթացի արդյունք: Ինչու՞ համար էր ստուգման գործընթացը, եթե այն ոչինչ չէր նշանակում: Գործընթացն առաջ է բերում արդարություն, որովհետև այս դեպքում անհատներին վերաբերվում են որպես հավասարների, և տարբերակող կամ մեկուսացնող վերաբերմունքը հիմնվում է միայն օբյեկտիվ գործոնների կամ չափանիշների վրա:
2. Տարբերակմանը կամ մեկուսացմանը վերաբերող ձեր անձնական օրինակում ի՞նչ դեր են հիերարխիան, մրցակցությունը և ուժը խաղացել տարբերակման և մեկուսացման հարցում:	Կարգավիճակի և ռեսուրսների համար մրցակցելն ստեղծում է հիերարխիա, իսկ հիերարխիան կառուցվում է մյուսներին մեկուսացնելու միջոցով: Անհատներն օգտագործում են ուժը մեզ մեկուսացնելու համար, որպեսզի իրենք ավելի լավ զգան, քան մենք: Մարդիկ պետք է իրենց ավելի ուժե՞ղ զգան, քան մյուսները իրենց էգոն բավարարելու համար: Նրանք չե՞ն հասկանում, որ հիերարխիայի մեջ միշտ կա մեկը, ով բարձր է իրենցից և պատրաստ է ուժն օգտագործել իրենց հանդեպ ևս: Եվ սա հաշվի առնելով՝ ճիշտ չէ՞, որ հիերարխիկ համակարգը երբեք ոչ մեկին թույլ չի տալիս իրեն բավարարված զգալ: Հիերարխիկ համակարգում մասնակցելու համար շատ մարդիկ փնտրու՞մ են սահմանված կարգով մյուսներին մեկուսացնելու ճանապարհներ: Դուք ունե՞ք օրինակներ:

Հարցեր	Զրույցի նպատակներ
3. Տարբերակվելու կամ մեկուսացվելու ձեր անձնական օրինակում կա՞ր գործընթաց, և այն հիմնվա՞ծ էր չափանիշների վրա: Գործընթացը և չափանիշները առա՞ջ են բերում արդարություն: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:	Փոխադարձությամբ պայմանավորված համագործակցությունը թույլ է տալիս անհատների միջև տարբերակումներ անել արդար չափանիշների և արդար գործընթացի միջոցով: Վերոնշյալ օրինակում աշխատողներին վերահսկելու չափանիշները և աշխատողներին վերահսկելու գործընթացն ստեղծել էին արժեքի վրա հիմնված համակարգ, երբ աշխատողը կարող էր ցույց տալ, որ ինքն իր աշխատանքը լավ է կատարել և հետևաբար արժանի է, որ իր պայմանագիրը երկարաձգվի: Համալսարանի ընդունելության քննությունները և համալսարանական դասընթացների քննությունները նույնպես կարող են լինել գործընթացի օրինակներ, որով ուսանողները ցույց են տալիս, որ իրենք լավ են սովորել: Այս դեպքերում քննական թեմաները և հարցերը կլինեին չափանիշները, և այն, թե ինչպես է քննությունն անցկացվում, կլիներ գործընթացը: Բայց մեր համալսարաններում քննությունների ընթացքում հարցերը արդարացվա՞ծ են, և քննության մեթոդը արդա՞ր է:

Հարց՝ Ի՞նչ դեր ունի թափանցիկությունը կամ լավ կլիներ, որ ունենար գործընթացի մեջ: Ի՞նչ դեր ունի հաշվետվողականությունը կամ լավ կլիներ, որ ունենար գործընթացի մեջ:

Օրինակ՝ հատված **«Ուժն ընդդեմ գործընթացի և կրթությունը Հայաստանում»**, Վահան Բուրնազյան

Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (ՀԶՌԾ), որն ընդունվել է 2014թ., նշում է. «Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է: Առաջնային խնդիրներ են կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի/հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար: Այդ նպատակներին հասնելու նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում »[10]:

Տասնմեկ էջի սահմաններում ՀԶՌԾ-ն ուրվագծում է իրականացման ենթակա կրթական

[10] Հայաստանի Հանրապետության 2014-2015 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման Հավելված, պարբերություն 430:

բարեփոխումները, և բոլորը թվում են արդարացված: Բայց կա երկու խնդիր: Նախ որ այսպիսի բարեփոխումները և ամբողջ ՀԶՌԾ-ը հնարավոր չէ իրականացնել առանց ֆինանսավորման, և թե՛ Հայաստանի բյուջեի ՀՆԱ-ի դեֆիցիտը, թե՛ արտաքին պարտքն աճել են, ինչը նշանակում է, որ դժվար կլինի ֆինանսավորում ստանալ, և եթե ստացվի, թանկ կնստի: Երկրորդ խնդիրն այն է, որ այս տասնմեկ էջի սահմաններում ամենակարևոր հարցն ամենաքիչ ուշադրությանն է արժանանում:

«Կրթահամակարգի օղակների արդյունավետությունն ու որակը բարձրացնելու տեսանկյունից կարևորվում է կոռուպցիայի երևույթների դեմ պայքարի ուժեղացումը կրթական բոլոր մակարդակներում»[11]:

Այդ նախադասությունը մեկ ամբողջ պարբերություն է: Դա կրթության հատվածի ամենակարճ պարբերությունն է և գրեթե ամենակարճը՝ ամբողջ ՀԶՌԾ-ում:

Չնայած ՀԶՌԾ-ը կոռուպցիայի մասին պարունակում է երեք էջից բաղկացած հատված՝ այն չի հասցեագրում կոռուպցիան կրթական հատվածում: Չնայած Հայաստանն ընդունել է հակակոռուպցիոն ռազմավարություն 2009թ.՝ ծրագրի իրագործումը ֆորմալ առումով ավարտվել է 2012թ.: Հակակոռուպցիոն ռազմավարության վերանայումը կրթության մասով ցույց է տալիս, որ այնտեղ ներկայացված հաճախ հանդիպող լուծումը զանազան կրթական գործընթացներում «թափանցիկություն, հաշվետվողականություն և օրինականություն» կիրառելու մեջ է[12][13]: Ցավոք սրտի, դա իրականության չի կոչվել:

ԿԵՀ Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոնի 2013թ. զեկույցը եզրակացրել է, որ. «Չնայած գերակշռող բարեփոխման հռետորիկային, հայկական բարձրագույն կրթությունն իրական բարեփոխման ուղու վրա չէ: Ընդհակառակը, բարձրագույն կրթական համակարգը գտնվում է մի փակուղային իրավիճակում, որը կարելի է նկարագրել.

- քաղաքական ռեժիմի կողմից չափից ավելի շատ վերահսկողությամբ,
- բարեփոխումների իրատեսական ծրագրի բացակայությամբ,
- համատարած իշխող կոռուպցիայով,
- որակի չափորոշիչների շարունակական իջեցմամբ և
- շնորհալի երիտասարդների զանգվածային արտագաղթով»[14]:

Այս զեկույցի մեկ այլ եզրակացությունն այն է, որ. «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը օրինակ է ծառայում հասարակության լայն շրջանների համար, սակայն այդ օրինակը, տվյալ դեպքում՝ բաց հասարակության արժեքների տեսանկյունից, կարող է նաև բացասական լինել: Խոսքը գնում է, այնպիսի երևույթների մասին, ինչպես օրինակ կաշառակերությունը, որը «սովորական» բան է դարձել ամենօրյա պրակտիկայում, լավ աշխատանքը ըստ արժանվույն չգնահատելու «ավանդույթը», ինչպես նաև հանրային մասնակցության հարցերում, մասնավորապես բաց երկխոսության սկզբունքով հանրության հետ հարաբերությունների կարգավորման հեռանկարների անիրականությունը»[15]:

---

[11] տե՛ս նույն տեղում, պարբերություն 461:

[12] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, պարբերություն 156:

[13] 2015 թ. Հակակոռուպցիոն նոր ռազմավարությունը պարունակում է կրթական կոռուպցիայի մասին 3 էջ, բայց այն միայն թվարկում է, թե ինչ բարեփոխումներ են արվել վերջին ռազմավարության շրջանակներում և նշում, որ ապագայում կկարգավորվի կոռուպցիոն ռիսկերի գնահատման հարցը: Ցավոք, չկա որևէ ծրագիր՝ գնահատելու, թե արդյոք վերջին ռազմավարության բարեփոխումները դրական ազդեցություն են ունեցել կոռուպցիայի խնդրի վրա:

[14] Higher Education in Armenia Today: a focused review, http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/OSF_HE_report.pdf, էջ 3:

[15] տե՛ս նույն տեղում, էջ. 4-5:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Ինչպե՞ս է թափանցիկությունը նպաստում գործընթացին՝ որպես արդարության ստեղծման մեխանիզմ:	Թափանցիկություն նշանակում է, որ ամեն մեկը պետք է իմանա, թե ինչ է ակնկալվում: Աշխատողը պետք է իմանա, թե ինչ է իրենից ակնկալվում, որպեսզի կարողանա իրեն լավ դրսևորել հանձանարարությունները կատարելիս: Ուսանողը պետք է իմանա, թե ինչ է իրենցից ակնկալվում, որպեսզի հասկանա, թե ինչ սովորի: Այն, ինչ մեզնից ակնկալվում է, անվանում ենք չափանիշ: Մենք պետք է նաև իմանանք, թե ինչպես է դա գնահատվելու: Այն, թե ինչպես պետք է երկարաձգվի աշխատողի պայմանագիրը կամ ինչպես ուսանողը գնահատվի, գործընթացն է: Թափանցիկությունն օգնում է ապահովել, որ ամեն մեկն արժանանա արդար վերաբերմունքի, լինի գործընթացը կառավարողների քողարկված դրդապատճառներից պաշտպանված:
2. Ինչպե՞ս է հաշվետվողականությունը նպաստում գործընթացին՝ որպես արդարության ստեղծման մեխանիզմ:	Հաշվետվողականությունն այն է, երբ նույն գործընթացը և նույն կանոնները վերաբերում են յուրաքանչյուրին, և նրանք, ովքեր խախտում են կանոնները կամ գործընթացը, կրում են դրա հետևանքները: Սա ստեղծում է արդարություն, քանի որ այն բոլորին հավասար է դասում վերաբերմունքի տեսանկյունից: Վերոնշյալ օրինակում, դեկանը երբեք չէր անցել աշխատանքային ստուգում. կանոնը նրան չէր վերաբերել: Բացի այդ, ո՛չ դեկանը, ո՛չ ռեկտորը հաշվի չէին առել աշխատողների ստուգումների արդյունքները պայմանագիրը չերկարաձգելու մասին որոշում կայացնելիս, և դա նրանց համար անցել է անհետևանք: Երբ գործընթացը կամ կանոնները հավասարապես չեն կիրառվում, և երբ գործընթացին կամ կանոններին չհետևողների համար հետևանքներ չեն լինում, ապա չկա որևէ արդարություն, որովհետև չկա փոխադարձություն:
4. Տարբերակման ու մեկուսացման ձեր օրինակում ի՞նչ դեր են թափանցիկությունը կամ դրա բացակայությունը ունեցել:	

Հարցեր	Զրույցի նպատակներ
5. Տարբերակման ու մեկուսացման ձեր օրինակում ի՞նչ դեր են հաշվետվողականությունը կամ դրա բացակայությունը ունեցել:	
6. Դուք կարո՞ղ եք այս հեղինակի փորձի կամ ձեր սեփական փորձի վերաբերյալ նշմարել մրցակցության վրա հիմնված հաղթանակ/պարտության և/կամ համագործակցության վրա հիմնված հաղթանակ/պարտության հեռանկարները:	Թափանցիկության և հաշվետվողականության պակասը նշանակում է, որ ռեկտորը և դեկանը հաղթել են, իսկ աշխատողը պարտվել է, և հաստատությունը նույնպես պարտվել է: Հաստատությունը կորցրել է լավ աշխատող, և հաստատությունն ավելի թույլ է լինելու, քանի որ մյուս աշխատողներն արդեն անհատապես իրենց չեն նվիրաբերի իրենց աշխատանքին, քանի որ հիմա գիտեն, որ աշխատանքը լավ կատարելը հաշվի չի առնվում իրենց պայմանագիրը երկարաձգելու հարցում:
7. Այս հեղինակի փորձի կամ ձեր փորձի առնչությամբ կա՞ր հասարակության կողմից վճարվող գին: Կա՞ր գին մարդկային զարգացման առումով:	Լավ աշխատողին օտարելը կորուստ է հաստատության, ուսանողների և հասարակության համար առհասարակ, որովհետև աշխատողը չի ստեղծի այն, ինչ կարող էր ստեղծել. լավ մասնագետներ: Աշխատողը նաև ավելի զգույշ կլինի ապագայում և չի նվիրվի աշխատանքին, քանի որ նա տեսել է, որ դա կարևոր չէ:
8. Ո՞րը կարող է լինել լուծումը՝ կանխելու նմանատիպ մեկուսացման դիմաց հասարակության հետագա վճարվելիք գները:	Թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև յուրաքանչյուրի մասնակցությունը գնահատման չափանիշների և գնահատման գործընթացում մասնակցության ձևավորման հարցում ամենալավ տարբերակն են ստեղծելու և ապահովելու համար մի գործընթաց, որով արժանիքը գնահատվում է: Դիտարկել, թե ինչ պետք է արվի արդար ընտրական գործընթաց ստեղծելու համար:

Հարց՝ Ու՞մ պարտականությունն է արդարություն ստեղծելը:

Օրինակ՝ հատված **«Ուժն ընդդեմ գործընթացի և կրթությունը Հայաստանում»,** Վահան Բուրնազյան

Ես երբեք չեմ իմանա, թե ինչու իմ պայմանագիրը չերկարաձգվեց. տարբեր դերակատարներ կարող է ունենային տարբեր քողարկված դրդապատճառներ: Սկզբում ուսանողներն ընդվզեցին:

Բայց հետո մի ուղերձ ի հայտ եկավ. «Ինչու՞ նա ինքը չի պայքարում իր համար, միգուցե նա չի՞ ուզում վերադառնալ»: Սա անձնավորում էր հարցը և մեղադրում զոհին իր ճակատագրի համար նրա սեփական անգործության հիման վրա: Այն, ինչ երբեք ոչ մեկի կողմից հաշվի չառնվեց, այն էր, որ հարցը իմ մասին չէր: Իրական հարցն այն էր, թե ինչպես ենք մենք ինստիտուցիոնալ որոշումներ կայացնում այս երկրում. ուժի՞ կիրառմամբ, թե՞ գործընթացի կիրառմամբ, և ոչ միայն կրթական ոլորտում: Մինչև մենք չհասցեագրենք այս հարցը, զարգացման ոչ մի ռազմավարություն հնարավորություն չունի գոյություն ունենալու:

Հարց	Զրույցի նպատակներ
1. Ու՞մ պարտականությունն է արդարություն հաստատելը և ու՞մ համար:	Մենք յուրաքանչյուրս և բոլորս միասին՝ անհատապես և հավաքական կերպով, պարտավոր ենք ստեղծել արդարություն ինքներս մեզ և բոլորիս համար:
2. Ավելի հե՞շտ է պաշտպանել ինչ-որ մեկի շահերը, քան քո սեփականը:	Անարադության ենթարկվելը և մեկուսացվելը չափազանց էմոցիոնալ իրադարձություն է ցանկացած մարդու կյանքում: Զոհի համար դժվար է իմանալ՝ ինչպես արձագանքել: Ուժ է կիրառվել զոհի հանդեպ՝ ստիպելով նրան զգալ անապահով և անզոր: Այս պահին նա մյուսների աջակցության կարիքն ունի և կարիք ունի ևս մեկ անգամ զորեղ զգալ մինչև կկարողանա գործել: Առանց նման աջակցության զոհերը չեն կարող գործել հանուն իրենց կամ օգնել մյուսներին:
3. Ո՞վ է պարտվում, երբ անարդարություն է տեղի ունենում և չի շտկվում:	Դիտարկել վերոնշյալ օրինակները և զրույցները:

<u>Եզրակացություն</u>

Ռեսուրսների և կարգավիճակի համար մրցակցելն ստեղծում է հիերարխիա: Հիերարխիան կառուցված է յուրաքանչյուր մակարդակում անհատներին մեկուսացնելու հիման վրա: Երբ մեկուսացնում ենք մյուսներին մեր սեփական շահի համար և առանց հաշվի առնելու, թե ինչ են նրանք արել կամ ինչ չեն արել, դա ուժի կիրառում է և անարդար է: Այս անարդարությունը խոչընդոտում է անհատների զարգացմանը և դրանով՝ ամբողջ հասարակության զարգացմանը: Որպես ուժի և մեկուսացման այլընտրանք մարդիկ կարող են ստեղծել արժանիքի վրա հիմնված համակարգ, որը հենված է արդար գործընթացի և արդար չափանիշների վրա: Այսպիսի համակարգի հիմքում թափանցիկությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունն են: Երբ ամեն մեկը գիտի, թե ինչ է իրենից ակնկալվում, բոլորը հավասար են իրենց հնարավորություններում այդ ակնկալիքներին հասնելու ճանապարհին: Երբ բոլորը մասնակցում են՝ ստեղծելու և հավանություն տալու այն չափանիշներին և գործընթացին, որով պետք է գնահատվեն, շատ ավելի հավանական է, որ այն լինի արդար: Երբ նրանք, ովքեր արհամարհում կամ ժխտում են այդ չափանիշներն ու գործընթացները, ստիպված լինեն պատասխան տալ կամ պատասխանատվության ենթարկվել իրենց գործողությունների համար, համակարգը

կպահպանվի, և նրա նպատակներն էլ իրականության կկոչվեն: Արդարությունը նորմ չէ: Եվ մենք ստեղծում ենք մեր սեփական արդարությունը այս եղանակներով թե՛ անհատապես, թե՛ հավաքական կերպով՝ որպես հասարակություն:

Հարցերն ու մեկնաբանությունները կարելի է ուղարկել bournazian@gmail.com էլէկտրոնային հասցեին:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՐՈՒՅՑ 06
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՆՀԱՏ՝ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ

Թեմա՝
Համագործակցություն, փոխադարձություն և վստահություն. սոցիալական կապիտալ

Նպատակ՝
Դիտարկել, թե ինչպես է անհատների միջև վստահության բարձր մակարդակը խթանում անհատական և հասարակական զարգացումը

Զարգացման զրույցի նախադրյակները՝
- զրույց և ոչ բանավեճ
- զարգացում. զարգացած հասարակությունը զարգացած անհատների հավաքական է:

Զրույց 01. Ամեն անհատ եզակի է, և իրականությունը սուբյեկտիվ է, բայց մենք կառուցում ենք համատեղ իրականությունը մշակույթի և լեզվի միջոցով ընդհանրացումների և նորմերի օգնությամբ:
Զրույց 02. Մինչ համատեղ շրջանակները կամուրջ են հանդիսանում սուբյեկտիվ անհատների միջև, կառուցված իրականություններն աշխարհի մասին մեկնաբանություններ են, որոնք հնարավոր է չարտացոլեն ամեն մեկի «օվկիանոսը» կամ իրականությունը և կարող է նաև լինեն սխալ կամ ոչ ճշմարիտ այն հասկացողությունների համեմատությամբ, որոնք առաջ են եկել գիտական մեթոդներով և փորձարկումների միջոցով:
Զրույց 03. Բոլոր մարդիկ մրցակցում և համագործակցում են: Մեր խումբը մեկ այլ խմբի հակադրությամբ դիտարկելը կարող է հեշտացնել համագործակցությունը մեր խմբի ներսում, բայց նաև հանգեցնել կարծրատիպեր ստեղծելուն ու մյուսներին մեկուսացնելուն, ինչը նրանք նույնպես կարող են անել մեր հանդեպ: Փոխադարձութունը՝ փոխադարձ փոխանակումը հավասարների միջև, կարծես թե ավելի լավ տարբերակ է:
Զրույց 04. Փոխադարձությունը համագործակցությամբ պայմանավորված փոխանակում է յուրաքանչյուր անհատի կամ բոլոր անհատների կատարելագործման համար: Մարդիկ կարող են համագործակցել հանուն երկարաժամկետ վերացական իդեալների, օրինակ՝ ուրիշների երեխաների համար հոգ տանելով կամ անհատական ներդրումներ անելով ընդհանուր առաքելության կամ գործի մեջ: Այսպես որպես մարդ՝ մենք, կարող ենք, ըստ էության, ստեղծել մեր սեփական իրականությունը՝ փոխելով միմյանց հետ շփվելու մեր եղանակը և դրանով իսկ ստեղծելով իրականություն, որը շահավետ է մեզ բոլորիս համար հավասարապես:
Զրույց 05. Ռեսուրսների և կարգավիճակի համար մրցակցելն ստեղծում է հիերարխիա: Հիերարխիան կառուցված է յուրաքանչյուր մակարդակում անհատներին մեկուսացնելու հիման վրա: Երբ մեկուսացնում ենք մյուսներին մեր սեփական շահի համար և առանց հաշվի առնելու, թե ինչ են նրանք արել կամ ինչ չեն արել, դա ուժի կիրառում է և անարդար է: Այս անարդարությունը թուլացնում է անհատների զարգացումը և դրանով՝ ամբողջ հասարակության զարգացումը: Որպես ուժի և մեկուսացման այլընտրանք մարդիկ կարող են ստեղծել արժանիքի վրա հիմնված համակարգ, որը հենված է արդար գործընթացի և արդար չափանիշների վրա: Այսպիսի համակարգի հիմքում թափանցիկությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունն են: Երբ ամեն մեկը գիտի, թե ինչ է իրենից ակնկալվում, բոլորը հավասար են իրենց հնարավորություններում այդ ակնկալիքներին հասնելու ճանապարհին: Երբ բոլորը մասնակցում են՝ ստեղծելու և հավանություն տալու այն չափանիշներին և գործընթացին, որով պետք է գնահատվեն, շատ ավելի հավանական է, որ այն լինի արդար: Երբ նրանք, ովքեր արհամարհում կամ ժխտում այդ չափանիշներն ու գործընթացները, ստիպված լինեն պատասխան տալ կամ պատասխանատվության ենթարկվել իրենց գործողությունների համար, համակարգը կպահպանվի, և նրա նպատակներն էլ իրականության կկոչվեն: Արդարությունը

նորմ չէ: Եվ մենք ստեղծում ենք մեր սեփական արդարությունը այս եղանակներով թե՛ անհատապես, թե՛ հավաքական կերպով՝ որպես հասարակություն:

Զրույց 06

Այս զրույցի ընթացքում ուսումնասիրում ենք վստահությունը: Ահա որոշ հարցադրումներ մեր դիտարկման համար. մյուսների հետ համագործակցելու համար մեզ անհրաժե՞շտ է վստահել միմյանց: Ինչքա՞ն ենք մենք վստահում միմյանց: Մենք վստահում ենք միայն այն մարդկանց, ում ճանաչու՞մ ենք: Մենք կարո՞ղ ենք վստահել մարդկանց, ում չենք ճանաչում: Հասարակության մեջ կա՞ վսհատության կամ անվստահության ընդհանուր մակարդակ: Կարելի՞ է բարձրացնել հասարակության մեջ վստահության մակարդակը:

Ռոբերտ Փութնմը և «Սոցիալական կապիտալը»[16]

Իր աշխատության մեջ ակադեմիկոս Ռոբերտ Փութնմը նկարագրում է մարդկանց միջև վստահության ընդհանուր մակարդակը որպես «սոցիալական կապիտալ»: «Կապիտալը» մի ռեսուրս է, որն օգտագործվում է ավելի շատ ռեսուրսներ ստեղծելու համար: Օրինակ՝ մարդիկ կարող են իրենց գումարն օգտագործել խանութ բացելու կամ բիզնես սկսելու համար, որպեսզի ավելի շատ գումար վաստակեն: Բարձրագույն կրթությունը նույնպես կարող է լինել կապիտալ, որովհետև սովորելու ընթացքում ստացած գիտելիքը կարող է օգնել ավելի լավ աշխատանք ունենալ և/կամ ավելի շատ գումար վաստակել: Ըստ Փութնմի՝ մարդկանց միջև վստահությունը ընդհանուր առմամբ կապիտալ է ներկա և ապագա սոցիալական և տնտեսական փոխազդեցության, համագործակցության և զարգացման համար: Այսպիսի վստահությունը նա անվանում է «սոցիալական կապիտալ»: Դիտարկել նրա աշխատության այս հատվածը.

«Սոցիալական կապիտալի կենտրոնական գաղափարը, ըստ իս, այն է, որ ցանցերը և փոխադարձության համատեղ նորմերն ունեն արժեք: Նրանք արժեք ունեն այն մարդկանց համար, ովքեր դրանց ներսում են, և առնվազն որոշ դեպքերում ունեն ակնհայտ արտաքին արդյունքներ, այնպես, որ նրանք սոցիալական կապիտալի թե՛ հանրային, թե՛ անհատական կողմեր (այսինքն՝ հայեցակետեր) են: Ես մեծամես կենտրոնանում եմ արտաքին արդյունքների վրա (այսինքն՝ օգուտներ), որ հանրությունը վերադարձնում է սոցիալական կապիտալին, բայց կարծում եմ, որ այն ամենևին չի հակասում այն գաղափարին, որ կան նաև անհատական վերադարձներ:

Սոցիալական կապիտալի որոշ ձևեր զգալիորեն պաշտոնական են, ինչպես օրինակ ԾՈՒՄ (Ծնող-ուսուցիչ միությունը) համակարգը կամ ցանկացած տեսակի պետական համակարգ կամ աշխատանքային միություն՝ պաշտոնական կերպով կազմակերպված լինելով ղեկավարի և նախագահի շուրջ, ինչպես նաև անդամակացության պարտականությունների և այլն: Սոցիալական կապիտալի որոշ ձևեր, ինչպես օրինակ՝ մարդկանց խումբը, ովքեր ամեն հինգշաբթի երեկոյան հավաքվում են բարում, մեծապես ոչ պաշտոնական են: Եվ այնուամենայնիվ, նրանք երկուսն էլ ներկայացնում են ցանցեր, որտեղ փոխադարձությունը կարող է հեշտությամբ մեծանալ, և որտեղ կարող են լինել շահեր: Սոցիալական կապիտալի որոշ տեսակներ խիստ միահյուսված են, ինչպես օրինակ պողպատագործների խումբը, որ միասին ամեն օր աշխատում են գործարանում, ամեն կիրակի գնում են կաթոլիկ եկեղեցի և ամեն շաբաթ օր՝ բոուլինգ խաղալու: Սա սոցիալական կապիտալի շատ խիտ, փոխկապակցված, մուլտիպլեքս

[16] Robert Putnam, «Social Capital: Measurement and Consequences», *ISUMA: Canadian Journal of Policy Research*, 2001/2, էջ. 41-51:

ձև է: Կան նաև սոցիալական կապիտալի շատ թեթև, գրեթե անտեսանելի ձևեր, որոնք ունեն ցանցեր և փոխադարձության համատեղ նորմեր, ինչպես օրինակ գլուխ խոնարհելով բարևելը այն մարդուն, ում երբեմն սուպերմարկետում հանդիպում ենք հերթի մեջ:

Մի՛ եղեք չափազանց արհամարհական սոցիալական կապի շատ կենցաղային ձևերի նկատմամբ, որովհետև կա գործնական լավ ապացույց, որ եթե գլուխ եք խոնարհում սրահի մարդկանց, ապա ավելի հավանական է, որ նրանք հասնեն ձեզ օգնության, եթե նոպա կամ սրտի կաթված ունենաք, քան այն դեպքում, երբ իրենց գլուխ չխոնարհեք, եթե նույնիսկ իրենց ընդհանրապես չեք ճանաչում: Ինչ-որ մեկին սրահում պարզապես գլուխ խոնարհելը առաջ է քաշում փոխադարձության տեսանելի, չափելի ձև: Այսպիսով, ինչպես նշեցի՝ կան սոցիալական կապիտալի այսպիսի շատ փոքր դրսևորումներ, ինչպես նաև բավականին կանոնավոր ձևեր՝ երկուսն էլ և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական»:[17]

[17] տե՛ս նույն տեղում, էջ 41:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Ի՞նչ պաշտոնական ցանցերի մասնակից եք դուք, ինչպես օրինակ ինստիտուտը, ընկերակցությունը, ակումբը կամ եկեղեցին: • դուք կարո՞ղ եք հենվել այս ցանցերի կամ հաստատությունների վրա օգնության համար:	Ցանկացած հաստատության նպատակ պետք է լինի ծառայել այն մարդկանց, ովքեր դրա անդամներն են: Վերջիվերջո, ցանկացած հաստատություն պարզապես անհատների ցանց է, ովքեր միացել են, որպեսզի միասին համագործակցեն ընդհանուր նպատակին հասնելու համար: Այս ընդհանուր նպատակը հաստատության առաքելությունն է: Ցավոք, հաստատությունները կարող են կորցնել իրենց նպատակը և դառնալ ինքնանպատակ, որտեղ մասնակիցներից ակնկալվում է ծառայել հաստատությանը և դրա ղեկավարությանը՝ իրենց ընդհանուր նպատակի՝ հաստատության առաքելության շուրջ համագործակցելու փոխարեն: Դուք կարո՞ղ եք հաստատությունների օրինակներ մտածել, որոնք իրենք իրենց ավելի են ծառայում, քան մասնակցող մարդկանց կարիքներին ու շահերին:
2. Եթե ձեզ օգնություն պետք լինի այն հաստատությունից, որին անդամակցում եք, այդ օգնությունը կգա հաստատությունի՞ց, թե՞ ձեզ նման մյուս մարդկանցից, ովքեր հաստատության անդամներ են: Կա՞ տարբերություն:	Սովորաբար հաստատությունները միայն այնքանով են օգտակար կամ համագործակցող, որքանով մասնակից մարդիկ: Հաստատության հարստությունը իր մասնակիցներն են: Եթե մասնակիցները ներդնում են գումարներ, այդ հարստությունը պետք է օգտագործվի մասնակիցների և նրանց ընդհանուր նպատակի՝ հաստատության առաքելության համար: Այն հաստատությունները, որ դուք գիտեք, հստակ առաքելություն ունե՞ն: Նրանք հայտարարու՞մ են իրենց առաքելության մասին, որպեսզի իմանաք:
3. Այն դեպքերում, երբ հաստատությունն ինքնիրեն ավելի է ծառայում, քան մասնակիցների համագործակցային շահերին, ինչու՞ են անհատները շարունակում մասնակցել: Համագործակցությունը փոխադարձությա՞ն վրա է հիմնված: Դիտարկել այս հարցերը ձեր օրինակների առնչությամբ:	Ամենայն հավանականությամբ մարդիկ շարունակում են մասնակցել, որովհետև ցանցը կամ հաստատությունը ծառայում է նրանց ներխմբային ինքնություն տալու համար՝ չնայած ցածր փոխադարձության մակարդակին: Օրինակ, սփյուռքում շատ հայեր մասնակցում են հայկական եկեղեցու արարողություններին ինքնությունը պահելու համար: Հոգևորականությունը երկրորդ տեղում է: Բայց ներխմբային ինքնությունը փոխադարձություն չէ: Սոցիալական կապիտալի ի՞նչ մակարդակ այս ցանցերը կստեղծեն: Ինչքանո՞վ այս ցանցերը

Հարցեր	Զրույցի նպատակներ
	կնպաստեն անհատական զարգացմանը և դրանով՝ հասարակական զարգացմանը:
4. Կարևոր հարցերից մեկն այն է, թե ով է որոշում արդյո՞ք հաստատությունը գործում է կամ օգտագործում է իր ռեսուրսները հանուն ընդհանուր նպատակի և ինչպե՞ս: Մասնակիցները նույնպե՞ս ունեն ճանապարհ որոշում կայացնելուն մասնակցելու համար: Եթե հաստատության ղեկավարը որոշումներ է կայացնում առանց մասնակիցների հետ խորհրդակցելու, այդտեղ կա՞ փոխադարձություն:	Հիշել Զրույց 05-ից, որ փոխադարձության վրա հիմնված համագործակցությունը ասոցացվում է արդարության հետ, ինչը հիմնված է անհատների հավասարության վրա, և ինչը պահանջում է թափանցիկություն, մասնակցություն և հաշվետվողականություն: Եթե ղեկավարները կայացնում են որոշումներ առանց մասնակիցների հետ տեղեկատվությամբ կիսվելու (թափանցիկություն) և առանց մասնակիցների հետ խորհրդակցելու, կամ, այլ կերպ ասած, եթե մասնակիցները չեն կարողանում մասնակցել ինստիտուցիոնալ որոշումներ կայացնելիս, ապա կամ չկա փոխադարձություն, կամ այն ցածր մակարդակի վրա է, քանի որ մասնակիցները հավասար չեն: Համագործակցությունը ամենայն հավանականությամբ հիմնված է ներխմբային ինքնության վրա:

Հարցեր	Զրույցի նպատակներ
6. Մենք կարո՞ղ ենք առանձնացնել ցանցը կամ հաստատությունը իր մասնակիցներից: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ հաստատությունը բավարար կերպով չի նպաստում համագործակցությանը, այս ցանցի մասնակիցներն ավելի հավանակա՞ն է, որ վստահեն միմյանց, եթե նույնիսկ միմյանց շատ լավ չեն ճանաչում: • եթե ավելի հավանական է, որ մասնակիցները վստահեն միմյանց, ավելի հավանակա՞ն է, որ համագործակցեն միմյանց հետ: • սա փոխադարձությու՞ն է: • նորից դիտարկել այն օրինակները, որ քննարկել եք:	Անկախ նրանից՝ հաստատությունը եկեղեցի է, դպրոց, ակումբ կամ գյուղ, համակարգը և իր կառուցվածքը այնքան կարևոր չեն, որքան անհատների մասնակցությունը: Դա այն աստիճանն է, թե որքանով են մասնակիցները ներդրում կատարում հաստատության մեջ որպես միմյանց հետ կիսելու կամ միմյանց աջակցելու մեխանիզմ կամ եղանակ, որ ստեղծում է փոխադարձության վրա հիմնված համագործակցություն: Այլ կերպ ասած՝ հաստատությունն իրենից կարող է ներկայացնել մեծապես ներխմբային ինքնություն՝ որոշ փոխադարձության հնարավորությամբ: Ինչպե՞ս կարող են մասնակիցներն այն փոխել, որ լինի ավելի մեծ փոխադարձություն, ավելի մեծ վստահություն և ավելի մեծ սոցիալական կապիտալ:
7. Մարդկանց ցանցից ձեր ստացած օգնության աստիճանը կախված կլինի՞ ձեր մասնակցության մակարդակից: Ձեր մասնակցության մակարդակը սոցիալական կապիտա՞լ է:	Ամենայն հավանականությամբ այո: Մարդիկ միմյանց օգնում են՝ հիմնվելով այն բանի վրա, թե ինչպես, ըստ իրենց, մյուսը կօգնի կամ կարող է օգնել իրենց:

Հարցեր	Զրույցի նպատակներ
8. Ի՞նչ ոչ պաշտոնական ցանցեր կամ անձնական կապեր դուք ունեք, որոնց վրա կարող եք հույս դնել համագործակցության համար: Այս հարաբերությունները հիմնված են վստահությա՞ն վրա:	Հարաբերությունները կարող են ժառանգվել, ինչպես օրինակ ընտանիքը, կամ ընտրվել, ինչպես օրինակ ընկերները, կամ պատահականության արդյունք լինել, ինչպես օրինակ հարևանները կամ աշխատանքային գործընկերները: Բայց արդյո՞ք համագործակցությունը կախված է հարաբերության տեսակից կամ հարաբերության որակից: Ի՞նչ գործոններ են ազդում հարաբերության որակի վրա:
9. Երբ մենք շփվում ենք անհատի հետ, մենք չգիտենք՝ արդյոք հարաբերությունը սկսում ենք վստահությա՞ն, թե՞ անվստահության հիման վրա: Դա կախված է շփման տեսակի՞ց, թե՞ այն դերից, որ երկու անհատներն էլ խաղում են:	Օրինակ, գնորդի և վաճառողի միջև շփումը կարող է սկսվել անվստահությունից: Ընկերոջ հետ շփումը հնարավոր է սկսվի վստահությունից: Անձի հետ շփվելիս մենք հիմնվու՞մ ենք անձի մասին ընդհանրացումների վրա, ինչպես օրինակ այն դերը, որ նա խաղում է: Ինչքանո՞վ է դա արդարացի:

Հարցեր	Զրույցի նպատակներ
10. Գնորդների և վաճառողների դեպքում, երբ կարող է նախապես անվստահություն լինել, ինչպե՞ս ենք սկսում վստահություն ձեռք բերել: Այլ փոխհարաբերություններում, որոնք սկսվում են վստահության հիման վրա, ինչպե՞ս ենք կորցնում վստահությունը:	Հայաստանում մարդիկ փոխհարաբերություն սկսելիս կամ փոխանակում անելիս իրար կարող են դիմել ընտանիքին վերաբերող եզրույթներով, ինչպես օրինակ «եղբայր», «մորաքույր» և այլն: Ընտանեկան հարաբերություն մեջբերելն ստեղծու՞մ է հարաբերության մի տեսակ, որը ենթադրում է վստահություն: Հարաբերության տեսակը փոխարինու՞մ է հարաբերության որակին: Որո՞նք են վստահություն ձեռք բերելու այլ ճանապարհները:
11. Ճիշտ չէ՞, որ հարաբերությունները զարգանում են: Եթե մենք անընդհատ վերադառնանք միևնույն վաճառողի մոտ, վստահությունը մեծանու՞մ է: Մենք կարո՞ղ ենք նաև կորցնել մարդու հանդեպ վստահությունը: Ի՞նչ օրինակներ ունեք ավելի մեծ վստահության հասնելու կամ մարդկանց մեջ վստահությունը կորցնելու վերաբերյալ:	Ճիշտ չէ՞, որ ցանկացած պահի, երբ շփվում ենք ինչ-որ մեկի հետ, կարող ենք շփվել ավելի մեծ կամ ավելի փոքր վստահությամբ՝ կախված այդ պահին հարաբերության որակից: Կա՞ն վստահության կամ անվստահության աստիճաններ: Կարո՞ղ եք օրինակներ բերել: Որո՞նք են այն գործոնները, որ կապված են վստահության հետ:

Հարցեր	Զրույցի նպատակներ
12. Համագործակցության վրա հիմնված որևէ հարաբերություն ունի՞ թե՛ վստահության, թե՛փոխադարձության կարիք: Ինչպե՞ս են վստահությունն ու փոխադարձությունը փոխկապակցված:	Վստահությունը նախադրյալ է փոխադարձության համար, որը փոխանակում է հավասարների միջև: Հիերարխիան, մեկուսացումը, կոռուպցիան՝ բոլորը, բացասաբար են ազդում բոլորիս միջև վստահության և փոխադարձության վրա: Ո՞րն է սոցիալական կապիտալի և հասարակությունում կոռուպցիայի միջև կապը:

Փոխադարձությունն ընդդեմ հասակակիցների ճնշման

Մի քանի տարի առաջ մարզային համալսարաններից մեկում իրավունքի նույն դասընթացը ես վարում էի ուսանողների տարբեր խմբերի համար: Քննությանը պահանջվում էր իրավական խնդիրների գրավոր վերլուծություն, և ես ուզում էի նույն գրավոր քննությունը տալ բոլոր ուսանողներին: Գիտեի, որ քննությունը հանձնող առաջին խմբի որոշ ուսանողներ ցանկանալու էին հարցերով կիսվել երկրորդ խմբի որոշ ուսանողների հետ: Սա արդարացի չէր մյուս ուսանողների հանդեպ: Ես մտածեցի, որ լուծումը երկու խմբերի հետ քննությունը միաժամանակ անցկացնելն էր: Ցավոք, չկար բավականաչափ մեծ լսարան բոլոր ուսանողների համար, և համալսարանի վարչակազմը տրամադրեց միմյանց կողք գտնվող երկու առանձին լսարաններ: Այսպիսով, բոլորը քննությունը պետք է հանձնեին միաժամանակ, բայց երկու տարբեր տեղերում:

Ես չէի կարող միաժամանակ լինել երկու տարբեր տեղերում: Այսպիսով, դիմեցի ինձ հետ դասավանդած օգնականների: Քննության ընթացքում նրանք պետք է հետևեին ուսանողներին և կիրառեին խաբեության դեմ կանոնները: Նրանց խնդրեցի դադարեցնել քննությունը ցանկացած ուսանողի համար, ով կխոսեր կամ կհաղորդակցվեր քննության ընթացքում, և ուսանողներին նախազգուշացրի քննությունը դադարեցնելու հետևանքների մասին. նրանք դասընթացը չէին անցնի: Լսարանում բաժանեցի քննաթերթիկները և այնուհետև գնացի մյուս լսարան:

Արդեն կարող եք կռահել՝ ինչ եղավ: Մինչ ես կսկսեի քննությունը երկրորդ լսարանում, արդեն պատի այն կողմից լսվում էին առաջին լսարանի խոսակցությունները: Երբ վերադարձա առաջին լսարան, բոլորը խոսում էին. վատ պատրաստված ուսանողները հարցեր էին տալիս լավ պատրաստված ուսանողներին, և լավ պատրաստված ուսանողները պատասխանում էին վատ

պատրաստված ուսանողներին: Վերահսկողները կարծես ցանկություն չունեին կամ վախենում էին միջամտել:

Այնուհետև կատարվածի մասին ես խոսեցի հոգեբան ընկերոջս հետ: Նրա կարծիքով այն, ինչ ես հաշվի չէի առել, այն էր, որ լսարանից դուրս՝ փոքր համայնքում, բոլորը կախված են միմյանցից: Սա հատկապես ճշմարիտ էր՝ սահմանում անկայունությունը և տնտեսական վատ պայմանները հաշվի առնելով: Այսպիսով, վերահսկողները չէին ցանկացել ռիսկի դիմել ուսանողի դեմ գործողություն անելով, քանի որ հնարավոր էր՝ նա կապված լիներ ինչ-որ մեկի հետ, ում կարիքը իրենք կարող է մի օր ունենային: Հոգեբանը նաև ավելացրեց, որ ծանր սոցիալական միջավայրում լավ պատրաստված ուսանողները քննության ընթացքում վատ պատրաստված ուսանողներին օգնելն ընկալում էին ոչ թե որպես խաբեություն, այլ համագործակցություն:

Քննության ընթացքում ուսանողների միջև հաղորդակցությունները խստորեն հսկելու իմ անկորողության պատճառով ամենքն իրենց քննական հարցի դիմաց ինչ-որ բան գրել էին, և եթե ճիշտ եմ հիշում, բոլորը հաղթահարել էին: Բայց քանի որ քննությունը վերլուծական էր, լավ պատրաստված ուսանողները կարողացել էին ավելի լավ պատասխանել և ստանալ ամենաբարձր գնահատականները:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Քննության ընթացքում ուսանողները համագործակցու՞մ էին, թե՞ խաբում: Դա կախվա՞ծ է նրանից, թե արդյոք նրանք հասկանում էին արժանիքի դերը. գործընթացը և չափանիշները:	Եթե մարդիկ չեն հասկանում արժանիքի դերը, ապա նրանք չեն կարող հասկանալ խաբեության դեմ կանոնի արժեքը: Ցանկացած կանոն ունի նպատակ: Քննության ընթացքում հաղորդակցվելն արգելող կանոնը կոչված էր ստեղծելու հաշվետվողականություն ուսանողների գնահատման արժեքային համակարգում: Հիշել, որ արժեքային համակարգը պահանջում է թափանցիկություն, մասնակցություն և հաշվետվողականություն: • եթե մարդիկ չեն հասկանում կանոնի կարևորությունը, ինչու՞ պետք է դրան ենթարկվեն: • ավելի շա՞տ մարդիկ կենթարկվեին կանոններին, եթե հասկանային և համաձայնվեին կանոնների նպատակների հետ՝ բռնվելու դեպքում պատժից պարզապես վախենալու փոխարեն: • սա նաև նշանակու՞մ է, որ մարդիկ պետք է մասնակցություն ունենան կանոնների ստեղծման մեջ:

Հարցեր	Զրույցի նպատակներ
2. Եթե դուք ունենայիք իրավական խնդիր, ո՞ր փաստաբանը կուզենայիք, որ ձեզ օգներ. լավ պատրաստված ուսանողների՞ց մեկը, թե՞ վատ պատրաստված ուսանողներից մեկը: Քանի որ նրանք բոլորն անցել են դասընթացը, ինչպե՞ս եք իմանալու՝ ով ով է:	Այս հարցը մեկ այլ օրինակ է արժանիքի արժեքի դերի կամ կարևորության մասին: Ո՞ր բժշկին եք դուք դիմում. այն բժշկական ուսանողին, ով կաշառք է տվել դասընթացներն անցնելու համար, թե՞ նրան, ով սովորել է, որպեսզի դասընթացներն անցնի: Ո՞ր ուսանողն է ինքնիրեն ավելի շատ զարգացնում: Ո՞ր ուսանողն է հասարակության զարգացումը ավելի խթանում:
3. Վերոնշյալ պատմությունում լավ պատրաստված ուսանողները օգնում էին չպատրաստված ուսանողներին փոխադարձությա՞ն հիման վրա: • եթե պատասխանեցիք այո, ապա ինչու՞մ էր փոխադարձությունը, այսինքն ի՞նչ էին լավ պատրաստված ուսանողները դրա դիմաց ստանում:	Քանի դեռ ճշմարիտ է, որ պատրաստված ուսանողները կարող է ունենան ակնկալիք չպատրաստված ուսանողների հետագա օգնության կամ վերջիններիս ազդեցիկ կապերի առնչությամբ, այսօր օգնության այս փոխանակումը ապագայի հնարավոր օգնության դիմաց ազա՞տ է արվում, այն կամավո՞ր է արվում: Ըստ հոգեբանի՝ պատրաստված ուսանողները վախենում էին, որ նրանք չպատրաստված ուսանողների կապերի կարիքը կարող է ունենան: Բացի այդ, վերահսկողները վախենում էին պատժել ուսանողին, ով հնարավոր է ավելի կարևոր կապեր ունենար, քան իրենք: • դուք համաձա՞յն եք հոգեբանի հետ, որ այն ավելի շատ ռիսկի չդիմելու, հետևանքներից վախենալու մասին էր, քան կամավոր համագործակցության: • դուք ունեցե՞լ եք նման փորձ: Բացատրեք խնդրում եմ: • ո՞րն է տարբերությունը հարկադրանքի և փոխադարձության միջև:
4. Ո՞ր հանգամանքներն են սահմանում ընտրությունը: Ե՞րբ է ինչ-որ բան համարվում ընտրություն և ե՞րբ ընտրություն չէ:	Կան երկու գործոններ, որ սահմանում են ընտրությունը: Գործոններից մեկն այն է, որ անհատը պետք է իմանա, որ կա մեկ այլ տարբերակ բացի նրանից, թե ինչ է ինքն անում կամ պատրաստվում անել. նրանք պետք է իմանան, որ կա այլընտրանք: Մյուս գործոնն այն է, որ անհատը պետք է գործի կամավոր կերպով: Դուք համաձայն չե՞ք:

Հարցեր	Զրույցի նպատակներ
5. Ճշմարիտ փոխադարձությունն ակնկալու՞մ է ընտրություն:	Կա՞ կապ ընտրության և հավասարության միջև:
6. Ճշմարիտ փոխադարձությունն ակնկալու՞մ է հավասարություն:	Օգնությունը՝ վախից կամ զգուշավորությունից դրդված, իրականում օգնություն չէ, այնպես չէ՞: Փոխադարձությունը հավասարների միջև փոխադարձ փոխանակում է:

Պատերազմի տիրակալները, հարկադրանքը և կախվածությունը

Ստորև մի ակադեմիկոսի՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային պետությունների վերակառուցման համառոտ նկարագրությունն է:

Խորհրդային միության փլուզմամբ առաջ եկավ տարրական անապահովությունը և ռեսուրսների բաշխման եղանակների խզումը: Անկարգությունը որոշ անհատների համար հնարավորություն էր կազմելու և առաջնորդելու խմբեր, ովքեր տիրացան պետական գույքին և իշխեցին փողոցներում: Այս համատեքստում տարբեր անկախ պետությունների վերակազմավորումն սկսվեց այսպիսի խմբերի գլխավորների միջև ոչ պաշտոնական և պաշտոնական պայմանագրերի կնքման տեսքով, որովհետև այս խմբերը կարող էին կամ դիմել բռնություն, կամ ստեղծել կարգուկանոն՝ կախված նրանից, թե որն էր իրենց այդ պահին ձեռնտու: Օտար երկրներն ու ինստիտուցիոնալ ժառանգությունը՝ ԽՍՀՄ-ի ժամանակ հիմնադրված հաստատությունները, որ նոր պետությունը ժառանգել էր, սահմանում էին շրջանակ նոր պետությունների համար: Բայց իշխանությունն իրացվում էր այս խմբերի գլխավորների կողմից, որոնց կարելի է անվանել «բռնության ձեռնարկանատերեր»: Երբ «բռնության ձեռնարկանատերերը» հասկացան, որ պետությանը տրամադրվող օտարերկրյա օգնությունն ավելի շահավետ էր ինքնիշխան պետություն ստեղծելու համար, նրանք համաձայնության եկան, թե ով պետք է լինի պայմանական նախագահը և միասին աշխատեցին՝ ստեղծելու կարգուկանոն օտարերկրյա օգնություն ստանալու համար: Պայմանական նախագահը բաժանում էր օտարերկրյա օգնության հարստությունը «բռնության ձեռնարկանատերերի» միջև ապստամբությունից խուսափելու համար: Բայց ժամանակի ընթացքում նախագահը կարող էր նաև միմյանց դեմ հանել «բռնության ձեռնարկանատերերին»՝ բաժանիր և տիրիր խաղի կանոնների համաձայն և իր համար իշխանություն ապահովեր: Այն «բռնության ձեռնարկանատերերը», ովքեր չէին մասնակցում խաղին ճիշտ ժամանակ, պարտվում էին, մինչդեռ նրանք, ովքեր խաղի մեջ էին, կարողանում էին վերականգնել իրենց հեղինակությունը և դառնալ «լեգիտիմ» քաղաքական դերակատարներ[18]:

[18] Jesse Driscoll, *Warlords and Coalition Politics in Post-Soviet States,* UK, Cambridge University Press, 2015:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Ինչքանո՞վ է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պետությունների կազմավորման այս նկարագրությունը համապատասխանում հայկական իրականությանը:	Հայտնի է, որ ամենանշանավոր պատգամավորները ԽՍՀՄ-ի վերջում պետության գույքից գոյացած և/կամ նրանց համար ոչ պաշտոնապես երաշխավորված մոնոպոլիաների հիման վրա բիզնեսներ ունեն: Այս մարդիկ մոնոպոլիաներ ունեն ինչի՞ դիմաց և երաշխավորված ու՞մ կողմից: Հաճախ հասցեագրված որպես օլիգարխներ՝ նման մարդկանց ընտրության լեգիտիմությունը երբեմն կասկածի տակ է դրվում:
2. Հայ հասարակությունը կազմված է մրցակցո՞ղ ցանցերից, թե՞ սերտաճած ցանցից: Քաղաքական կուսակցությունները մրցակցո՞ղ ցանցեր են:	Ավելի լա՞վ կլիներ հարցնել, թե ինչքանո՞վ է հայ հասարակությունը կազմված մրցակցող ցանցերից և միաժամանակ սերտաճած ցանցից: Սերտաճած ցանցը Հանրապետությու՞նն է, թե՞ Հանրապետական կուսակցությունը:
3. Հայաստանում համագործակցությամբ պայմանավորված փոխադարձությունը հիմնված է տարբեր ցանցերում մասնակցությա՞ն, թե՞ մասնակցող քաղաքացու վրա:	Ավելի լա՞վ կլիներ հարցնել՝ ինչքանով է համագործակցությամբ պայմանավորված փոխադարձությունը հիմնված ցանցերում մասնակցության կամ մասնակցող քաղաքացու վրա: Բացի այդ, այն ցանցերը, որոնց շատ մարդիկ են անդամակցում, հանրայի՞ն են, թե՞ մասնավոր կամ ինչքանո՞վ են հանրային և ինչքանո՞վ մասնավոր: Որքանո՞վ այնտեղ կա թափանցիկություն:
4. Ցանցերի ներսում, որոնց շատ հայեր են անդամակցում, բոլո՞ր մասնակիցներն են մասնակցում որոշում կայացնելիս: Ո՞րն է որոշում կայացնելու մեջ մասնակցության և փոխադարձության միջև կապը:	Ստացվում է, որ շատ հայեր պետք է ստանան ռեսուրսներ, ինչպես օրինակ աշխատատեղերը, ցանցերում մասնակցելու միջոցով՝ անկախ այն բանից, թե դա քաղաքական կուսակցություն է, թե ոչ պաշտոնական ցանց, որ գլխավորվում է առաջնորդի կողմից — «կռիշը ո՞վ է»: Այնուամենայնիվ, այս ցանցերը սովորաբար հիերարխիկ են, և որոշումները չեն կայացվում մասնակիցների հետ խորհրդակցելու արդյունքում: Սա նշանակում է, որ համագործակցությունը հիմնված է ներխմբային ինքնության և ոչ թե փոխադարձության վրա:

Հարցեր	Զրույցի նպատակներ
5. Եթե ցանցերի մեծ մասը արտացոլում են ներխմբային ինքնությամբ պայմանավորված համագործակցություն, ի՞նչ արժեք է տրվում անհատին և անհատի մասնակցությանը: Մասնակիցները համարվու՞մ են հավասար:	Փոխադարձությամբ պայմանավորված համագործակցությունն արտացոլում է մասնակիցների միջև հավասարություն և հավասար արժեք: Ներխմբային ինքնությունը՝ ոչ: Համագործակցային ո՞ր ցանցի տեսակն է (փոխադարձությա՞ն, թե՞ ներխմբային ինքնության վրա հիմնված) ավելի խթանում և նպաստում անհատական զարգացմանը և դրանով՝ ամբողջ հասարակության զարգացմանը:
6. Հայաստանի Հանրապետությունը հաստատությու՞ն է՝ ստեղծված մասնակիցների՝ քաղաքացիների ընդհանուր շահերին ծառայելու համար: Այն պե՞տք է լինի:	Ըստ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի պետական իշխանությունը պատկանում ժողովրդին և իրականացվում է ժողովրդի կողմից: Իրականում, միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունները գոյություն ունեն զուտ իրենց բնակչությանը ծառայելու նպատակի համար:

Հարցեր	Զրույցի նպատակներ
7. Հաշվի առնելով, որ պետությունները միայն գոյություն ունեն իրենց բնակչությանը ծառայելու համար. • եթե պետությունը՝ որպես հաստատություն, բավարարաչափ չի աջակցում անհատական և հասարակական համագործակցությանը և զարգացմանը, ինչու՞ են մարդիկ մասնակցում: • բացի այդ, մարդիկ կարո՞ղ են ստեղծել փոխադարձության այլ, սոցիալական կապիտալի վրա հիմնված այլընտրանքային ցանցեր իրենց սեփական կարիքները հոգալու համար:	Սովորաբար պետությունները պահանջում են քաղաքացիներից մասնակցել հարկադրաբար և/կամ համոզելով քաղաքացիներին, որ նրանք ունեն պետության կարիքը անվտանգության և հանրային ծառայությունների, ինչպես օրինակ կոմունալ ծառայությունների համար, եթե նույնիսկ քաղաքացիները պետք է վճարեն այդ ամենի դիմաց: Պետությունները նաև վերահսկում են ռեսուրսները (էլէկտրականություն, գազ, ոռոգման ջուր), որպեսզի քաղաքացիները կարողանան օգտվել նման ռեսուրսներից միայն պետության միջոցով: Այնուամենայնիվ կան այլընտրանքներ, ինչպես օրինակ, երբ համայնքն զբաղվում է ինքնագործունեությամբ, որպեսզի ինքը պետության կարիքը չունենա: Փարփի գյուղում, օրինակ, համայնքը հասանելիություն է ապահովել գետին, որպեսզի ստեղծի իր սեփական ոռոգման համակարգը, որն ինքն է կառավում, և այլևս կախվածություն չունենա պետական ոռոգման համակարգից: Դուք գիտե՞ք այլ օրինակներ, երբ համայնքները փոխադարձության հիման վրա զբաղվել են ինքնագործունեությամբ:
8. Հայկական գյուղերում գյուղացիները ինքնակազմակերպվում են, որպեսզի անասուններին հերթով տանեն արոտավայր: Սա համայնքային ինքնագործունեության մեկ այլ օրինա՞կ է: Սա արտացոլու՞մ է սոցիալական պայմանագիրը:	Որպեսզի գյուղացիները շահեն նմանատիպ համագործակցությունից, պետք է վստահեն միմյանց: Նրանք վստահում են միմյանց, որովհետև իրենք բոլորը նույն շահն են հետապնդում, և իրենք բոլորը հավասար են իրենց շահի տեսանկյունից, այն է՝ իրենց անասուններին արածեցնելը: Փոխադարձությամբ պայմանավորված այս համագործակցությանը նպաստում է թափանցիկությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունը: Սա նաև սոցիալական կապիտալի մի համակարգ է, որտեղ որքան երկար են անհատները մասնակցում, այնքան ավելի են վստահում համակարգին և մեկը մյուսին: Գյուղացիները կարո՞ղ են օգտագործել այս սոցիալական կապիտալը այլ ծրագրերում ևս համագործակցելու համար: Եթե գյուղացիները կարողանային բարձրացնել իրենց ինքնագործունեության մակարդակը, ո՞րը կլիներ պետության դերը: Պետությունը

Հարցեր	Զրույցի նպատակներ
	կո՞ղմ է քաղաքացիների՝ ինքնագործունեությամբ զբաղվող ցանցերին, թե՞ ոչ:
9. Վացլավ Հավելը՝ Չեխոսլովակիայի առաջին նախագահը, ասել է, որ Չեխոսլովակիայում կոմունիստական պետությունը տապալվել է, երբ մարդիկ պարզապես դադարել են ուշադրություն դարձնել դրան: Ձեր կարծիքով նա ի՞նչ նկատի ուներ:	

Եզրակացություն

Այս զրույցի ընթացքում քննարկել ենք, թե ինչքանով ենք միմյանց վստահում և ինչ մեխանիզմներ կամ մեթոդներ ենք օգտագործում՝ ավելի մեծ վստահություն ստեղծելու, որպեսզի միմյանց հետ ավելի լավ աշխատենք: Վստահությունը հիմնված է փոխադարձության և համագործակցության վրա: Վստահությունը հիմնված է հավասարության և արժանապատվության վրա: Մյուսների հետ մեր շփումների մեջ մենք կա՛մ փոքրացնում, կա՛մ մեծացնում ենք վստահության մակարդակը և հավասարության ու արժանապատվության մակարդակը, որ կիսում ենք միմյանց միջև մեր անձնական հարաբերությունների մակարդակում, ինչպես նաև մեր ամբողջ հասարակության մակարդակով:

ԶՐՈՒՅՑ 07: ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Նախորդ զույցներում դուք ուսումնասիրել եք վեց տարբեր, բայց փոխկապակցված թեմաներ: Այս զրույցի շրջանակներում կրկնում ենք այդ վեց թեմաները լրացուցիչ վարժությունների միջոցով:

Զրույց 01-ի կրկնություն. Անհատը

Ամեն անհատ եզակի է, և իրականությունը սուբյեկտիվ է, բայց մենք կառուցում ենք համատեղ իրականությունն ընդհանրացումների և նորմերի միջոցով մշակույթի և լեզվի օգնությամբ:

Այլընտրանքային իրականությունների համար տարածք ստեղծելը. Մատթեոս Զարիֆեան՝«Կարեկցութիւն»

Վարժություն. ստորև նախորդ դարասկզբի բանաստեղծություն է՝ գրված արևմտահայերենով: Թող ինչ-որ մեկը կարդա ամբողջական բանաստեղծությունը բարձրաձայն:

Կարեկցութիւն

Պզտիկ աղջիկ մ’ինծի կ’ըսէ
Թէ զիս խենթի պէս կը սիրէ.
Պզտիկ աղջիկ մը զիս սիրէ՜…

Գիշերն անհուն իմ աչքերուն
Երևի դեռ նա չէ տեսեր.
Պզտիկ աղջիկ մ’ինծի տայ սէ՜ր…

Երևի դեռ նա չէ նայեր
Հոգւոյս խաւար անդնունդն ի վար.
Պզտիկ աղջիկ մ’ինձ սիրահա՜ր…

Եթէ լսեր թէ ո՛չ մէկ սէր
Այդ անդունդին մէջ կը շնչէր՝
Հէք պզտիկը չէ՞ր հառաչեր…

Ուստի եղբօր մը պէս ըսի
Թէ լուսնին տակ մարդ կըմրսի.
«Գնա՛, գնա՛, ննջէ՛» ըսի.
Յետոյ գացի հեռուն լացի…

Մատթեոս Զարիֆեան

Հարցեր	Զրույց
1. Ինչպե՞ս է ամեն մեկը մեկնաբանում բանաստեղծությունը: Նրանք, ովքեր նախկինում լսել են բանաստեղծությունը, ո՞ր տարիքում եք լսել առաջին անգամ և ի՞նչ համատեքստում: Նախկին փորձն այսօր ազդու՞մ է բանաստեղծության ձեր մեկնաբանության վրա:	
2. Արևմտյան Հայաստանի դպրոցներում հաճախ ուսուցանվում է, որ բանաստեղծությունը երիտասարդ աղջիկներին երտասարդական գայթակղություններից պաշտպանելու մասին է: Այնուամենայտիվ, հնարավո՞ր է լինեն այլընտրանքային իմաստներ: Ինչու՞:	

Այժմ կարդալ յուրաքանչյուր տունը և մեկ առ մեկ քննարկել յուրաքանչյուր տան համար նախատեսված հարցերը նախորդ տների ու հարցերի լույսի ներքո:

«Կարեկցութիւն»	Հարցեր զրույցի համար
1. Պզտիկ աղջիկ մ’ինձի կ’ըսէ Թէ զիս խենթի պէս կը սիրէ. Պզտիկ աղջիկ մը զիս սիրէ՜… 2. Գիշերն անհուն իմ աչքերուն Երևի դեռ նա չէ տեսեր. Պզտիկ աղջիկ մ’ինձի տայ սէ՜ր…	Ի՞նչ չի տեսել աղջիկը տղայի աչքերում, և ո՞րն է դրա կարևորությունը:
3. Երևի դեռ նա չէ նայեր Հոգւոյս խաւար անդնունդն ի վար. Պզտիկ աղջիկ մ’ինձ սիրահա՜ր…	Ինչու՞ կարող է նրա հոգին խավար անդունդ լինել:
4. Եթէ լսեր թէ ո՛չ մէկ սէր Այդ անդունդին մէջ կը շնչէր՝ Հէք պզտիկը չէ՞ր հառաչեր… 5. Ուստի եղբօր մը պէս ըսի Թէ լուսնին տակ մարդ կըմրսի. «Գնա՛, գնա՛, ննջէ՛» ըսի.	Արևմտահայերենում նույնպես «ոչ»-ը բային ժխտական իմաստ է հաղորդում, հետևաբար նշանակում է՝ ոչ մի սեր չի շնչել այնտեղ: Ո՞րն է ոչ մի սեր չշնչելու կարևորությունը: Ինչու՞ է հնարավոր կլինի մրսել լուսնի տակ: Ո՞րն է լուսնի լույսի էության կարևորությունը: Հեղինակը լուսնի նման միայն արտացոլա՞նքն է այն բանի, թե ինչպիսին է աղջիկը կամ հասարակությունն ակնկալում, որ նա լինի:
6. Յետոյ գացի հեռուն լացի…	Ու՞մ համար է նա լաց լինում: Ինչու՞: Եվ ինչու՞ հեռու:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Արդյո՞ք բանաստեղծության ձեր ընդհանուր մեկնաբանությունը փոփոխվեց այժմ, երբ դուք պատասխանեցիք յուրաքանչյուր տանը վերաբերող հարցերին: Այլ կերպ ասած՝ դուք կարո՞ղ եք օգտագործել բանաստեղծության ամբողջական լեզուն այն փաստարկի մեջ, որն օգնում է ձեզ դրա նշանակությունը մեկնաբանելիս:	Ձեր մեկնաբանությունը բացատրելիս դուք պետք է հենվեք տղամարդկանց և կանանց մասին ընդհանրացումների՞ վրա, և ո՞րտեղից են այդպիսի ընդհանրացումները գալիս: Արդյո՞ք այդ ընդհանրացումները միշտ ճիշտ են: Այլապես, արդյո՞ք բանաստեղծության ձեր մեկնաբանությունը հիմնվում է ձեր սեփական փորձի վրա ավելի, քան բանաստեղծության բառերի վրա:
2. Որքանո՞վ ենք իրականությունը մեկնաբանելիս կանոնավոր կերպով հարկադրում մեր սեփական փորձն ուրիշների փորձի վրա: Օրինակ, մի մարդու համար, ով ստիպված է եղել թաքցնել իր անփոփոխ մի մասն ուրիշներից՝ ինչպես ես եմ ստիպված եղել անել, բանաստեղծությունն ունի այլ իմաստ: 2-րդ տունը իրական ով լինելը թաքցնելու մասին է. կրկի՛ն կարդալ 2-րդ տունը: 3-րդ տունը տարբեր լինելու պատճառով ամոթի զգացողության մասին է. կրկի՛ն կարդալ 3-րդ տունը: 4-րդ տունը սեր չճաշակելու մասին է բավարար ազատ չլինելու պատճառով՝ սիրուն հնարավորություն չտալուց ելնելով. կրկի՛ն կարդալ 4-րդ տունը: 5-րդ տունը որպես ուրիշ ձևանալու մասին է, քանի որ լուսինը «կեղծ լույս» է (այսինքն՝ միայն արտացոլանքն է արևի լույսի), ինչը նշանակում է լույս, որը երբեք չի կարող ջերմացնել. կրկի՛ն կարդալ 5-րդ տունը: 6-րդ տունը ներկայացնում է երբևէ սիրելու և ամոթի մեջ թաքնվելու կարիք ունենալու հուսահատությունը (վերջին տող):	Ինձ համար բանաստեղծությունը գեյ լինելու մասին է, քանի որ կանայք սիրել են ինձ և ակնկալել են սեր ինձնից, բայց ինձ համար կեղծ կլիներ ասել նրանց, որ ես սիրում եմ իրենց: Սա իմ «օվկիանոս»-ն է:

Հարցեր	Զրույցի նպատակներ
3. Ինչքանո՞վ մենք ունենք բանաստեղծությունների ստանդարտ մեկնաբանություններ կամ ստանդարտ գաղափարներ այն մասին, թե ինչպես տղամարդիկ և կանայք պետք է գործեն կամ ինչ կարիերա նրանք պետք է ունենան: Ինչքանո՞վ ենք մենք թույլ տալիս, որ յուրաքանչյուր մարդ արտահայտի բանաստեղծության իր այլընտրանքային մեկնաբանությունը կամ ապրի իր կյանքով:	Երբ մենք պնդում ենք, որ յուրաքանչյուր անհատ համապատասխանի ստանդարտ մեկնաբանության կամ դերի կամ ակնկալիքի, մենք լռեցնու՞մ ենք այլընտրանքային մեկնաբանությունները, որոնք արտացոլում են այլընտրանքային փորձերը, այլընտրանքային իրողությունները, այլընտրանքային «օվկիանոսները»: Հաշվի առնելով անհատների եզակիությունը և իրականության սուբյեկտիվությունը՝ համապատասխանությունը կեղծ իրականությու՞ն չի կառուցում, և որքանով մեծ է համապատասխանության աստիճանը, այնքան ավելի կեղծ չի՞ իրականությունը:
4. Ամեն անհատ եզակի է, և իրականությունը սուբյեկտիվ է, բայց մենք կառուցում ենք համատեղ իրականություն ընդհանրացումներով և նորմերով մշակույթի և լեզվի միջոցով: Որքա՞ն հաճախ ենք մոռանում այս մասին:	

<u>Զրույց 02-ի կրկնություն</u>. Համատեղ շրջանակներ

Մինչ համատեղ շրջանակները կամուրջ են հանդիսանում սուբյեկտիվ անհատների միջև, կառուցված իրականություններն աշխարհի մասին մեկնաբանություններ են, որոնք հնարավոր է չարտացոլեն ամեն մեկի «օվկիանոսը» կամ իրականությունը և կարող է նաև լինեն սխալ կամ ոչ ճշմարիտ այն հասկացողությունների համեմատությամբ, որոնք առաջ են եկել գիտական մեթոդներով և փորձարկումների միջոցով:

Ամեն ինչ այնպիսին է, ինչպիսին ենթադրվու՞մ է, որ պետք է լինի

Մարդը, ընկույզը և ձմերուկը

Մի մարդ ընկույզի ծառի տակ ձմերուկ էր ցանել: Պտուղի ժամանակ եկավ, տեսավ մեծ-մեծ ձմերուկները, նայեց ծառին, տեսավ, որ ընկույզը մանր էր: Մարդն ասաց.

— Տե՛ր աստված, ինչ որ ստեղծել ես՝ ամենը կարգին է և մի բանի նման: Իսկ այս երկու պտուղն անկարգ են և բանի նման չեն:

Մարդն ասում էր, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին, և ընկույզը՝ ձմերուկի թփի վրա: Նա պառկեց ծառի տակ և նայեց ծառին: Հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից, ընկավ նրա ճակատին, ճակատը պատռեց, ու սկսեց արյուն գալ: Մարդը վեր կացավ տեղից և աղաղակեց.

— Տե՛ր աստված, ինչ որ ստեղծել ես, ամենը կարգին է ու կատարյալ, և ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը թող իմից վատ լինի, որովհետև եթե ընկույզի տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ:

ըստ Վարդան Այգեկցու

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Այս պատմությունը հումորայի՞ն է: Ինչու՞ այո կամ ոչ:	Արդյո՞ք տղամարդու կողմից բնության սխալ մեկնաբանությունը հումորային է:
2. Ինչու՞ տղամարդն ասոցացրեց ձմերուկը ծառի հետ, իսկ ընկույզը՝ թփի: Տղամարդը ընդհանրացու՞մ օգտագործեց:	Չափսի ասոցացիա. ենթադրությունն այն է, որ որքան մեծ է թուփը, այնքան մեծ է դրա միրգը: • արդյո՞ք սա չափսի մասին ընդհանրացում է:
3. Որո՞նք են ընդհանրական ենթադրությունները «բնական»-ի ու «անբնական»-ի մասին: Ինչպե՞ս կարող ենք իմանալ այսպիսի ենթադրությունները ճի՞շտ են, թե՞ սխալ:	Եթե իմ «օվկիանոսը» տարբեր է քո «օվկիանոսից», ո՞րն է նրանցից բնականը: Թե՞ նրանք երկուսն էլ բնական են մեզնից յուրաքանչյուրի համար: Ինձ համար իմ բնությունը գեյ լինելն է, և դա բնական է ինձ համար: Բայց ես հարգում եմ, որ ձեր բնությունը կարող է լինել տարբեր:
4. Մարդկային էմոցիաները բնակա՞ն են: • եթե այո, ապա երբ մենք զսպվածություն ենք ցուցաբերում մեր ցանկությունների դրսևորման մեջ, քանի որ մշակութային նորմերն այդպես են մեզ պարտադրում, սա «անբնական» չէ՞: • եթե ամուսնությունը համարվում է «բնական», «անբնական» չէ՞ քահանաների համար լինել ամուրի. այնումամենայնիվ դա ողջունվում է եկեղեցու կողմից: • որքան հաճա՞խ է բնական/ոչ բնական փաստարկի հիմքում ընկած իրականության սխալ մեկնաբանությունը:	Այն, ինչ «բնական» է կամ «անբնական» է սովորաբար ընդհանրացում է՝ ստեղծված և պարտադրված ուժ ունեցողների կողմից՝ առանց մյուսների «օվկիանոսները» հաշվի առնելու:
5. Ինչու՞ են տղամարդիկ ասոցացվում ակտիվ լինելու հետ, իսկ կանայք՝ պասիվ: • այսպիսի ասոցացիան պաշտպանվու՞մ է «բնական» լինելու հիմքով: • Ձորագյուղի պատմությունն ապացուցու՞մ է, որ ասոցացիան սխալ է:	Չնայած կա այնպինի ենթադրություն, որ տղամարդկանց համար «բնական» է լինել ակտիվ և կանանց՝ լինել պասիվ, սա «ինքնաբավարարման մարգարեություն» է, որովհետև պասիվ կամ ակտիվ լինելն ուսուցանվում է որպես մեր գենդերային դերի մի մաս: Մշակութային շրջանակներից դուրս ակտիվ լինելը և ընտրություններ կատարելը ոչ մի զուգորդում չունի անձի սեռի հետ:

Հարցեր	Զրույցի նպատակներ
6. Ի՞նչ է նշանակում «տղամարդ կին»: • երբ մի կնոջ վարքագիծը տարբերվում է նորմից, դա կանոնի բացառությու՞ն է: • եթե կանանցից բաղկացած գյուղը կարողանում է ապրել առանց տղամարդկանց, այս կանայք նորմի բացառությու՞ն են, թե՞ նորմն է սխալ: • որքա՞ն օրինակներ են անհրաժեշտ ցույց տալու համար, որ ընդհնարացումն իրականությունը չի արտացոլում:	Սիմոնա դը Բովուարի «Երկրորդ սեքս» գրքում (1949) այս ֆրանսիացի փիլիսոփան պնդում է, որ կանացիության (այն, ինչ կինն է) հայեցակարգը հանդիսանում է սոցիալական կառույց, որը ժխտում է կանանց սուբյեկտիվությունը, անհատականությունը և մարդկայնությունը, քանի որ նկարագրում է կանանց միայն տղամարդկանց առնչությամբ և ի հակադրություն տղամարդկանց. այս առասպելի մեջ իգականության դերը պասիվ է, քանի որ առանց տղամարդկանց հետապնդման, հրապուրման և կանանց հետ նրանց ամուսնության, կանայք չունեն գոյություն ունենալու այլ պատճառ սոցիալական կառուցվածք ունեցող այս արական իրականության մեջ:
7. Ո՞ր մեթոդաբանությունն ավելի լավը կլինի՝ որոշելու, թե որն է բնական, այսինքն այն, ինչ սովորաբար տեղի է ունենում բնության մեջ. մշակու՞յթը, թե՞ գիտությունը:	

<u>Զրույց 03-ի կրկնություն.</u> Համագործակցություն

Բոլոր մարդիկ մրցակցում և համագործակցում են: Մեր խումբը մեկ այլ խմբի հակադրությամբ դիտարկելը կարող է հեշտացնել համագործակցությունը մեր խմբի ներսում, բայց նաև հանգեցնել կարծրատիպերի ստեղծման ու մյուսներին մեկուսացնելուն, ինչը նրանք նույնպես կարող են անել մեր հանդեպ: Փոխադարձութունը՝ փոխադարձ փոխանակությունը հավասարների միջև, կարծես թե ավելի լավ տարբերակ է:

Հակադրվող խմբեր

«Օրիենտալիզմ», Էդվարդ Սայիդ

Էդվարդ Սայիդը պաղեստինցի էր, ով հայտնի պրոֆեսոր դարձավ Ամերիկայի միացյալ նահանգներում: Նրա ամենահայտնի գիրքը «Օրիենտալիզմն» է: Այս գիրքն այն մասին է, թե ինչպես են ուժ ունեցողներն ստեղծում և խթանում ուրիշների որոշակի կերպարը: Ավելի կոնկրետ դա այն մասին է, թե ինչպես են մարդիկ և երկրները ներկայացված մշակութային և ակադեմիական աշխատանքներում, և հատկապես, թե ինչպես է Արևմտյան Եվրոպայի

մտածողությունն իրականում ստեղծում «արևելքի» գաղափարը: Սայիդի համար «արևելքը» ոչ թե կոնկրետ տեղ կամ մշակույթ է, այլ մտավոր գաղափար, կենսակերպի հորինված հայեցակարգ, որն ստեղծվել է եվրոպական քաղաքակրթության ճիշտ հակառակը լինելու համար: Այս գաղափարի ստեղծումից հետո եվրոպական գաղութատիրական երկրները կարող էին իրենց բնորոշել իրենց գաղութների հետ ուղղակի հակադրությամբ: Կապ չուներ, որ այդ գաղութները իրենց մեկ խումբ չէին համարում, գաղութատիրոջ ուժն էր, որ նրանց մի խմբի մեջ էր դասում՝ ըստ հարմարության: Այսպիսով, եվրոպացիները բնորոշում էին իրենց որպես ռացիոնալ, իսկ արևելքը՝ էմոցիոնալ, և քանի որ եվրոպացիները իրենց համարում էին քաղաքակիրթ, մյուսները պետք է լինեին բարբարոս, որպեսզի հակառակ դերն ստանձնեին: Սայիդը գրում է, որ արևմտյան գիտնականները կարևոր դեր են ունեցել արևելքի այս կարծրատիպի ստեղծման մեջ, և որ նրանք օգնել են ստեղծել «արևմտյան ոճը՝ արևելքին տիրապետելու, այն վերակառուցելու և նրա հանդեպ իշխանություն ունենալու համար»: «Եվրոպական մշակույթը», - ավելացրել է նա, «ձեռք է բերել ուժ և ինքնություն՝ իրեն դուրս բերելով արևելքի՝ որպես փոխանորդի և նույնիսկ իրենից ցածր դասվողի դեմ»[19]:

Սայիդի բացահայտումը իր աշխատանքով այն է, որ ցանկացած խումբ իրեն սահմանում է՝ սահմանելով մյուսներին, ովքեր գտնվում են իր խմբից դուրս՝ անկախ նրանից, թե տվյալ խումբը մեծ է, թե՝ փոքր: Խմբի ներսում գտնվողները սահմանում են իրենց որպես ազնվական ու համեմատվում խմբից դուրս գտնվողների հետ, ովքեր պետք է լինեն հակառակը, այսինքն պետք է լինեն ստոր: Ուժն օգտագործվում է խմբերի սահմանումները տարածելու համար:

Բացի էթնիկ կամ մշակութային խմբերից, արդյո՞ք այս նույն երևույթը կիրառվում է այլ տեսակի խմբերի համար:

Իր՝ «Զարգացումը որպես ազատություն» խորագրով գրքում Նոբելյան մրցանակակիր, տնտեսագետ և փիլիսոփա Ամարտյա Սենը հետևյալի մասին է հայտնում կանանց զարգացման վերաբերյալ.

- չնայած զարգացման ծրագրերը մի ժամանակ կենտրոնացած էին կանանց բարեկեցության վրա՝ այժմ նրանք կենտրոնանում են կանանց գործունեության վրա, այսինքն՝ կանանց ինքնուրույն գործելու ունակության վրա,
- ընդլայնված գործունեությունը հակադրվում է կանանց կախվածությանը, և մյուսներից կանանց կախվածությունը նվազեցնում էր նրանց բարեկեցությունը՝ առաջացնելով միջամտության անհրաժեշտություն,
- ապացույցները ցույց են տվել, որ կանայք կարող են նպաստել իրենց բարեկեցությանը, երբ ունեն գործունեություն, ինչպես օրինակ՝ անկախ աշխատանք և եկամուտ, սեփականության իրավունք, գրագիտություն և այլն,
- ընդլայնված գործունեությունը առաջ է քաշում է որոշումներ կայացնելու, ընտրություն անելու կատարելագործված կարողություն, ինչը կնոջն ավելի լավ մայր է դարձնում և օգնում է սահմանափակել ընտանիքի չափը՝ նվազեցնելով բնակչության աճը:[20]

Այսպիսով, իր գրքում Սենը հակադրում է բարեկեցությունը գործունեությանը: Նա նշում է, որ ավանդական մոտեցումը կանանց ինչ-որ բանով ապահովելն է եղել (այսինքն՝ բարեկեցությունը), սակայն նոր մոտեցումը պահանջում է կանանց դերակատարներ դարձնել (այսինքն՝ գործող անձինք): Արդյո՞ք ավանդական զարգացման հեռանկարը, որ կենտրոնացած

[19] Edward Said, *Orientalism*, US, Pantheon Books, 1978:
[20] Amartya Sen, *Development as Freedom*, US, Anchor Books, 1999, 8-րդ գլուխ:

է եղել բարեկեցության և ոչ գործունեության վրա, կանանց՝ որպես ոչ գործունյա դերակատարներ լինելու մասին ընդհանրացում կամ կարծրատիպ է՝ ի հակադրություն տղամարդկանց, ովքեր իրենց են վերապահում գործող անձի դերը:

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Արդյո՞ք զարգացման ավանդական հեռանկարը, որը կենտրոնացած է եղել բարեկեցության և անգործության վրա, իրենից ներկայացնում է կանանց՝ որպես ոչ գործունյա անձանց մասին ընդհանրացում կամ կարծրատիպ՝ ի հակադրություն տղամարդկանց, ովքեր իրենց են վերապահել գործողի դերը:	Այնպես, ինչպես եվրոպական գաղութատիրությունը ներկայացնում է արևելքը որպես էմոցիոնալ և բարբարոս, որպեսզի Եվրոպան կարողանա ներկայացվել հակառակ կերպ՝ ռացիոնալ և քաղաքակիրթ, այնպես էլ մշակույթը սահմանում է տղամարդկանց որպես գործող անձինք և կանանց՝ հակառակը՝ որպես պասիվ, ոչ գործունյա:
2. Եթե տղամարդիկ խմբի ներսից են, իսկ կանայք՝ դրսից, արդյո՞ք կանանց մասին կատակներ անելը և կանանց մասին ստորացուցիչ պատմություններ պատմելը ստեղծում է սոլիդարություն տղամարդկանց շրջանում:	Ինչու՞ կանայք նույնը չեն անում: Դա ուժի՞ հարց է: Հայրիշխանությունը տղամարդկանց հիերարխիա՞ն է կանանց նկատմամբ:
3. Արդյո՞ք տղամարդկանց և կանանց միջև հակադրությունն ինչ-որ չափով ստեղծում է հիերարխիա հասարակության մեջ ընդհանուր առմամբ: Արդյո՞ք այդ հիերարխիան ինչ-որ ճանապարհներով տարածվում է նաև ընտանիքների վրա:	Եթե նույնիսկ ընտանիքը խումբ է, նրա վրա չի՞ անդրադառնում խմբի ինքնությամբ պայմանավորված տղամարդ/կին դինամիկան, որը հիմնված է սեռի և գենդերի վրա: Սեռը տղամարդու և կնոջ միջև անատոմիական կամ կենսաբանական տարբերություն է: Գենդերը վերաբերում է այն տարբեր դերերին կամ վարքագծին, որ հասարակությունն ակնկալում է տարբեր սեռերից:
4. Ինչպե՞ս են կարծրատիպերը՝ անկախ նրանից՝ դրանք կանանց մասին են, թե տղամարդկանց, բաժանում հասարակությունը: Կարծրատիպերը կապվա՞ծ են հիերարխիայի հետ: Հիերարխիան կապվա՞ծ է մրցակցության հետ: Այսպիսի մրցակցությունը վնասու՞մ է համագործակցությունը:	Կարծրատիպերն ընդհանրացումներ են, որոնք օգտագործվում են խմբի ներսից ոմանց օտարելու համար: Օտարումը արտացոլում է հիերարխիան, քանի որ խմբի ներսում գտնվողները համարում են, որ իրենք ավելի լավն են, քան խմբից դուրս գտնվողները: Սա ստեղծում է խմբային մրցակցություն և խոչընդոտում է համագործակցությանը, քանի որ իրականում կա միայն մեկ խումբ՝ հոմոսափիենսը:

Զրույց 04-ի կրկնություն. Փոխադարձություն

Փոխադարձությունը համագործակցությամբ պայմանավորված փոխանակում է յուրաքանչյուր անհատի կամ բոլոր անհատների կատարելագործման համար: Մարդիկ կարող են համագործակցել հանուն երկարաժամկետ վերացական իդեալների, օրինակ՝ ուրիշների երեխաների համար հոգ տանելով կամ անհատական ներդրումներ անելով ընդհանուր առաքելության կամ գործի մեջ: Այսպես որպես մարդ՝ մենք, կարող ենք, ըստ էության, ստեղծել մեր սեփական իրականությունը՝ փոխելով միմյանց հետ շփվելու եղանակը և դրանով իսկ ստեղծելով իրականություն, որը շահավետ է մեզ բոլորիս համար հավասարապես:

- Կրկնության առաջին մասը՝ «Արդարության տեսություն»-ը, արդեն ներկայացվել է, բայց արժի այն այստեղ նորից դիտարկել: Կրկնության այս հատվածի երկրորդ վարժությունը նոր է:

Արդարության տեսություն, 1971, Ջոն Ռաուլս

«Ուտիլիտարիզմն» այն հեռանկարն է, որի համաձայն ամենամեծ օգուտն ամենաշատ մարդկանց համար լինելն է ամենարժեքավորը: Ջոն Ռաուլսը քննադատում է այս մոտեցումը՝ ասելով, որ այն անտեսում է անհատի բաեկեցությունը և թույլ տալիս, որ անհատը տառապի: «Ուտիլիտարիզմի» փոխարեն, ըստ Ռաուլսի, հասարակության բոլոր անհատները կարող են մասնակացել զրույցների՝ սահմանելու, թե ինչն է արդար և որոշել, թե որոնք են արդար հասարակության հիմքում ընկած սկզբունքները: Այն գործընթացի միջոցով, որը Ռաուլսն անվանում է «ռեֆլեկտիվ հավասարակշռություն», անհատները քննում և վերագնահատում են արդարության գաղափարը մինչև հավասարության կամ հավասարակշռության հաստատումը: Այսպիսի հավասակշռությունը կարող է թույլ տալ որոշ անհավասարություն, օրինակ, որ վիրաբույժը ավելի շատ գումար վաստակի մյուս մասնագետներից, քանի դեռ հնարավորությունները բաց լինեն բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են դրանց արժանիքի հիման վրա: Արժանիք նշանակում է, որ բոլոր անհատներն սկսում են ցանկացած մրցակցություն որպես հավասարներ և այնուհետև տարբերակվում են որոշ չափանիշների հիման վրա, որոնք բոլորը գիտեն և ընդունում են: Ռաուլսը գրում է, որ անհատները կարող են անկեղծորեն մասնակցել նման զրույցների, քանի դեռ նրանք ընդունում են որոշակի պայման. այդ պայմանն այն է, որ ազնվությունը և դրան հասնելու համար կանոնները քննարկող անհատները չիմանան, թե ինչ դիրք կամ կարգավիճակ իրենք կունենան այն հասարակության մեջ, որն իրենք ստեղծում են:

Որպես ամփոփում՝ հիմք ընդունելով այն գաղափարը, որ յուրաքանչյուր անհատ, մասնակցելով արդար հասարակության մասին քննարկմանը, չգիտի, թե ինչ կարգավիճակ ինքը կունենան, ապա.

1. յուրաքանչյուր անհատ պետք է ունենա նույն և անփոփոխ պնդումը հավասարության և իրավունքներ մասին, և
2. անհավասարությունները կարող են գոյություն ունենալ քանի դեռ՝

- վերաբերում են դիրքերին, որոնք հասանելի են բոլորին հավասար հնարավորության պայմանների դեպքում (այլ կերպ ասած՝ ցանկացած անհատ կարող է դառնալ բժիշկ, քանի դեռ նա կրթություն է ստանում հասարակության կողմից սահմանված չափանիշների համաձայն բժիշկ դառնալու համար), և

- ամենաշատ օգուտն են բերում հասարակության պակաս ընդունակ անդամներին (այլ կերպ ասած՝ բժիշկներին ավելի շատ վճարելն ավելի շատ տաղանդավոր անհատների է ոգևորում

բժիշկներ դառնալու համար, և սա նպաստավոր է պակաս ընդունակ մարդկանց համար՝ նրանց, ովքեր չեն կարող բժշկություն սովորել և լինել իրենց իսկ բժիշկները):

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Հիշելով Սփոքի տեսանյութը և վերոնշյալ ընթերցանության հիման վրա Սփոքի հեռանկարը ուտիլիստակա՞ն է: Կապիտանի հեռանկարը քննու՞մ է «ուտիլիտարիզմը»՝ ինչպես դա անում է Ռաուլսը:	Այո, Սփոքի «շատերի օգուտը վեր է քչերի օգուտից» արտահայտությունն ուտիլիստական է: Ինչպես Ռաուլսը՝ կապիտանը կասկածի տակ է դնում, թե արդյոք մեծամասնության օգուտը համարժեք է քչերի զոհաբերությանը կամ այս դեպքում մեկի՝ Սփոքի կյանքի կորստին:
2. Քանի՞ կանայք են Սփոքի նման հավատում «գլխավոր ցուցումին»: Քանի՞ կանայք են զոհաբերության գնում հանուն մյուսների: Այս կանայք հաշվի՞ են առնում, թե արդյոք իրենց զոհաբերությունն ավելի մեծ օգուտ է բերում, քան արժենում է:	Լավ մոր և կնոջ սահմանումը մարդն է, ով զոհաբերության է գնում հանուն մյուսների, հատկապես ընտանիքի: Բայց զոհաբերություններ անելով՝ կանայք հարցնու՞մ են, թե արդյոք իրենց զոհաբերության արդյունքում ստացված օգուտն արժի զոհաբերությանը:
3. Եթե գրեինք կանոններ այն հասարակության համար, որի մեջ չէինք իմանա, թե ով կլինեինք մենք, անհատների միջև որքա՞ն հավասարություն կպահանջեինք: Որքա՞ն անհավասարություն կթույլատրեինք:	Եթե չիմանայինք, թե ով կլինենք ապագայում, տրամաբանական կլիներ ապահովել այնքան հավասարություն, որքան հնարավոր է՝ որպես ապագայում մեզ պաշտպանելու լավագույն եղանակ:
4. Ավելի մեծ հավասարություն ապահովելը կստեղծեր ավելի շատ բարեկեցությու՞ն կանանց համար, թե՞ գործունեություն:	Ըստ Ռաուլսի՝ ապագայի տրամաբանող հասարակությունը կապահովեր ավելի մեծ հավասարություն և հավասար հնարավորություն, որպեսզի անհատներն իրենց տարբերակեին արժանիքի հիման վրա: Հավասար հնարավորության երաշխիքների դեպքում բոլոր անհատները, ներառյալ կանայք և փոքրամասնությունները, ավելի շատ գործունեություն կունենային՝ իրենց զարգացնելու հնարավորություն՝ թույլ տալով ստեղծել իրենց իսկ բարեկեցությունը, ինչպես նաև բարիքներ հասարակության համար:

Հարցեր	Զրույցի նպատակներ
5. Երբ մենք սահմանում ենք լավ կնոջը որպես մեկին, ով զոհաբերության է գնում անկախ նրանից, թե արդյոք զոհաբերությունից ստացված օգուտն ավելի արժեքավոր է, քան զոհաբերությունը, մենք թուլացնու՞մ ենք հավասարությունը և խոչընդոտու՞մ գործունեությանը:	Այո: Երբ կանայք ընդունում են, որ իրենք պետք է միշտ զոհաբերեն, նրանք հաշվի չեն առնում, որ իրենք հրաժարվում են իրենց գործունեությունից, և որ եթե փոխարենը նախընտրեին գործունեությունը, կկարողանային ավելի շատ օգուտ տալ, քան իրենց զոհողությամբ է ստեղծվում:

«Star Trek»-ը ֆիլմի վերջում տիեզերանավը, կորցնելով իր ողջ ուժը, ընկնում է երկրի վրա: Եթե ուժը չվերականգնվի, բոլորը կմահանան: Չնայած ռադիացիայի պատճառած որոշ մահացություններին, կապիտանը միացնում է ռադիոակտիվ կամերան, որպեսզի վերականգնի ուժը և փրկի նավն ու անձնակազմը: Երբ ուժը վերականգնվում է, Սփոքը հասկանում է, որ զոհաբերություն է պետք անել:

Նայել տեսանյութը 1:47:00 - 1:51:30
http://fmovies.to/film/star-trek-into-darkness.x9zv/qkxqp3

Հարցեր	Զրույցի նպատակներ
1. Այս հանգամանքները ինչպե՞ս են տարբերակում կապիտանի զոհաբերությունը Սփոքի զոհաբերությունից, որը նա պատրաստվում էր անել առաջին տեսարանում: 2. Հաշվի առնել, թե ինչ զոհաբերություններ եք դուք անում ձեր կյանքում, և արդյոք այդ զոհաբերություններն ավելի օգուտ, քան վնաս են բերում: Եթե դուք չեք կատարել զոհաբերություն, կարողացե՞լ եք ձեզ ավելի զարգացնել և ավելի մեծ օգուտ տալ մյուսներին, քան կտայիք զոհաբերության միջոցով:	Այս դեպքում կապիտանը կմահանար կազմի այլ անդամների հետ միասին, եթե ռիսկի չդիմեր: Այսպիսով մեկի կյանքի գինն արժեր բոլորի կյանքը փրկելու համար: Առաջին տեսարանում կապիտանը չընդունեց, որ Սփոքի կյանքը կորցնելը հավասար էր տեղացիների համար անհայտ մնալու օգուտին:

Զրույց 05-ի կրկնություն. Արժանիք. գործընթաց և չափանիշներ

Ռեսուրսների և կարգավիճակի համար մրցակցելն ստեղծում է հիերարխիա: Հիերարխիան կառուցված է յուրաքանչյուր մակարդակում անհատներին մեկուսացնելու հիման վրա: Երբ մեկուսացնում ենք մյուսներին մեր սեփական շահի համար և առանց հաշվի առնելու, թե ինչ են նրանք արել կամ ինչ չեն արել, դա ուժի կիրառում է և անարդար է: Այս անարդարությունը թուլացնում է անհատների զարգացումը և դրանով ամբողջ հասարակության զարգացումը: Որպես ուժի և մեկուսացման այլընտրանք մարդիկ կարող են ստեղծել արժանիքի վրա հիմնված համակարգ, որը հենված է արդար գործընթացի և արդար չափանիշների վրա: Այսպիսի համակարգի հիմքում թափանցիկությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունն են: Երբ ամեն մեկը գիտի, թե ինչ է իրենից ակնկալվում, բոլորը հավասար են իրենց հնարավորություններում այդ ակնկալիքներն իրականացնելու ճանապարհին: Երբ բոլորը մասնակցում են՝ ստեղծելու և հավանություն տալու այն չափանիշներին և գործընթացին, որով պետք է գնահատվեն, շատ ավելի հավանական է, որ այն լինի արդար: Երբ նրանք, ովքեր արհամարհում կամ ժխտում են այդ չափանիշներն ու գործընթացները, ստիպված լինեն պատասխան տալ կամ պատասխանատվության ենթարկվել իրենց գործողությունների համար, համակարգը կպահպանվի, և նրա նպատակներն էլ իրականության կկոչվեն: Արդարությունը նորմ չէ: Եվ մենք ստեղծում ենք մեր սեփական արդարությունը այս տարբերակներով թե՛ անհատապես, թե՛ հավաքական կերպով՝ որպես հասարակություն:

Հատված ընթերցանության համար՝ **«Տնտեսական ճգնաժամը, պարտքը և մարդու իրավունքների վրա ազդեցությունը»,** Վահան Բուրնազյան

«Տնտեսական ճգնաժամի դերը Հայաստանի պարտքի գոյացման մեջ կարծես թե հստակ է՝ հաշվի առնելով իրադարձությունների ժամանակացույցը. ՀՆԱ-ի անկումը, ընթացիկ հաշվի մնացորդների դեֆիցիտը և բյուջեի դեֆիցիտը՝ պայմանավորված նվազեցված եկամուտներով և սոցիալական ծախսերի ավելացմամբ: Փաստորեն, նման հարցերը քննարկվել են 2015թ. ընդունված Հայաստանի զարգացման ռազմավարությունում, մասամբ՝ որպես նախորդ պլանից հրաժարվելու և նոր ռազմավարություն ընդունելու արդարացում:

Սակայն կուտակված պարտքի առնչությամբ այլ գործոններ ևս դեր են խաղում: Մի աղբյուր կառավարությանը մեղադրում է պարտքի խնդիրը խորացնելու մեջ, քանի որ նա հրաժարվում է թույլատրել արժութային արժեզրկում՝ այդպիսով դարձնելով արտահանումն ավելի ծախսատար և միջազգայնորեն պակաս մրցակցային, ինչը հանգեցնում է ընթացիկ հաշվի անհավասարակշռություններին, ինչն էլ իր հերթին՝ արտաքին պետական փոխառություն վերցնելուն՝ կենտրոնական բանկային պահուստները համալրելու համար[21]: Սա նաև ընկալվում է որպես կոռուպցիոն խնդիր, քանի որ արժեզրկված ազգային արժույթը նպաստավոր է ներկրողների համար, որոնց մեծամասնությունը ոչ պաշտոնական մենաշնորհներ ունեն կոնկրետ ներմուծման տեսակների համար և հայտնի են որպես «օլիգարխներ»[22]: Սակայն պետությունը ներկայացնում է իր քաղաքականությունը որպես տնտեսապես կայունացնող և հակաինֆլյացիոն, և մյուսները կասկածի տակ են դնում, թե արդյոք ավելի էժան ապրանքատեսակները միայնակ կարող են նպաստել արտահանման ավելացմանը:

[21] «PFA Considers the Issuance of the Eurobond by Armenia's Government Irresponsible and Damaging», Policy Forum Armenia, 24 մարտ, 2015, http://www.pf-armenia.org/press-release/pfa-considers-issuance-eurobond-armenias-government-irresponsible-and-damaging; Armenia: Overting Economic Catastrophy, Policy Forum Armenia, հոկտեմբերի 3, 2012, http://www.pf-armenia.org/document/armenia-averting-economic-catastrophe

[22] տե՛ս «PFA Considers the Issuance of the Eurobond by Armenia's Government», PFA Executive Board, 24 մարտ, 2015:

Այնուամենայնիվ, մեկ այլ աղբյուր կասկածի տակ է առնում, թե ինչու պարտքերը շարունակեցին աճել այն չափով, ինչ տնտեսական վերականգնումն սկսվելուց հետո և նշում է այն փաստը, որ կառավարությունը մեծ միջոցներ է վերցրել այն ժամանակ, երբ այն ունեցել է բավարար ռեզերվներ, և միջոցների օգտագործում նախատեսված չի եղել[23]: Այս համատեքստում մտահոգությունը մասնավորապես վերաբերում է կառավարության փոխառությանը Ռուսաստանից և եվրոբոնդերի թողարկմանը (բարենպաստ դրույքաչափերից ավելի պակաս), քանի որ նման միջոցները չունեն որևէ սահմանափակում իրենց օգտագործման վերաբերյալ:[24] 2013թ. կասկածելի դրդապատճառներից ելնելով գաղտնի վերցված փոխառության օրինակ է, երբ Հայաստանը Ռուսաստանին հանձնեց բնական գազի պետական մատակարարման համակարգում իր վերջին բաժինը՝ Ռուսաստանին ունեցած պարտքը չեղյալ համարելու դիմաց, որի մասին ոչ ոք չգիտեր, և որն առաջացել էր, քանի որ Հայաստանը ընտրական շրջանում գազի գինը սուբսիդավորել էր:

Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանն ընդհանրապես չի թաքցրել, որ եթե Հայաստանը չհամաձայներ անդամակցել Մաքսային միությանը և Ռուսաստանին չվաճառեր «ՀայՌուսգազարդի» 20 տոկոսը, ապա ստիպված կլինեին վճարել 2011 թվականից գազի դիմաց Ռուսաստանին կուտակված 300 մլն դոլար պարտքը: Պարզվում է, որ Ռուսաստանն իրոք 2011-ին բարձրացրել է գազի սակագինը, սակայն երկկողմ համաձայնությամբ Հայաստանում այդ մասին պաշտոնապես չի հայտարարվել, քանի որ 2012-2013 թվականներին Հայաստանում կայացել են երեք համապետական ընտրություններ[25]:

Սա պետության կողմից գրավադրման հստակորեն գաղտնի և քաղաքական դրդապատճառից դրդված գործողություն էր:

Այսպիսով, այն, որ տնտեսական ճգնաժամը Հայաստանում պարտքի ծագման հիմնական գործոնն է, վիճելի չէ: Սակայն այն, որ այլընտրանքները հաշվի չեն առնվել, և որ քողարկված ու հնարավոր է կոռուպցիոն դրդապատճառների հետևանքով անհամեմատ ավելացել է արտաքին պետական պարտքը, քան պահանջում էր ճգնաժամը, լրջագույն հարց է, որն արժանի է ավելի մեծ ուսումնասիրության: Առնվազն այն, թե արդյոք պետք է կատարելագործվեն շրջանակները, որպեսզի սահմանափակեն փոխառության հնարավորությունը, հրատապ հարց է…»:

Հարց	Զրույցի նպատակներ
1. Դուք պարտքով գումար կվերցնե՞ք առանց այն օգտագործելու պլանի և այն ժամանակ, երբ դուք խնայողություններ ունենայիք (օրինակ՝ ռեզերվներ):	Ո՞վ է այն դիրքում, որ հարցնի ՀՀ կառավարությանը, թե ինչու է նա այդպես վարվել: Սա թափանցիկությա՞ն հարց է, թե՞ մասնակցության կամ հաշվետվողականության: Այն կարո՞ղ է երեքն իր մեջ պարունակող հարց լինել, ինչպե՞ս:

[23] Artak Kyurumyan, «Political Decisions about Public Debt Management in Armenia in Recent Years and Their Consequences», Երևան, մայիս 2014, էջ 25, http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/Political-Decisions-about-Public-Debt-Management-in-Armenia-in-Recent-Years-and-Their-Consequences.pdf

[24] Արտակ Քյուրումյան, հարցազրույց, ապրիլի 19, 2015:

[25] «Gas Politics: Russia tightens grip on Armenian energy sector with new Gazprom acquisition», ArmeniaNow.com, 05.12.2013, http://www.armenianow.com/news/50653/ armenia_russia_gas_price_gazprom

Հարց	Զրույցի նպատակներ
2. Ինչու՞ էր Հայաստանը Ռուսաստանին պարտք $300 միլիոն բնական գազի դիմաց:	Ռուսատանը բարձրացրել էր բնական գազի գինը, և Հայաստանի Հանրապետությունը գնի տարբերությանը համարժեք գումարը որպես պարտք էր վերցրել, որպեսզի Հանրապետական կուսակությունը կարողանա գնի բարձրացումը գաղտնի պահել ընտրությունների ընթացքում: Ո՞վ շահեց: Ո՞վ կորցրեց: Ինչու՞ էր պարտքը վերագրվում պետությանը և ոչ Հանրապետական կուսակցությանը:
3. Գաղտնի պարտքը արդարացի՞ էր, թե՞ ոչ: Գաղտնի պարտքն ուժի կիրառու՞մ էր, թե՞ արժանիքի վրա հիմնված գործընթացի արդյունք:	Գաղտնի պարտքն ընտրությունների ընթացքում օգուտ բերեց Հանրապետական կուսակցությանը Հայաստանի Հանրապետության հաշվին, այսպիսով արդարացի չէր: Որոշումն ուժի կիրառման դրսևորում էր, որովհետև չկար որևէ գործընթաց՝ ուսումնասիրելու, թե արդյոք և ինչու որոշումն արժեք ունի կամ լավ էր պետության համար կամ մարդկանց համար: Իր բնույթով գաղտնիությունը ոչնչացնում է թափանցիկությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունը, այսպիսով այն ոչնչացնում է գործընթացը:
4. Գաղտնի պարտքի օրինակից ելնելով՝ ինչու՞ է թափանցիկությունը կարևոր: Ինչու՞ են ընտրությունները կարևոր: Ընտրությունները միավորու՞մ են թափանցիկությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունը, ինչպե՞ս: Ինչպե՞ս է սա անդրադառնում ձեր կյանքի վրա:	Գաղտնի պարտքի օրինակում Հանրապետական կուսակցությունն օգուտ ստացավ և փոխանցեց պարտքը պետությանը և ժողովրդին: Թափանցիկությունը գաղտնիության հակառակն է: Մենք չպե՞տք է տեղեկացվենք այն որոշումների մասին, որոնք ազդում են մեր կյանքի վրա: Ընտրությունները պահանջում են թափանցիկություն նրա վերաբերյալ, թե ինչ են քաղաքական կուսակցությունները պլանավորում անել և ինչ են արել, որպեսզի մենք կարողանանք մասնակցություն ունենալ՝ քաղաքական կուսակցությունների միջև ընտրություն անելով, և որպեսզի մեր ընտրությունը քաղաքական կուսակցություններին հաշվետու պահի նրա համար, թե ինչ են նրանք արել անցյալում:

Հարց	Զրույցի նպատակներ
5. Նույնիսկ եթե ֆինանսական ճգնաժամն ստիպել է, որ Հայաստանը պարտք ունենա, Հայաստանի պարտքն ավելին է, քան պետք է լինի: Ո՞վ է շահել: Ո՞վ պետք է վճարի պարտքը: Ինչպե՞ս կարելի է խուսափել հետագա անտեղի պարտքից:	Պարտքի վերաբերյալ ՄԱԿ-ի ուղեցույցներն առաջարկում են, որ լինի հատուկ ծրագիր կամ պատճառ որևէ պարտք վերցնելու համար, որ շահագրգիռ կողմերը տեղյակ լինեն որոշումներից և մասնակցեն որոշումներ կայացնելու մեջ, որ պարտքը վերցվի այն ռազմավարության հիման վրա, թե ինչպես է այն հետ վճարվելու, և որ պարտքի ռազմավարությունը լինի հանրային տեղեկատվություն և քննարկվի Ազգային ժողովում: Պարտքի վերաբերյալ որոշումների մանրամասն ընթացակարգերը կստեղծեն արժանիքի վրա հիմնված գործընթաց որոշում կայացնելու համար:

<u>Զրույց 06-ի կրկնություն</u>. Վստահություն՝ սոցիալական կապիտալ

Վստահությունը հիմնված է փոխադարձության և համագործակցության վրա: Վստահությունը հիմնված է հավասարության և արժանապատվության վրա: Մյուսների հետ մեր շփումներում մենք կա՛մ փոքրացնում, կա՛մ մեծացնում ենք վստահության մակարդակը, ինչպես նաև հավասարության ու արժանապատվության մակարդակը, որ կա միմյանց միջև անձնական հարաբերությունների մակարդակով, ինչպես նաև մեր ամբողջ հասարակության մակարդակով:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Հոդված 1

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում միջազգային հանրությունն ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ): Հոդված 1-ը նշում է.

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով»:
Զարգացման զրույցի ձեր անցած նյութերի հիման վրա, դիտարկել հետևյալ հարցերը:

Հարց	Զրույցի նպատակներ
1. Ո՞րն է Հոդված 1-ի նախադրյալը: 2. Երբ նորածինը ծնվում է, նա իր արժանապատվությամբ հավասա՞ր է բոլոր մյուս նորածիններին՝ պարզապես ելնելով նրանից, որ նորածինը մարդ է:	
3. Ազնվությունը և արդարությունը պահանջում են, որ բոլոր անհատները՝ անկախ տարիքից և հարստությունից,	

Հարց	Զրույցի նպատակներ
հավասա՞ր լինեն իրենց արժանապատվությամբ:	
4. Ի՞նչ է նշանակում գործել «մեկը մյուսի հանդեպ եղբայրական ոգով»: Դա կապ ունի՞ արժանապատվության հետ: Դա կապ ունի՞ հավասարության հետ: Ինչպե՞ս:	Այլ կերպ ասած՝ «մեկը մյուսի հանդեպ եղբայրական ոգով» գործելը կապ ունի՞ փոխադարձության, համագործակցության և սոցիալական կապիտալի հետ: Ինչպե՞ս: Դուք կարո՞ղ եք օրինակներ բերել:
5. Տրամաբանակա՞ն է, որ մենք «գործում ենք մեկը մյուսի հանդեպ եղբայրական ոգով»: Սա առաջ կբերի՞ ազնվություն մեկս մյուսի հանդեպ:	Ո՞րն է արդարության և հավասարության միջև կապը:
6. Եթե մարդիկ իրենք են իրենց համար ստեղծում արդարություն, փոխադարձություն, համագործակցություն և ինքնագործունեություն, ո՞րը պետք է լինի իշխանությունների դերը, եթե այն ընդհանրապես պետք է դեր ունենա:	Պետական իշխանությունները ուզու՞մ են, որ անհատները և համայնքները լինեն ինքնուրույն: Ինչու՞ այո կամ ոչ:
7. Հոդված 1-ի նախադրյալը արժևորու՞մ է անհատին: Ի՞նչ ճանապարհներով:	Հոդված 1-ի նախադրյալը սատարու՞մ է անհատի զարգացմանը: Հոդված 1-ի նախադրյալը նաև սատարու՞մ է հասարակության զարգացմանը: Ինչպե՞ս:
8. Ի՞նչ դեր ունեն մարդու իրավունքները մեր հասարակությունում վստահության ամրապնդման և փոխադարձության ու համագործակցության խրախուսման հարցերում:	

Շնորհակալություն այս գործընթացին ձեր մասնակցության համար: Հուսամ՝ զրույցները ձեզ հետաքրքիր էին: Այժմ, երբ ավարտել եք քննարկումները, հուսանք, որ կցանկանաք ձեր փորձը կիսել մյուսների հետ: Ցանկալի է, որ նոր խումբ ստեղծեք և զրույցներով կիսվեք նրանց հետ, ովքեր ըստ ձեզ կգնահատեն այս գործընթացը և կշահեն դրանից: Այլապես կարելի է շարունակել աշխատել նույն խմբով՝ համագործակցության, փոխադարձության, վստահության, հավասարության և արժանապատվության վերաբերյալ այնպիսի հարցեր ուղղելով, որոնք տեսնում եք ձեր միջավայրում՝ ձեր շենքում, դպրոցում կամ համալսարանում, աշխատավայրում, շրջապատում, գյուղում կամ քաղաքում կամ նույնիսկ ընտանիքում: Մեկ շաբաթ վերցրեք այս մասին մտածելու համար: Այնուհետև նորից հանդիպեք և տեսեք, թե ինչ պետք է անեք ձեր և ձեզ շրջապատողների կյանքն ավելի լավը դարձնելու համար… որովհետև մեր կյանքն ավելի լավը դարձնելը միակ ռեալ բանն է, որ մենք կարող ենք:

Այս զրույցի նյութերը մշակման փուլում են, և դուք կարող եք կիսվել մեկնաբանություններով,

հարցերով կամ մտահոգություններով՝ գրելով bournazian@gmail.com էլէկտրոնային հասցեով:



Վահան Բուրնազյանը ծնվել և կրթություն է ստացել Քալիֆորնիայում, որտեղ աշխատել է որպես ներգաղթյալների պաշտպանության հարցերով փաստաբան: Նա հայրենադարձվել է Հայաստան 2004 թվականին և դասավանդել է իրավաբանություն ու մարդու իրավունքներ Հայաստանի մի շարք համալսարաններում: Վահան Բուրնազյանն այժմ իր գիտահետազոտական գործունեությունը ծավալում է մարդու իրավունքների ոլորտում, հեղինակել է մի շարք տեսական և գործնական աշխատանքներ:

Ըստ էության՝ ցանկացած հասարակություն փոխազդող անհատների հավաքական է, հետևաբար զարգացած հասարակությունը զարգացած անհատների համախումբ է: Սույն ուղեցույցը փորձում է օգնել անհատներին զարգացնելու իրենց՝ դրանով իսկ զարգացնելով հասարակությունն ընդհանուր առմամբ: Ուղեցույցում քննարկման հարցերը նախատեսված են փոքր խմբերի համար, ինչն օգնում է անհատներին հասնելու իրենց և իրենց շրջապատող աշխարհի մասին նոր գիտակցման: